

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ


Հրապարակ ելաւ 2. վահան Յովհաննէսեանի կրթական, քարոյական եւ հայրեմաշումչ պատմը-ւածքներու շարքը. հայ տուններուն զարգմ է, մա-նուկներու երջանկութիւնը՝ իրենց հետաքրքրական բովանդակութեամբ:

Ամէն սրտի յարմար հատորներ.

- 1.- ԱՆԻԷՆ ՔԱՐ ՄԸ ԲԵՐ
- 2.- ԱՐԳԻՆԱՅԻ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ
- 3.- ՍՄԲԱՏԻ ԳԱՆՁԵՐԸ
- 4.- ՇԵՄԳՈՐԻ ԱՓԻՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆԸ
- 5.- ԳԱՅԻԱՆԷԻ ՎՐԷԺԸ
- 6.- ԼԵՌՆԵՐՈՒ ԵՐԳԸ
- 7.- ԲԱԿԻՆ ՊԶՏԻԿԸ
- 8.- ԼԵԶՈՒՆ ՈՐ ԿԸ ՄԵՌՆԻ
- 9.- ՓՈՔՐԻԿ ՍԱՍՈՒՆՅԻՆ
(Շարունակելի)

2. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ


ԲԱԿԻՆ ՊԶՏԻԿԸ



Հայրենիքի

Զանգները

7



ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

ԹԻԻ 7

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԲԱԿԻՆ ՊԶՏԻԿԸ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

ՀԱՅԿԱՆ

Սեղոյ մօրը ձեռքէն բռնած, ուտոստելով կը քալէր Անաստուրիի քարուտ եւ վայրի ճամբաներէն: Իրենց առջեւէն եւ չորս կողմերէն ուրիշ ճամբորդներ ալ կային: Ո՞ւր կ'երթային, ինչո՞ւ կ'երթային. ոչ ոք գիտէր. բայց կը քայլէին, գիշեր ցերեկ կը քայլէին, կ'անցնէին գիւղեր, հիւղեր եւ լեռներ. հաջող շուները կը վտարէին, մարած օճախներու առջեւէն կ'անցնէին: Երբեմն հողին մէջ թաղուած, ցեխոտ եւ աղբոտ գիւղի մը կը հանդիպէին, բերաննին լաթով կապուած կիներ կային, կը նայէին այդ անբախտ ճամբորդներուն, կը նայէին չէին խօսիր. չէին շարժիր: Երկար եւ անվերջանալի ճանապարհին վրայ կորաքամակ կիներ կը քալէին, ոմանք մանչուկ մը կամ աղջնակ մը ձեռքերնին բռնած. առանձին, անխօս, կարմիր կամ սպիտակ, սեւ բիծեր կանաչին մէջ կը քայլէին. կենալը մահ էր, ետ նայիլ աղի արձան կը դարձնէր: Կարծես թէ աշխարհ մը կը պարպուէր իր բնակիչներէն, առանց նպատակի, առանց լքուած տուներուն նայելու: Սեւ, կարմիր կամ ճերմակ բիծեր կը քայլէին դէպի հարաւ, առանց երամի, մէկը միւսէն բաժնուած, մէկը միւսին անծանօթ, միայն նոյն ցաւով իրար կապուած:

Սեղոյ մօրը ձեռքէն բռնած կը քալէր, քաշկուտուկ-
լով առաջ կ'երթար, երբեմն կը ձգէր հէգ մօրը չոր-
ցած բազուկը եւ կը նստէր քարի մը վրայ, կը նայէր
սարերուն, գիւղերուն. անոնք Կիւրիինի չէին նմանիր:

— Մայրիկ, տուն վերադառնանք, կ'ըսէր լալով.
Ես տուն կ'ուզեմ երթալ, այս աշխարհը չեմ սիրեր:

— Հա, տղաս, քիչ մնաց, այդ բլրան միւս կողմը
մեծ քաղաք մը կայ, Հալէպ կը կոչուի. հոն աղուոր
տուներ կան, բարի մարդիկ կան, թերեւս Աստուած
կայ. հոս չէ, չէ դաւակա. հոս Աստուած չկայ... եր-
թանք:

— Մայրիկ, ես տուն կ'ուզեմ երթալ, կը կրկնէր
մանչուկը, ինչ ընեմ ուրիշին աղուոր քաղաքը. տուն
վերադառնանք:

Ու կը քաշէր հէգ մօրը պատառտուն քղանցքէն:

— Ոչ, ոչ Սեղոյ, հոն լաւ մարդ չկայ. հոն հիմա
տուն ալ չկայ. կրակ ինկաւ. ամէն բան այրեցաւ:

Սեղոյ դարձեալ բռնեց մօրը ձեռքը. ախ այդ ձեռ-
քը վերաւոր էր, չորցած էր ծառի ճիւղի պէս. կայինի
հարուած մ'առած էր, եթէ թշուառ կնոջ մարմինէն չէր
բաժնուած, մեռած ցաւ մը հետը տանելու համար էր:
Կնոջ միւս ձեռքը շալակին կապոցը բռնած էր, մէկ
մայր երկու բեռ: Անցան շատ ցորեկներ, շատ գիշեր-
ներ, դաշտերէն խոտ կամ այգիներէն փտած պտուղ-
ներ պէտք էին գտնել սովամահ չմեռնելու համար: Իսկ
հաց... Աստուած թող տայ... պիտի ըսէր անդուժ գիւ-
ղացին: Աշխարհիս բոլոր ցորենները չորցեր ցամքեր
էին. բոլոր ամբարները դատարկ էին, բոլոր թոնիրնե-
րը մարեր էին չար մարդերու սրտերուն նման: Մանու-
կը հաց կ'ուզէր. հաց ո՞վ պիտի տար. Կիւրիինը չէր,
ուր Սեղոյին հայրը գերանդին առած գարնէր ոսկի

հասկերուն եւ ոտքերուն տակ քիստեր իյնային, ափե-
րուն մէջ ցորենն հաւաքուէր, յետոյ պզտիկին մայրը
ճերմակ հաց թխէր: Հաց կը պաղատէր մանուկը. ախ
այդ երկնային պարզեւր կարծես աշխարհէս վերցած էր
եւ խեղճ Սեղոյ կամ խոտ կամ փտած պտուղներ պիտի
կրճէր իր հոգին պահելու համար. եւ Սեղոյ Կիւրիին
ճերմակ հացը կ'ուզէր:

— Քիչ մնաց հողիս, կը յորդորէր մայրը. ահա այս
լեռն ալ անցնինք՝ Հալէպ քաղաքն է. հոն ճերմակ հաց
կայ, բարի մարդիկ կան ու թերեւս Աստուած կայ...:

Տղան աչքերը խոշոր խոշոր բացած մտիկ կ'ընէր,
կարծես ոսկի երազներ կը տեսնէր. մօր ձեռքն իրեն
կ'երկարէր կարագով հացը տալու: Բայց լեռները չէին
վերջանար, ճանապարհը չէր հատներ եւ Սեղոյ յոգ-
նած ու անօթի էր: Անցան լքուած այգիի մը քովէն,
քանի մը սեւ սալոր գտաւ մայրը, տղուն տուաւ, իր
սիրտն ալ կու տար մէկ հատիկը, աշխարհիս մէջ, իր
մէկ հատիկը սովէն ու մահէն ազատելու համար: Հինգ
գաւակներ եւ ամուսին մը կորսնցուցած էր: Սեղոն
մնացեր էր, մէկ հատիկ աշխարհիս վրայ, եւ Սեղոն
անօթի, յոգնած էր, ճերմակ հաց կ'ուզէր: Կիւրիին
կ'ուզէր վերադառնալ եւ Կիւրիին այրած մոխիր էր:

1915ի Յուլիս ամիսն էր: Անապատի կիզիչ հովը
ծառերուն խարշափ կու տար. բլուրներուն վրայէն
կ'անցնէր, հովիտներուն մէջ կը տարածուէր եւ խօլ
արչաւանք մը սկսած էր դէպի հիւսիս, դէպի Անատոլի
փչել: Հիմա ջուրն ալ դժուար էր ճարել. Ալիս գետը
չկար որ շառաչելով գար ու զովացնէր պապակ շերթ-
ները, չար ու բարի մարդերուն ջուր տար:

— Նայէ, Սեղոյ, հեռուն կը տեսնե՞ս, բլրան մը
վրայէն մայրը ցոյց տուաւ հորիզոնը. կը տեսնե՞ս այն

ճերմակ տուները, այն կարմիր աշտարակները, Հալէպն է սիրելիս:

Տղան ի՞նչ ընէր Հալէպը, հոն ո՞վ ունէր, ո՞վ իրեն կը սպասէր, ինքը Կիւրին կ'ուզէր վերադառնալ, կարագով հաց կ'ուզէր:

— Մամա, տուն վերադառնանք, աղաչեց լալով: Եւ մտան Հալէպ:

Մանչուկն աչքերը խոշոր բացած դիտեց պալատները, կարծեց թէ լայն դուռ մը պիտի բացուէր զիրենք ներս առնելու եւ կարագով հաց տալու: Մայր ու որդի մոլորած չըջեցան փողոցէ փողոց: Ամէն մէկ անկիւնի մէջ կին մը, կապոց մը, տղեկ մը, բեռնամբարձ էջ մը կեցած էին, մէկը միւսին վրայէն կոխելով կ'անցնէր. խառնիճազանճ մը, մարդկային մնացորդներ, անտէր, անանուն, լքուած էակներ, եկած եւ դիզուած էին, կարծես թէ հեղեղ մը զիրենք քշած էր, ծառ ու տերեւ, քար եւ տիղմ, մարդկային թիրտը թափած էր այդ հրնադարեան քաղաքին մէջ: Նեխածի հոտ կու գար, գետին թափած կանաչեղէն, ուղտի միս կախուած խանութներէն, ճանճերով լի, երկար իւզոտ եւ գարշաբոյր: Հոն ամէն բան կար, կարմիր պղպեղ, թուրչի եւ մածուն կը ծախէին: Սեղոյ պատառ մը միս կ'ուզէր ուտել, բայց ճենճերոտ էր, իրենց փափուկ հաւերուն միսը չէր. սիրտը պիտի խառնուէր. դլուխն անդին դարձուց.

— Մայրիկ, տուն վերադառնանք, ըսաւ աղաչական:

Բայց մայրը, հէզ Սրբուհին, տեղ մը կը փնտռէր իր ոտքերն երկարելու, որ Սեղոն գլուխը ծունկերուն դնէր եւ քնանար, միշտ քնանար, այնքան օրեր, որքան կտրած էր Անատոլիի երկար եւ տաժանելի ճամբան:

— Մամա, անօթի եմ, պաղատագին կրկնեց պըղտիկը:

Մայրը գետնի վրայ կաղամբի տերեւ մը գտաւ, վերցուց եւ պղտիկին տուաւ. Սեղոյ մէկ ձեռքով անդին հրեց: Հալէպ հասան, ինքը կարագով հաց կ'ուզէր. ինչ ընէր այդ անհամ կաղամբը. եւ աշխարհի ցոբեննոցները պարպուեր էին իրենց համար:

— Քիչիկ մ'ալ համբերէ, հոգիս, լաւ տեղ մը պիտի երթանք. հոն հաց ալ պիտի ունենանք:

Մայրը սուտ կը խօսէր, ինքն ալ չէր գիտեր ուր երթալ, որո՞ւ դուռը գարնել, աշխարհիս դռներն իրենց առջեւ գոց էին, մարդիկ հիմա սիրտ չունէին. դէթ իրենց համար բարի սիրտ մը չկար: Մտան լայն փողոց մը «Թիլէլ» կը կոչուէր. խանութներու եւ տուներու վրայ ծուռ եւ անհասկնալի դիրերով անուններ կային. մայրը չէր կրնար կարդալ. հնդամեայ Սեղոն իր այրբենարանին մէջ չէր տեսած այդպիսի տարօրինակ դիրեր: Քիչ մ'ալ առաջ գացին. ահա բաց դուռ մը, ցած եւ մաշած կողերով, բարաւորին վրայ հայերէն գըրուած էր:

— Կեցիր, մայրիկ, գոչեց Սեղոյ եւ գիր կապելով կարդաց Հայ...ոց... Հո...գե...տուն:

Ներս մտան. փոքրիկ բակ մը կար, խճողուած էր իրենց պէս դաղթական թշուառներով: Ա՛խ, դէթ ասեղ ձգելու տեղ մը գտնէին. գետինը հողին վրայ եւ Սըրբուհի հոն նստէր, ոտքերն երկարէր, որ Սեղոն գլուխն իր ծունկերուն դրած քնանար. մոռնար հացն ու կարագը, մոռնար չար աշխարհը եւ ոսկի երազներով ուրախանար: Բայց տեղ չկար. թքնէիր գետին չէր իյնար. վայնասուն մը կար, մանուկներու լաց, մայրերու անէծք: Սեղոն ալ լացաւ. տխուր համբոյք մը բարձրա-

ցաւ. նման աշնանային թափող տերեւներու. կու լային բոլոր մանուկները, աղջիկ ու մանչ, հալածական ցեղի մը ողբն էր. անմեղութեան բողբոջը. խոցուած արդարութեան սրբացած ձայնը:

— Մամա, Կիւրին վերադառնանք, լալով կրկին աղաչեց Սեղոյ:

Հոն տարեց մէկը կար. կարծես թէ մէկը կը փընտէր. լսեց մանուկին ձայնը.

— Տիկին, դուք Կիւրինցի՞ էք, հարցուց Սուրբիկին:

— Այո՛, Կիւրինցի Յակոբ Արեւեանին տիկինն եմ:

— Զիս չե՞ս ճանչնար:

Սուրբիկ ուաչդրութեամբ նայեցաւ մարդուն, ո՛չ անունը, ո՛չ կերպարանքը միտքն եկան:

— Ես ինքզինքս չեմ ճանչնար, քեզ ի՞նչպէս ճանչնամ, պատասխանեց կինը:

— Ուրեմն այդ շէն տունն ալ փակեցին ոճրագործները: Ես Կիւրինի նախրեպանն եմ, Միսաքը, չե՞ս յիշեր: Ելի՛ր հետս եկուր, ըսաւ զթոտ ձայնով:

Անցան օձապտոյտ ճամբաներէ, կամար կամարի կը յաջորդէր, «Սալիպէ» (Ուաչ) կը կոչուէր, այդ թաղին մէջ քրիստոնեաներուն ժամերը կային. պատերուն վրայ, ճաղերուն վրայ զանգակատուններուն վրայ խաչեր կային, ինչպէս Կիւրինի եկեղեցին ունէր:

Հասան փուռի մը առջեւ, թարմ հացին բոյրը ճամբան բռնած էր. Սեղոյ զգաց այդ բոյրը, ձգեց մօրը ձեռքը եւ վազեց փուռը մտաւ, պատառ մը հաց վերցուց քթոցին մէջէն, բերանը տարաւ, փոսպանը վազեց, խրեց փոքրիկին բերնի պատառը, նստուկին կից մը տուաւ եւ ախանջէն քաշելով դուրս վտարեց.

— Գող հայ լակոտ, դոռաց ետեւէն:

Զեմ գիտեր թէ մահմետակա՞ն էր, քրիստոնեա՞յ էր, բայց Սեղոյին սարսափ ազդեց:

— Մամա, Կիւրին վերադառնանք. հոս բարի մարդ չկայ. Աստուած չկայ:

Հէզ մայրն ի՞նչ ծախէր պատառ մը ճերմակ հաց գնելու համար: Ո՞վ կը դնէր իր ջուլերը, ո՞վ խիղճ ունէր խեղճ ազուն անօթութեան:

Յանցապատ դռնէ մը ներս մտաւ Կիւրինցի Միսաքը. փոշեպատ հրապարակ մը կար, չորս կողմը թիթեղէ տուներ շարուած, մէջքերնին կտորած պառաւներ, ծուռ ստուերի պէս կը քալէին հրապարակին վրայ, ամէն մէկն իր տնակն ունէր, մաշած սեմով, ժանդոտած թիթեղով ծածկուած, յատակը հող էր, կողերուն վրայ խոշոր ծակեր կային: Մէկ հատ պարսալ էր, դուռը բաց. երկու օր առաջ մեռել մը ելած էր, սրացաւ կին մը, ո՞վ գիտէ որ օձախին քովէն բաժնուած. հիմա այդ տնակը Սեղոյին եւ Սուրբիկին համար էր: Տղան դռնէն ներս նայեցաւ յետոյ մօրը թեւէն քաշեց.

— Մամա, Կիւրին երթանք, այս տունը լաւ չէ, մեր հաւնոցին պէս է:

— Օր մը պիտի երթանք Սեղոյ. հիմա ներս մըտնենք, հանգչինք: Հաց ալ պիտի ունենաս:

Միսաք իր ձեռքով տեղաւորեց Սեղոն ու մայրը: Յատակին վրայ ինչ փոէր որ փոքրիկն հանգչէր. մայրը բացաւ իր կապոցը. գլխու թաշկինակ մը կար, երես-սրբիչ մը. գոյգ մը գուլպայ, իր մէկ զրեատը, մաշած կապերտ մը: Փռեց կապերտը նստաւ վրան, տըղուն գլուխը ծունկերուն վրայ առաւ. բայց Սեղոյ չէր քնանար. հաց կ'ուզէր: Միսաք, ինքն ալ աղքատ էր, դործ չէր կրնար գտնել, նայեցաւ իր մաշած զրեատին զրպանները, զուրուշ մը մատներուն հանդիպեցաւ: Իս-

կոյն դուրս ելաւ ճամբարէն (քէմբ) եւ դնաց այն ան-
դութ փռապանին, քանի մը գէշ խօսքեր ըսաւ եւ նետեց
դուրուչն առջեւն ու հացի շերտ մ'առաւ:

Սեղոյ անյազօրէն կերաւ, սեւ հաց էր, բայց կա-
ղամբի տերեւ կամ փտած պտուղ չէր: Յետոյ մայր եւ
որդի քնացան, դուռը բաց էր, ինչ վախ ունէին, ո՞վ
իրենց աղտոտ լաթերուն աչք-կը տնկէր: Երկար քնա-
ցան, թերեւս մէկ երկու արեւ եկան ու անցան, իրենք
ալ չ'անդրադարձան, ժամանակի դադափար չունէին.
Կիւրինի արեւը չէր որ տան պատին զարնուէր եւ կէս
օր կամ երեկոյ ըլլալը ցոյց տար:

Յանկարծ բակին մէջ աղմուկ լսեցին եւ երկուքը
մէկէն վեր ցատկեցին. թիթեղէ պնակներու ձայն էր,
կիներու կանչ, մանուկներու հրճտուք. ի՞նչ կար. ին-
չո՞ւ կը պոռային: Սրբուհի տնակէն դուրս ելաւ:

— Մամի, ի՞նչ կայ, հարցուց պառաւի մը որ մըր-
մըրթալով իր տնակը կը դառնար:

— Ապուրս թափեցին աներեսները, պատասխանեց
բարկացած: Ինչո՞ւ կեցեր ես, դնա՛ դուն ալ տղուդ եւ
քեզի համար ապուր եւ հաց առ:

Բայց Սրբուհի պնակ չունէր. մարդ չէր ճանչնար.
ո՞վ իրեն պնակ պիտի տար, ի՞նչպէս ափին մէջ առնէր
այդ հեղուկը, մէջը կաղամբի տերեւ եւ քիչ մը ուզտի
ճարպ որ կը պլլար մարած աչքերու նման:

Երբ տղուն հետ մօտեցաւ կերակուրի բաժանման
տեղը, երիտասարդ կին մը իրեն նայեցաւ. Սրբուհի ա-
մէնէն ետեւը կայնած էր, շլմորած կը նայէր. կիներն
իրար կը հրէին եւ պնակ մը ապուր, հացի կտոր մ'ա-
ռած քրքիջով կը հեռանային: Երիտասարդ կինը կան-
չեց Սրբուհին.

— Տիկին, մօտեցէք որ ձեզի ալ ապուր տամ: Բայց

դուք պնակ չունիք: Շուշան, պոռաց ուրիշ կնոջ մը.
երկու թիթեղէ պնակ տուր այս կնոջ:

Սեղոյ պզտիկ էր, նա կիներուն փէշերուն տակէն
անցնելով հասաւ մինչեւ կաթսան, մատը անոր շըր-
թունքին դրաւ ու լիզեց: Մանչուկը, թէպէտ պատա-
ռտուն հագուստներ ունէր, բայց կաթի շիթի պէս սի-
րուն էր, մաշած վարդ էր, աչքերն յոգնած աստղերու
նման:

Երիտասարդ կինը շոյեց պզտիկին դուլիսը, կար-
ծես անոր մէջ սիրելի դէմք մը տեսաւ. շատ կը նմա-
նէր իր փոքրիկ Վանիկին, իր սրտի ծաղիկին որ ճամ-
բաներուն վրայ մնաց. քարի մը տակ, Մայիսի առա-
ւօտ մը:

— Մամա, կանչեց Սեղոյ, եկուր մեզի ալ պիտի
տան:

Երիտասարդ կինը առատօրէն լեցուց Սեղոյի եւ
մօր պնակները. հացի խոշոր շերտ մը տուաւ: Տղան մէկ
ձեռքով հացը թխեց ապուրին մէջ եւ ամբողջ ձեռքով
բերանը տարաւ, իւզի կաթիլները շրթներէն վար հո-
սեցան, սրբեց ձեռքով ու դարձեալ բերանը տարաւ:

— Գեռ կ'ուզե՞ս, պզտիկ, հարցուց երիտասարդ
կինը:

— Այո՛, բայց մամայիս ալ տուէք. ինքն ալ շատ
անօթի է:

— Անունդ ի՞նչ է:

— Սեղոյ է:

— Ո՛րքան Վանիկիս կը նմանի, ըսաւ կինն աչքերը
սրբելով:

Կէս օրէն վերջ երիտասարդ կինը Սեղոյին հիւզակն
եկաւ, մանչուկը աւել մը ճարած էր եւ տան առջեւը
կ'աւլէր: Հիւզակը մաքուր կերպարանք առած էր, կա-

պերտը դետին փռուած, սարդոստայներ վար առնուած, մաքուր աղքատութիւն մը կար: Պզտիկն հիմա կը ժըպտէր. ա՛լ հաց չէր ուզեր. կարծես թիթեռնիկ դարձած էր. նա աւելց քովի հիւղակին առջեւը, պառաւ կին մը կը բնակէր հոն, մէջքի ցաւ ունէր եւ չէր կրնար ծօխլ, աւել վերցնել:

Երիտասարդ կինը հաճոյքով ներս մտաւ:

— Ծնորհակալ եմ տիկին, ըսաւ Սրբուհի, զաւակս ամբողջ ճամբու երկայնքին հաց կ'ուզէր. Աստուած ձեզ զրկեց. հիմա կշտացած է. ուրախ է. մէկ հատիկ է: Վեց զաւակներ ունէի. մէկ հատիկ մնաց. ճամբան մէկիկ մէկիկ հողին յանձնեցի. չեմ գիտեր ո՞ր հողին, ո՞ր անձանօթ հողին. ա՛լ հող չմնաց մեր մեռելները թաղելու: Ծամբան տղուս կ'ըսէի թէ Հալէպին մէջ բարի մարդիկ կան, Աստուած կայ, չէր հաւատար եւ դուք եկաք իմ դէմս. հրեշտակի պէս եկաք: Ա՛խ, այս թեսս, կացինով զարկին եւ իբրեւ ցաւի յիշատակ հետս կը տանիմ:

— Դուն զիս կը ճանչնա՞ս, հարցուց կինը. Փրքնիկցի եմ, քիչ մը հեռու էինք Կիւրիինէն, ես իմ ցաւերս չեմ պատմեր. հոս կը տեսնե՞ս այդ կեանքի խլեակները, բոլորն ալ մէկ մէկ ցաւազին վէպ ունին, հոգի բեր որ զիմանայ, սիրտ բեր որ հազար կտոր չըլլայ:

Սեղոյ շատ ընտանեբար կնոջ քովը գնաց, բռնեց ա՛նոր ձեռքերէն եւ չրթներուն տարաւ.

— Վաղն ալ ինձի եւ մամայիս հաց եւ սպուր կու տա՞ս, հարցուց տղայաբար:

— Կու տամ, զաւակս. կու տամ, Վանիկս, ամէն օր կու տամ:

— Բայց ես Սեղոյ կը կոչուիմ, Վանիկ չեմ:

— Ինչ համար Վանիկ ես:

Կինն հանեց իր զրպանէն երկու շաքարեղէն եւ տըղուն տուաւ: Սեղոյ նայեցաւ շաքարեղէնին, նայեցաւ կնոջ եւ հատ մը իր մօրը տուաւ:

— Առանց մայրիկի չեմ կրնար ուտել, ըսաւ:

— Ա՛խ, իմ Վանիկս ալ այսպէս էր. առանց ինձի կաթիլ մը մեղր բերանը չէր դնէր: Իմ անունս Երանուհի է. Դանիէլ Չպուքքեարեանը կը ճանչնա՞ս, անոր եղբոր հարսն եմ:

— Այն որ մեծ մարդ է կ'ըսէին, անո՞ր եղբոր տիկինը:

— Այո՛. անոր եղբոր տիկինը:

Սեղոյ հողին վրայ նստած փայտ մը կը տաչէր, ուսկի՞ց գտած էր ժանգոտ շեղք մը. մայրն ուզեց դանակը ձեռքէն առնել, կրնար մատը կտրել:

— Ի՞նչ կը շինես, Սեղոյ, հարցուց Երանուհի:

— Խաչ մը պիտի շինեմ պատէն կախելու համար. Կիւրիինի ժամին խաչերուն պէս. որ մայրիկս նայի եւ աղօթէ, մեր տունն ալ խաչ կար. արդեօք ան ալ ճամբայ ելա՞ւ հոս գալու համար. մինակը ոքո՞ւն պիտի նայի, ո՞վ իր ոտքերուն տակ կայնած պիտի աղօթէ:

— Եւ մեզի կ'ըսէին ուրացէք ձեր կրօնքը որ ազատիք քարոզէն ու մահէն. տես այս պզտիկին մէջ ցեղին հաւատքը կայ, արիւնին հետ արիւն եղած. հոգիին հետ հոգի դարձած: Խորհրդածեց ինքնիրեն երիտասարդ կինը:

Սրբուհի քիչ մը մխիթարուած զգաց, ալ նոր կեանք մը պիտի սկսէր, պիտի վարժէր աղքատ հիւղակին իր հողէ յատակին եւ թիթեղէ տանիքին: Պիտի ճանչնար բակին թշուառները, ցաւը ցաւի պիտի խառնէր, արցունք արցունքի պիտի շղթայէր. բայց մինչեւ ե՞րբ Աստուած իմ, մինչեւ ե՞րբ:


Տիկին Երանուհի, ճամբարին վարիչն էր. բաւական ժամանակ է հոն կ'աշխատէր. անձանօթ բարերարներ, տեղացիներ, կ'օգնէին պնակ մը ապուր եւ հաց ճարելու այդ հէզ կիներուն: Նա ստէպ կ'այցելէր հիւզակէ հիւզակ, բայց ամէնէն աւելի երկար ու մտերիմ Սեղոյին քով կը մնար: Սեղոյ բակին պզտիկն էր. երգիչ թուչնակը որ քիչ մը ուրախութիւն կը բերէր այդ անդարուն կտիներուն: Կային նաեւ Սեղոյի հասակակից աղջնակներ, սակայն սարսափն այնքան խոր մտած էր իրենց սրտերուն մէջ որ վայրի կատուի նման խոյս կու տային եւ մայրերուն կամ մամիկներուն կոնակը կ'անցնէին երբ նոր դէմք մը բակին մէջ մտնէր: Սեղոն այդպէս չէր, նա համարձակ էր, խօսուն եւ թրուչկոտ: Իր մայրը տակաւին բակին կիները չէր ճանչնար, բայց պզտիկն արդէն բոլոր հիւզակները մտած ելած էր: Անկար կիներուն ծառայութիւն կ'ընէր. ջուր կը կրէր. խոշոր աւել մը գտած հիւզակները կ'աւելէր:

Երբ ապուր եւ հաց բաժնելու ժամանակը գար, հոն էր առաջին գծին վրայ:


— Երանուհի մայրիկ, թիւ 11 հիւզակին մեծ մաման հիւանդ է, ապուրն ես տանիմ:

Յո կը դառնար ուրիշ պնակ մը ձեռքը. — Մայրիկ. ա՛խ, ինչ անոյշ էր այդ բառն Երանուհիի ականջին, կարծես իր Վանիկն ըլլար: Երանուհի մայրիկ թիւ 2 տնակին մէջ փոքրիկ Մանանը կայ, շատ փոքր է, շատ անօթի է, կու լայ. իմ բաժինս տուր իրեն տանիմ:

Սեղոյ հացն ու ապուրը կ'առնէր մէջը կը փրթէր եւ ինքը կը կերցնէր այդ եռամեայ աղջնակին: Մանան որբուհի էր, պառաւ մեծ մայրիկ մ'ունէր, մէջքը կտարած, կողերը ցաւոտ: Երբ Մանան կշտացած ժրպատէր, Սեղոն ուրախ կ'ըլլար, կը շոյէր փոքրիկին խօր-



Սեղոյ մօրը ձեռքէն բռնած կը փախէ...



— Մամա, Կիրիճ վերադառնանք, աղաչեց Սեդոյ:

մազերը: Յանկարծ բակին միւս կողմէն ձայն մը կը լսուէր.

— Սեդոյ, Սեդոյ. Տիրուհի մայրիկն էր, ոտքերն ուտեր էին, քիչ մը տաք ջուր եւ ձէթ կը խնդրէր շփելու համար:

Պգտիկին մայրը կարծես բնաւ զինքը չէր տեսներ, միշտ աչքն ասդին անդին էր զինքը փնտրելու համար. կը վախէր թէ Սեդոն բակէն դուրս ելլէր եւ կորսուէր: Անգամ մը Կիրիճիցիներուն բակը մտաւ արարի տարազ հագուած մէկը. երեսը եւ զլուխը սպիտակ լաթով փաթթած էր, հազիւ աչքերը կը տեսնուէին: Տղան վախցած մօրը քով վազեց, աղջնակներն անյայտացան: Մարդն ուղղակի Սեդոյին հիւղակը գնաց. նախրեպան Միսաքն էր, իր ետեւէն բռնած էր նիհար ու ծերացած իշուկի մը սանձը, վրան համես մը դրած էր եւ նարինջ կը վաճառէր: Ուսկի՞ց ճարեր էր այդ հինգ անգամ սասկած էչը: Անշուշտ տէրն ազատ ձգած էր անասունն ինքնիր բախտին ապրելու: Երբ Միսաք գէմքին լաթը վերցուց, Սեդոյ մօրը թիկունքէն դուրս ելաւ եւ Միսաքին փաթթուեցաւ.

— Բարեկենդա՞ն կը խաղաս, հարցուց խնդալով: Միսաք աղուոր նարինջ մը տուաւ. Սեդոյ անգամ մը միայն Կիրիճի մէջ նարինջ կերած էր. տղան խաճաւ, կարծես խնձոր ըլլար, ակօսաները թթուեցան:

— Սեդոյ, այդպէս չեն ուտեր, ըսաւ մայրը եւ տըրուին ձեռքէն առնելով կեղուեց ու տուաւ:

— Մամա, Միսաք քեռիին հետ ես ալ երթամ նարինջ ծախելու: Բախտ կը բերեմ:

— Դուրսը գէշ մարդիկ կան, տղաս. քեզ կը տանին, պատասխանեց մայրը:

— Միսաք քեռին քաջ մարդ է. զիս կը պաշտպանէ:

Նարնջավաճառը խնդաց. շոյեց փոքրիկին դանդուր մազերը ըսելով.

— Շատ լաւ, Սեդոյ, քեզ հետս կը տանիմ, դուն ինծի բախտ կը բերես. այսօր ինչ որ վաստկիմ քուկդ է:

Մայրը չկրցաւ ոչ ըսել. Միտաք վաստահելի մարդ էր, Կիւրինցի էր, դրեթէ այդ խարխուլ տան անդամը: Սեդոյ բռնեց իշուկին սանձէն եւ բակէն դուրս ելաւ: Ամիսներ վերջ առաջին անգամն էր որ բակին պատիկը ոտքը դուրս կը դնէր. ուրախ էր որ մեծ Հայէսը պիտի տեսնէր. ուրիշ մարդերու պիտի նայէր:

Հարկ չկար էչն առաջնորդելու. անասունը գիտէր թէ ո՛ր փողոցէն պիտի անցնէր, ո՛ր անկիւնը պիտի կայանէր. ո՛ւր պիտի դառար, ո՛ւր դունչը տիրոջ ոտքերուն պիտի քսէր:

Սեդոյ իր մանկական գիւ ձայնը ձգեց փողոցէ փողոց.

— Նարի՛նջ, Հայֆայի անոյշ նարի՛նջ:

Յետոյ գառնալով Միտաքին, աղուոր աչքերն անոր պղտոր աչքերուն հարցուց.

— Այսպէս լա՞ւ է, շիտակ ըսի՞ր:

Էջը դարձացաւ թէ ինչո՞ւ գինքն անսովոր տեղեր կը կանգնեցնէին, ինչո՞ւ իր բեռը այսպէս շուտով կը թեթեւնար: Մանուկին գրաւիչ ձայնը սրտերն իրեն կը քաշէր, շատերն այդ պղտրիկին հետ խօսելու համար կը կեցնէին եւ անպայման նարինջ մը կը գնէին. Հայֆայի նարինջ չէր, այլ սիրուն մանուկի մը թուշերն էին, որ եթէ խածնէիր լուսնկայի կաթ կ'եղէր:

— Մեղք այս ցեղին, ըսաւ ճոխ հագուած մէկը եւ պղտրիկին վրայ ծռելով արարերէն հարցուց.

— Ինծի զաւակ կ'ըլլա՞ս: Քեզ աղուոր եւ հարուստ պալատ մը կը տանիմ:

Սեդոյ բան չհասկցաւ եւ աչքերով հարցուց Միտաքին:

— Կ'ըսէ թէ ինծի զաւակ կ'ըլլա՞ս, քեզ աղուոր տուն մը կը տանիմ:

— Ո՛չ, ես մամայիս զաւակն եմ, եւ Միտաքին պըլլուեցաւ:

— Իմ հետս եկուր, ըսաւ հարուստը նարնջավաճառին: Կ'ուզէի որ այդպէս պատասխանէր, հարազատ կաթ խմող տղան մարդկային սուրբ բնութենէն չի շեղիր. մայրն ամէն բանէ վեր է: Հարստութիւն չէ, տեսակ մը աստուածութիւն է:

Միտաքին էչն ուզեց անցնիլ երթալ այդ շքեղ դրան առջեւէն, հոն երբեք չէր կանգնած, բայց տէրը,

— Ի՛ր՛հ, ըսաւ ու կեցուց:

Հարուստ մարդը վար իջաւ, ձեռքին մէջ կապոց մը կար, մէջն ինչ դրած էր՝ տղան չնայեցաւ: Մարդը զարմացաւ թէ ինչո՞ւ հետաքրքիր չէր պղտրիկը, ինչո՞ւ պարզ շնորհակալ եմ ըսաւ ու թեւին տակ դրաւ:

— Բա՛ց, նայէ. մէջն ի՞նչ կայ:

— Թող մայրիկս բանայ, նայի:

— Քու մանչո՞ւկդ է այս պղտրիկը, հարցուց նա Միտաքին:

— Ոչ. Կիւրինցիներուն ճամբարին մէջ որբեւայրի մայր մ'ունի, մեր տեղէն ծանօթ ենք:

— Կիւրին, Կիւրին... կրկնեց հարուստը. այո, Սերաստիոյ մօտ է: Իմ պապերս ալ այդ քաղաքէն էին, բայց հիմա ես արարախօս յոյն հայէպցի եմ, Ֆեթթել կը կոչուիմ, հարուստ եմ, բայց այս ցնցոտի հագուած մանչուկն իմ ամբողջ հարստութեանս հետ չեմ փոխեր:

Հարուստը Սեդոյին այտերն համբուրեց ըսելով.

— Գնա՛ տղաս, ճամբար դնա՛, մայրդ քեզի կը սպասէ, դուն այն դանձերէն ես որ ընտիր ցեղերը կ'ուսնենան:

էջն առաջ դնաց, Սեղոյ դարձեալ իր ձայնը ձգեց փողոցէ փողոց. դեռ քանի մը նարինջ մնացեր էին. անոնք ալ շուտով վաճառեցին եւ Միսաք ճամբարը մըտաւ:

Միսաքին ծերացած էջը դանդաղ քայլերով դնաց բակին մէջ եւ կանգ առաւ, տնկեց ականջները եւ նայեցաւ հիւղաւանի խարխուլ տուներուն, անոնք ալ ծերացած էին. ոտքի մնալու ոյժ չունէին եւ եթէ էջ չըլլար՝ պիտի արտասուէր այնքան թշուառութեան վրայ:

Սեղոյ ծրարը թեւին տակ, քաշեց անոր չուանէ սանձէն. էջը ոտքերը բացած, յամառ սովորութեան համեմատ, չուզեց առաջ երթալ: Ի՞նչ պիտի ընէր Սեղոյի հիւղակին մօտ, ան ալ կաշի եւ ոսկր էր, չոր տախտակներ ու ժամգոտած թիթեղներ պիտի տեսնէր: Միսաք իշուն լեզուով պոռաց եւ անասունը քանի մը քայլ առաջ դնաց եւ դարձեալ կեցաւ:

— Ի՛ր՛ի՛ր՛, դռնէց Միսաք եւ զինքը կապեց Սեղոյի հիւղակի բարակ սիւնին: Պղտիկն անհամբեր մօրը վազեց:

Սրբուհի նստած իր հիւղակի սեմին Սեղոյի տաբատը կը կարկտէր. ալ կարելու տեղ չէր մնացած, ասդին կը դարձնէր, անդին կը դարձնէր եւ մաղի պէս քըրքըրուած ու մաշած էր, ի՞նչպէս կարկտէր, ո՞ւր ասեղ զարնէր:

- Մամա, առ, նայէ, նայէ, մէջն ի՞նչ կայ:
- Ի՞նչ ծրար է տղաս, ո՞վ տուաւ:
- Մարդ մը տուաւ, աղուոր հագած էր:
- Դուն բաց, քեզի տուած է:

— Ո՛չ, մամա, դուն բաց:

Սեղոյ ծնրադրեց հողին վրայ. արմուկները մօրը ծունկերուն կռթնցուց եւ երկու աչքերը խոշոր բացած, մօրը մատներու շարժումին հետ, առասանի շարժումներուն կը հետեւէր: Միսաք ոտքի կայնած էր, էջն ալ, հետաքրքիր, գլուխն երկնցուց ծրարին նայելու համար:

— Զոյգ մը պղտիկի գուլպայ, ըսաւ մայրը և դուրս քաշեց:

— Բաճկոնակ մը:

— Տարատ մը:

— Զոյգ մը կօշիկ:

— Պուպրիկ մը:

— Տոպրակիկ մը շաքարեղէն:

— Տես Սեղոյ, քեզի համար ինչ սիրուն բաներ տուած է այդ բարի մարդը: Տեսա՞ր որ հոս Աստուած կայ:

Տղան մէկիկ մէկիկ շօշափեց. տարատն իր վրան փորձեց՝ շատ մեծ էր. բաճկոնը լայն էր. կօշիկները երկու ոտքերը մէկ հատին մէջ կը մտնէին: Կարծես տխրեցաւ, պիտի լար:

էջը գլուխն անդին դարձուց. կաղամբի տերեւ մ'ալ մէջէն չելաւ:

— Մամա, ինծի համար չեն ասոնք, ըսաւ պղտիկը: Նայէ ինչ կ'ընեմ, այս զոյգ մը կօշիկն ու գուլպան 10 թիւ հիւղակի Մարիամին կու տամ, խեղճը բոպիկ է, ոտքերը քարերուն զարնուելով միշտ արիւնոտ են: Կօշիկն ու գուլպան ասներով վազեց դէպի 10 թիւ հիւղակը: Բակին մէջէն պոռաց:

— Մարիամ, Մարիամ, եկուր նայէ ինչ բերեր եմ:

Տասը տարեկան աղջնակ մ'էր Մարիամը, ինքն ալ սրբուհի, հայր մայր չունէր եւ պառաւ մօրքուրին հետ

հրաշքով ազատած էր այն սեւ օրերուն: Աղջիկը հիւզէն դուրս ելաւ. Սեղոյ ուրախ ժպտով ըսաւ.

— Առ ոտքերդ անցուր այս դուլպաններն ու կօշիկները, թող մէյ մըն ալ չարիւնոտին, եւ դուն ցաւէդ չլաս:

— Սեղոյ դուն ալ բոպիկ ես, քու ոտքերդ ալ կ'աւրիւնոտին, պատասխանեց Մարիամ:

— Ես հիմա դրամ կը վաստկիմ, կրնամ գնել, պատասխանեց պզտիկն ու վազեց դէպի մայրը:

Տիկին Երանուհին իրենց եկած էր. սեմին վրայ նստած պուպրիկը կը դիտէր. կապոյտ աչքերով, դեղին մազերով խամաճիկը շատ սիրուն էր: Սեղոյ երբեք չէր տեսած պուպրիկ:

— Մամա, աս պզտիկն ալ օր մը լեզու կ'ելլէ՞, կը խօսի՞, հարցուց միամտութեամբ:

— Չէ, պզտիկս, պատասխանեց Երանուհի, ասիկա շինծու պեպեք է. խաղալու համար է:

— Տուր ինձ, Սաթիկին պիտի տանիմ, անիկա պզտիկ է, հետը կրնայ խօսիլ ու խաղալ: Մամա շաքարեղէն ալ տուր, Սաթիկը շատ կը սիրէ:

Արդէն բակին մէջտեղ էր եւ հեռուէն,

— Սաթիկ, Սաթիկ, կը պոռար:

Եռամեայ աղջնակը հողին վրայ նստած, փայտի մը հետ կը խաղար: Սեղոյ փայտն առաւ ձեռքէն ու խամաճիկը տուաւ:

— Սաթիկ, քեզի ընկեր մը բերի. նայէ թաթիկներդ որքան աղտոտ են, հողին հետ մի խաղար:

Բռնեց փոքրիկին ձեռքէն եւ թաց լաթով թաթիկները սրբեց, յետոյ շաքարի թուղթն հանելով ձեռքը տուաւ:

— Բերանդ դիր, նայէ ինչ անոյշ է:

Սաթիկ շաքարը բերանը դրաւ եւ պուպրիկին համրոյր մը տալով ըսաւ.

— Ասիկա քոյրի՞կ է:

— Քոյրիկ է, սիրուն քոյրիկ, նայէ աչքերը կը դարձնէ, ձայն կը հանէ, հիմա ասոր հետ խաղայ. հողը աղտոտ է, հիւանդ կ'ընէ:

Աղջնակը գրկեց պուպրիկը, անդամ մ'ալ համբուրեց եւ մեծ մօրը վազելով պոռաց.

— Մամի, մամի, Սեղոն քոյրիկ մը բերաւ:

— Ես հաց չունիմ, ուրիշ բերան ի՞նչպէս կ'ըտացնեմ, պատասխանեց պառաւն հիւզակի դռնէն՝ ուր հնամաշ գորգ մը կը թօթուէր: Բայց երբ պուպրիկը տեսաւ թախծոտ ժպտ մը նկարուեցաւ իր թոռմած շրթներուն վրայ:

— Զուարճացիր հոգիս, այդ խեղճուկ խամաճիկին հետ. տանդ մէջ փարիզեան պուպրիկ թողուցիր. հիմա այդ քուրջէ պուպրիկին հետ զուարճացիր:

Բայց Սաթիկին համար սիրուն քոյրիկ էր. զինքը կը սիրէր ու կը համբուրէր: Սեղոյ արդէն իր հիւզակը դարձած էր:

— Ինչ զարմանալի տղայ է, ըսաւ Երանուհի Սեղոյին համար, եթէ գրկես համբուրես շատ քիչ է. աշխարհ մը պէտք է տալ այս փոքրիկին. հրեշտակի սիրտ ունի:

— Մամա, եթէ տեսնէիր թէ Սաթիկն ինչպէս ուրախացաւ, շաքարը կերաւ, պուպրիկն համբուրեց, սիրտդ պիտի լար, ըսաւ Սեղոյ: Բայց խեղճ վարդունն ալ մերկ է. դիտե՛՛ս այն Ծ թիւ հիւզակի վարդունը. մէջքին չուալի կտոր մը փաթթած է եւ ամօթէն գրեթէ հիւզակէն դուրս չ'ելլեր: Ինձի համար շատ մեծ են, երկու Սեղոյ կրնան մէջը մտնել:

— Բայց ես քեզի կը յարմարցնեմ, պատասխանեց Երանուհի:

— Ես դրամ կը վաստկիմ, Երանուհի մայրիկ: Այնպէս չէ՞ Միսաք քեռի, մենք դրամ կը վաստկինք:

— Այո, քեզի հետ շատ դրամ կը վաստկինք:

— Միսաք քեռի, մեր էջը դեռ երկար կ'ապրի՞, ըսաւ տղան. տեսայ որ քիթը կախած էր:

— Քիթը միշտ գետինն է, կաղամբի տերեւ կը փնտռէ:

— Ախմախ է, ես կաղամբի տերեւ չեմ սիրեր. անշուշտ ծրարի մէջէն իրեն բան մը չելաւ, քիթը կախեց:

— Տիկին Սրբուհի, ես կը յարմարցնեմ Սեղոյին համար, դարձեալ ըսաւ Երանուհի: Սեղոյ եկուր անգամ մը հագուէ չափդ առնեմ:

Սեղոյ հագուեցաւ տաբատը. բաճկոնը թեւն անցուց, կարծես դաշտի խրատելիակ դարձաւ: Ինքն ալ միւսներուն հետ ծիծաղեցաւ. անոնց մէջ կորսուած էր, հազիւ ոտքերուն եւ մատներուն ծայրերը կը տեսնուէին:

Սքանչելի է, պոռաց ու դէպի բակը վազեց:

— Սեղոյ ո՞ւր կ'երթաս, կանչեց մայրն ետեւէն:

Արդէն բակին միւս կողմէն կը լսուէր Սեղոյի զիւ ձայնը:

— Դուրս արի, Վարդուն, քեզի բան մը պիտի ըսեմ:

— Ի՞նչ կայ Սեղոյ, հարցուց աղջնակը հիւզակի մէջէն:

— Դուրս եկուր որ ըսեմ:

Վարդուն ամփոփեց իր մէջքին վրայ պարկի կտորով փաթթած լաթը, բռնեց ձեռքով որ կողերը չտեսնուին եւ դրան վրայ երեւցաւ:

— Առ Վարդունն աս տաբատն ու բաճկոնը հագիր, ինծի նուէր տուին, բայց ես չեմ ուզեր. տաբատ ունիմ, մայրս կարկտեց եւ գրեթէ նոր եղաւ:

— Բայց Սեղոյ, այս տաբատն ու բաճկոնը մանչու համար են, ես աղջիկ եմ:

— Ո՛հ, Վարդուն, նազ մի ըներ, հիմա մանչ աղջիկ չկայ. ինչ գտնենք ան պիտի ուտենք, ան պիտի հագուինք: Փորձէ, նայէ թէ ինչ սիրուն պիտի ըլլաս:

Անշուշտ իր մէջքի աղտոտ լաթէն աւելի լաւ էին, դէթ կրնար արեւուն ելլել, ալ չէր ամ չնար. կրնար Սեղոյին, Մարիամին հետ խաղալ բակին մէջ: Վարդունին մայրը հիւանդ էր. ոտքերն ուռած էին. տաք ջուր եւ քիչ մը ձէթ պէտք էր ամէն օր չիւլու համար, Վարդուն կ'ամ չնար այդ վիճակով երթալ ջուր եւ ձէթ ուղելու, խեղճ Սեղոն պէտք է վազէր ամէն երեկոյ եւ ծանր թիթեղէ ամանը թեւերէն կախ, տքալով ջուր կը տանէր Գ թիւ հիւղակի Հոբիփ մայրիկին:

Վարդուն հագուեցաւ տաբատն ու բաճկոնը, իրեն շատ յարմար եկան:

— Մայրիկ նայէ, կ'ըլլա՞յ այսպէս, հարցուց մօրը. վրաս չե՞ն խնդար թէ մանչու տաբատ եւ բաճկոն հագուեր եմ:

— Խնդացողին աչքերը կուրնան, պատասխանեց մայրը:

— Վարդուն քուրիկ, հազար հազար անգամ զեղեցիկ եղար, ըսաւ Սեղոյ:

Առաջին անգամ զուլումի օրերէն այդ խեղճ աղջիկը խնդաց. իր ոսկեհատիկ լազուտի պէս ակօսները ժրպիտ ունեցտն, արեւ տեսան: Կարմիր բաճկոնն երեսին վարդի դոյն տուաւ, կապոյտ տաբատը սրունքներուն վրայ խոշոր կակաչ մը կը նմանէր:

— Տիկին Երանուհին մեր քովն է, ըսաւ Սեդոյ, կ'ուզե՞ս երթանք հարցնենք, թող ինքն ալ ըսէ թէ աղուոր ես:

Ձեռք ձեռքի թռան Սեդոյի հիւզակը: Աղջնակին ուրախութիւնն աւելի գեղեցիկ էր քան աշխարհիս բոլոր դարուններուն ծաղիկները:

— Երանուհի մայրիկ, Վարդունն աղուոր չէ՞, հարցուց Սեդոյ:

Սրբուհի, Երանուհի եւ Միսաք նայեցան աղջկան, պէտք էին յուզուիլ ու արտասուել մէկուն ուրախութեան վրայ, միւսին սրտի գեղեցկութեան վրայ:

— Շատ սիրուն եղար, աղջիկս, ըսաւ Երանուհի, հազար անգամ աղուոր քան Եղեմի ծաղիկները:

Սեդոյին մայրը ձեռքն առաւ կարկտուած տարատը, վրան ամէն դոյնէ կտոր կար, դեռ շատ ծակտիկներ կային. աչքերը լեցուեցան եւ յուզումով ըսաւ.

— Սեդոյիս ասիկա մնաց:

Բակին պզտիկը մօրն ըսածին ուշ չդարձուց. նա Վարդունին ձեռքէն բռնած, խոշոր աչքերն անոր երեսն է վեր, կը ժպտէր ինչպէս մանուշակը ծաղկած թուփին կը նայի:

— Սեդոյ, ըսաւ Միսաք քեռին, դուն այսօր տանը՛հինգ դահեկան վաստկեցար, երթանք քեզի տարաւ մը գնեմ:

— Ձէ, Միսաք քեռի, մայրիկիս կարկտածը շատ գեղեցիկ է, անիկա կը հագուիմ, երթանք խեղճ իշուն քիչ մը դարի եւ խոտ գնենք: Տխուր տխուր նայեցաւ կապոյցին, մէջէն իրեն համար բան մը չէրաւ:

Սեղճ Սեդոյ, ինքն ալ դրեթէ մերկ էր, կողերը կը տեսնուէին, ոտքերը բոպիկ էին, բաճկոնակ մ'ունէր՝

որուն մէկ թեւը պակաս էր ու մայրը լաթ մը չէր դրած թեւ մը կարելու. եւ հիմա էլը կը մտածէր:

Տիկին Երանուհի կարծես իր Վանիկը մոռցաւ, բակին պզտիկն ուրիշ բան մըն էր, սիրտ եւ հոգի էր, բակին գաւակն էր, այդ թշուառ ճամբարին ժպտուն ճառագայթն էր:

— Ձեմ գիտեր թէ ինչո՞ւ եկայ, ինչո՞ւ կ'երթամ, ըսաւ ոտքի ելլելով: Ամէն անգամ որ սիրտս նեղուի, Սեդոյին երթամ կ'ըսեմ քիչ մը սիրտս բացուի: Ճամբարին կեանքը մազի թելէ կախուած է, կամ սոզի պիտի բռնուինք, կամ մեզ պիտի վտարեն այս տեղէն, իբր թէ աղտոտութեան բոյն է, համաճարակ կը պատահի: Ինչ ըսեմ Սրբուհի, այս պնակ մը տաք ջուրն ալ շատ կը տեսնեն: Աստուած թող բաներն յաջողցնէ, այն քանի մը Կիւրինցիներուն, որ հինէն դաղթած են եւ չեն մոռցած արիւնի ձայնը, շատերը հայերէն ալ չեն դիտեր, բայց սիրտ ունին. դէթ պատառ մը հաց, ճարպ եւ կաղամբի տերեւ կը դրկեն: Կը մտածեմ այն խեղճ կիները, խաչուած մայրեր, որ գաւակի մը սիրոյն համար մահուան դէմ կռուելով, կռուելով հոս հասեր են: Ի՞նչ մեղք ունին Սեդոյի պէս անմեղ հրեշտակները, որ ոտնաբոպիկ քայլեր են սարեր ու ձորեր եւ հոս հասեր են, եւ պատառ մը հացն իսկ կը խնայեն:

— Երանուհի քոյրիկ, պատասխանեց Սրբուհի, մենք աւելորդ կ'ապրինք. աշխարհ եւ մարդիկ մեզի պէտք չունին, բեռ ենք իրենց ուսերուն վրայ: Եթէ Սեդոս չըլլար, ես ինքզինքս Եփրատ կը նետէի: Եթէ տուն տեղ կործաներ են, ի՞նչ կ'արժէ պառաւ մը որ բուռի նման իր աւերակներուն փարած դիշեր ցերեկ վայէ: Ես պէտք է ապրիմ Սեդոյիս համար: Հոսի մայրիկը պէտք է ապրի Վարդունին համար, կան ու կան, փո-

զրիկը մեծի շուքին տակ հասակ պիտի առնէ. մէկը միւսին նայելով պիտի ապրի:

— Ոչ, Սրբուհի, ես չեմ խորհիր թէ այդ ցաւազար պառաւանները բեռ են աշխարհի ուսերուն: Ահա Միսաքն ալ դիտէ. տուններու հանինները այն ծառի արմատներուն կը նմանին՝ որ օճախին մէջ օրերով կը մխան եւ կարծես չեն սպառիր. հազիւ նոր փայտ մը դնեն՝ կրակ կու տան եւ օճախը նորէն բոց կ'առնէ: Մեր ազգն ու տունը այդ պառաւանները վառ պահած են եւ վաղն ալ անոնք պիտի ըլլան մեր ազգին օրօրանը: Հայաստան այս ճամբարին մէջ չի վերջանար: Եթէ դուրսէն բան մը չհասնի, ես Սեղոյի ձեռքէն բռնած՝ կա՛մ դռնէ դուռ կը մուրամ, կա՛մ տեղ մը ազախին կ'ըլլամ պատառ մը հաց ճարելու այդ պաշտելի մայրերուն:

— Էհ, բան մ'ալ յուսանք ես վաստկիմ, ըսաւ Միսաք: Մեղք այս էջս շատ ծերացեր է, հազիւ ոտքի վրայ կը մնայ, չեմ գիտեր թէ դեռ քանի՞ օր կրնայ գիմանալ: Քանի՞ պատասպարեալներ կան ճամբարին մէջ:

Էջը կարծես թէ հասկցաւ որ իր անունը տուին, ականջները տնկեց եւ ցաւազին Միսաքին նայեցաւ. դունչն անոր ոտքերուն քսեց, կարծես կ'ուզէր ըսել.

— Երթանք, բան մը տուր ուտեմ:

— Ճամբարին մէջ քսանեօթը հողի ենք, տասնըհինգ պղտիկներ եւ տասներկու մայրեր, մեծ թիւ մը չենք, բայց ամէն օր դէթ չոր հաց մը պէտք է հոգալ, պատասխանեց Երանուհի:

Միսաք ճամբարին մէջ չէր բնակեր, տեղացի մէկն իր ախոռին մէկ պարապ անկիւնը տուած էր, ուր իշուն հետ գիշերը կ'անցընէր, կողք կողքի պառկած չոր յար-

դին վրայ: Ճամբան քիլոյ մը դարի եւ խրճիկ մը խոտ գնեց եւ ախոռ մտաւ, դրաւ իշուն առջեւ, անասունը դրեթէ լափեց, ջուր խմեց եւ տքալով փլատակի պէս ինկաւ յարդին վրայ:

Առաւօտները գինքը ոտքի հանելը շատ լուրջ հարց էր. պէտք էր սանձը սիւնի մը կապել եւ պոչէն բռնելով ուժով վեր քաշել, օգնել որ կարենար ոտքերը իրար բերել, կողերը շտկել ու չորս փտած ցիցերու վրայ կենալ:

Յաջորդ օր Միսաք մինակը գնաց նարինջ գնելու եւ փողոցները ծախելու համար: Սեղոյ վարդուներն եւ Մարիամին հետ բակը պիտի աւելին: Շաբաթ օր էր. տիկին Երանուհի կը փափաքէր, որ դէթ շաբաթն անգամ մը հիւղակները մաքրուէին. թէպէտ շատ մայրիկներ ամէն օր կ'աւելին ու կը սրբէին. բայց Սաթիկին մեծ մայրիկը, Երանուհի, թիւ 3, 5, 7 հիւղակներուն պառաւանները հիւանդ էին, մէկուն ոտքերն ուռած էին, միւսը մէկ աչքը կորսնցուցած էր, ուրիշ մը կողին սուրի հարուած ստացեր էր: Սրբուհիին մէկ ձեռքը չէր գործեր, հազիւ թելի կամ ասեղի ծայր կրնար բռնել: Աշխարհիս ամենայետին ծերանոցն էր. աւերակ տուն մը՝ ուր ողջ գերան մը չկար: Միայն քանի մը մանուկներ ազօտ ժպիտ մը կը դնէին այդ սեւ բակին մէջ: Բայց մարդիկ, զարմանալի բնազդ է, իրենց թշուառութեան ալ սիրով կը փարին եւ յաճախ հաճելի կը գտնեն. մայրիկներ ու պատանիներ կապուած էին ճամբարին, անկից դուրս չէին ելլեր, մտերիմ կը զգային բակին ու հիւղակներուն: Յաճախ քովէ քով կու դային, խօսելու համար, մայրական սիրտեր բանալու. բայց ի՞նչ բանի վրայ կրնային խօսակցիլ, սարսափելի պատմութիւններ, հալածանք, ջարդ եւ զուլում. ամէն

մէկն իր ողբերգութիւնն ունէր. կեանքի սեւ էջեր, ար-
ցո՛ւնք, արցո՛ւնք:

Խոհանոցին մէջ կիրակի օրերը գրեթէ տարբերու-
թիւն չկար. այս անգամ հին լուրիս հասեր էր, այու-
րին մէջ կը լողային սեւ կէտերու պէս: Սեղոյ ծառա-
յեց հիւանդ մայրիկներուն. Վարդուն եւ Մարիամ ալ
օգնեցին. շատ պառաններ իրենք կ'երթային առնելու
հաց եւ ապուր. նորէն շնորհակալ կ'ըլլային Աստուծոյ,
որ զիրենք բոլորովին երեսէ չէր ձգած:

— Փառք Տիրոջ ըսելով, խաչ կը հանէին եւ փո-
քրիկի մը հետ դետին նստած, ախորժակով կը ճաշէին:
Մոռցած էին իրենց տուներու ճաշերը, քաղցրեղէննե-
րը, պահածոնները ու տեսակ տեսակ կերակուրները: Սեւ
օրերու սեւ հաց, սեւ սրտերու սուզը միասին կը ճա-
շէին. երբ մանուկը կը ժպտէր, աշխարհն իրենց կ'ըլ-
լար:

Սակայն այդ կիրակի կէսօր Սաթիկի մեծ մայ-
րիկը խոհանոց չզնայ իրեն եւ պզտիկին բաժինն առ-
նելու. աղջնակը բակին մէջ իր պուպրիկին հետ կը խա-
ղար. մինչ խոհանոցին կողմերը պնակներու եւ կիներ-
բու ազմուկ կը լսուէր:

— Սեղո՞յ, հարցուց Վարդուն, Սաթիկին ճաշ տը-
ւի՞ր. բակին մէջ կը խաղայ:

Սեղոյ վազեց 11 թիւ հիւղակը: Պառաւր տարած-
ուած էր խոտէ խշտեակին վրայ, երեսը մոմի դոյն ա-
ռած էր. աչքերը բաց, կարծես պիշ պիշ թիթեղներուն
կը նայէին: Սեղոյ փեշերէն քաշեց.

— Երանուհի մայրիկ, Երանուհի մայրիկ, ճաշի
ժամ է, արթնցի՛ր:

Բայց Երանուհի մայրիկը պատասխան չէր տար.

տղան աւելի ուժով պոռաց: Պառան աչքերը բաց պիշ
պիշ թիթեղէ առաստաղին կը նայէր:

— Վարդուն, Մարիամ, պոռաց աղջիկներուն. Ե-
րանուհի մայրիկը խոր քունի մէջ է, եկէք արթնցու-
ցէք:

— Վա՛խ, մեռեր է, ըսին իրարու:

Բակին մէջ լուրը կայծակի պէս տարածուեցաւ:
Բոլոր մայրիկներն իրենց արցունքները սրբեցին:

— Քոռ ըլլայի, Երանուհի քոյրիկ, հո՞ս պիտի դա-
յիր մահդ պտնելու համար. ըսին եւ կորաքամակ կո-
զեր իրար մօտ եկան, 11 թիւ հիւղակին առջեւ խոնուե-
ցան, իրենց գլխու մաշած լաթերը բերաններուն տա-
րին ու լացին:

— Խեղճ Սաթիկ, որբերուն որբն եղար, ըսաւ Սըր-
բուհի: Սաթիկ բակին մէջ իր պուպրիկին հետ կը խա-
ղար: Սեղոյ փոքրիկին ձեռքէն բռնեց իր հիւղակը տա-
նելու համար:

— Եկուր քեզի շաքար եւ կերակուր պիտի տամ,
ըսաւ:

Փոքրիկ աղջնակը ժպտելով հետեւեցաւ Սեղոյին:
Ինչ գիտնար թէ աշխարհիս մէջ մահ կայ. թէ մեծ մայ-
րիկը մեռած է սրտի կաթուածով եւ ա՛լ պիտի չար-
թըննայ:

Ո՞վ պիտի դար այդ տառապած մարմինն հողին
յանձնելու. ո՛չ տուն, տեղ ունէին, ո՛չ գերեզման:

Տիկին Երանուհի վազեց 11 թիւ հիւղակը, պա-
ռաներն աւելի լացին: Ամէն մէկն իր սիրտը բռնած էր,
արդեօք դեռ կը գարնէ՞ր. արդեօք վաղը պիտի արթըն-
նայի՞ն:

Բակը սուզի տուն եղաւ, մեծ ու պզտիկ միասին
լացին:

Տիկին Երանուհի 11 թիւ հիւղակին դուռը վրայ ըրաւ, ինքն ալ լացաւ:

— Վաղը թերեւս իմ կարգս է, տիկին Երանուհի, ըսաւ Համաս մայրիկը որ թիւ 7 հիւղակին մէջ կը բնակէր իր հնգամեայ Մանուշին հետ:

— Բոլորիս վախճանը նոյնն է, Համաս քոյրիկ, պատասխանեց թիւ 3 պառաւը:

— Սի՞րա մնաց որ դիմանայ, ըսաւ ուրիշ մայրիկ մը:

— Ուրեմն քանրվեց հոգի մնացինք, տրտում չեշտով ըսաւ տիկին Երանուհի: Խեղճ Սաթիկ, խեղճ Սաթիկ, հառաչեց ու խոհանոցին կողմը դնաց:

Այդ բակին մէջ մեռնիլը դիւրին էր, թաղումը շատ դժուար: Ո՞վ պիտի դար տանելու հողին յանձնելու:

Երեկոյեան բակ եկաւ Միսաք, իր ծերացած էջը կը մտածէր: Լսեց Երանուհի մայրիկին մահը՝ քար կը տրեցաւ:

— Թաղումի մասին խորհինք, ըսաւ տիկին Երանուհի: Երկու մարդիկ պէտք են շարկելու տանելու համար:


— Բայց ո՞ւր պիտի թաղենք. գերեզմաննոց չունինք, պատասխանեց Միսաք, քահանայ չունինք որ Հոգոց մը կարգայ Ահա մէկ հատը ես, մի՞ւսը:

— Ես երեք դուրուշ ունիմ. չե՞նք կրնար մէկը վարձել:


— Երեք դուրուշով իմ ծերացած էջս ալ տեղէն չի շարժիր, պատասխանեց Միսաք:

Տիկին Երանուհի գլուխը կախեց եւ դժուար հարցի մը վրայ խորհեցաւ:

— Սեզոն քովդ դրամ ունի՞, հարցուց Միսաքին տարտամ շեշտով:



Սեզոյին ձեռքը վստա մտմ մը տուին... Սաթիկ գրկին մէջ պուպրիկը բռնած էր...



— Հայֆայի նարի՞նջ... անոյշ նարի՞նջ...

— Է՛հ, ինչ որ անցեալ օր վաստկեցանք իրենն է՝ շուրջ տասնը՛հինգ դահեկան եղան: Կէսը ծախսեցի նորէն նարինջ գնելու եւ վաճառելու, բայց ծախսս հազիւ հանեցի:

— Այդ դրամէն դահեկան մը չէ՞ս կրնար տալ. Սեդոն շատ ուրախ պիտի ըլլայ: Սեդոյ, դարձաւ պզտիկին, որ Սաթիկին հետ կը խաղար. Սեդոյ, Երանուհի մայրիկին մէկ դահեկան կու տա՞ս:

— Հազար հատ կու տամ, պատասխանեց պզտիկը եւ շարունակեց Սաթիկին հետ խաղալ:

Միսաք յաջորդ առաւօտ շուկայ գնաց, ճամբաներուն վրայ բանուորներ նստած կը սպասէին որ զիրենք որեւէ դործի մը կանչէին: Վաթսունի մօտ մէկը յանձն առաւ դահեկանի մը մեռելը գերեզման տանիլ:

Տիկին Երանուհի, նայեցաւ ննջեցեալին զգեստներուն կարերը, թերեւս պահած ոսկիներ ունենար. բայց Երանուհի մայրիկ բակին պէս աղքատ էր: Փաթթեցին իր հիւղակի մաշած գորգին մէջ: Միսաք գլուխին կողմէն ուսին վրայ դրաւ. բանուորը ոտքերը վեր բռնեց: Սեդոյին ձեռքը վտիտ մոմ մը տուին, միակ յուղարկաւորը պիտի ըլլար. բայց Սաթիկ լացաւ, ինքն ալ կ'ուզէր Սեդոյին հետ երթալ: Երանուհիին աչքերը բաց էին, արծաթէ վարսերը գետին կախուած:

— Թող երթայ, թող երթայ, ըսին պառուները, թող երթայ իր վերջին յոյսը թաղելու:

Սաթիկ գրկին մէջ պուպրիկը եւ մէկ ձեռքով Սեդոյին ձեռքը բռնած՝ ժպտելով գնաց մեռելին ետեւէն: Ո՛չ քահանայ կար, ո՛չ տիրացու, պարզ էր, խեղճ կնոջ մահուան պէս աղքատ էր թաղումը:

Երկու պզտիկներ կը հետեւէին. մէկը ձեռքին մոմ ունէր, միւսը՝ պուպրիկ մը: Հազիւ երեք հարիւր մեղր

անդին քրիստոնեաներու գերեզմանոցը կար: Երկար փոս մը բացուած էր. մահեր շատ կային այդ ժամանակ: Հոն փոսին մէջ զլորեցին, իր հնամաշ գորգին հետ, իր մարած երազներուն հետ: Բահերով հող լեցուցին վրան: Այդ ժամանակ միայն Սաթիկ սաստիկ լաց եղաւ:

— Մամին մեղք է, մամին հողին տակ մի՛ դնէք:

— Մի՛ լար, Սաթիկ, ըսաւ Սեդոյ շաքար մը տալով. տուն երթանք, մամին պիտի դայ. աղուոր հազած պիտի դայ:

Երբ վերջին բահը հող թափեց, Միսաք ալ յուզուեցաւ, ափ մը հող առաւ ու փոսը նետեց.

— Հողդ թեթեւ ըլլայ, գժրախտ Երանուհի, ըսաւ:

Սեդոյ ինքն ալ ափ մը հող նետեց: Սաթիկ, անդիտակից, ափ մը հող ինքն ալ առաւ փոսը նետեց, ըսելով.

— Մամի, շուտ տուն դարձիր:

Բակին մէջ խոր լուծիւն տիրած էր. ամէն ոք իր հիւզակին մէջ քաշուած կամ զաւակը, կամ թոռնիկը դրկած կը համբուրէր, կարծես թէ մահը վազն իրենց դռներն ալ պիտի բախէր, մէկը միւսին ետեւէն պիտի լքէին վերջին ծաղիկները:

Սաթիկ թող տուաւ Սեդոյի ձեռքը եւ վազեց իրենց հիւզակը. դուռը կիսովին բաց էր, մէջը պարսպ, խոտէ խշտեակը կար, պատէն կախուած լաթի դուռատ կտորներ, ապուրի պնակը մէջը սեւ հացի շերտ մը մընացած:

— Սեդոյ, մամին չեկաւ, ե՞րբ պիտի դայ, հարցուց լալով. ես մամին կ'ուզեմ:

— Պիտի դայ, Սաթիկ ճան, պիտի դայ. երբ նոր հազուստները կարեն:

Բռնեց պղտիկին ձեռքէն եւ իր հիւզակը տարաւ. խեղճ աղջնակը բակին որբուհին էր:

— Մայրիկ, ըսաւ, Սաթիկը միշտ մեր քով պիտի մնայ, այնպէս չէ՞. նա իմ փոքրիկ քոյրիկս է. իմ քովէս պիտի չբաժնուի:

— Թող մնայ, տղաս. Նազան քոյրիկիդ տեղը մընայ, Շուշան քոյրիկիդ ժպիտով մնայ:

Սիրտը լեցուեցաւ, իր աչքերուն առջեւ եկան սըրտի հատորները, Նազանն Եփրատի ալիքներուն յանձնած էր. Շուշանը ծաղկած ծիրանի մը տակ թաղած էր:

Տիկին Երանուհի երբ եկաւ Սաթիկին համար խորհէլու, տեսաւ որ աղջնակը Սեդոյի հիւզակին առջեւ իր պուպրիկին հետ կը խօսէր:

— Բարի կեցիր, կ'աղբարարէր շատ լըջութեամբ, որ մամին երբ աղուոր հազուստներով դայ, շաքար բերէ:

Տիկինն խսկոյն կռահեց թէ իրմէ առաջ բակին պըզտիկը խորհած էր Սաթիկի մասին. ժպիտով մօտեցաւ եւ ըսաւ.

— Սեդոյ, փոքրիկ Սաթիկը 7 թիւ հիւզակի վերջինէ մայրիկին պիտի յանձնեմ:

— Ո՛չ, Երանուհի մայրիկ, անիկա լաւ մայրիկ չէ, միշտ ուրիշներուն հետ կուր կ'ընէ. ապուր առած ժամանակ կը մըթմըթայ. իր աղջիկը Սիման, կատուի պէս կերակուր կ'առնէ եւ հիւզակ կը փախչի: Սաթիկն իմ քոյրիկս է, իմ քովս պիտի մնայ:

— Գիտեմ, գիտեմ, հրեշտակս, եթէ բոլոր մայրիկներն ալ մեռնէին, դուն ամէնքը քովդ կը հաւաքէիր սիրտդ կը բաժնէիր:

Շարաթ մը հազիւ անցած էր Երանուհիի մահէն, Սաթիկ արգէն մոռցած էր թէ մեծ մայրիկ ունէր. հի-

մա աւելի երջանիկ էր. Սեդոյ իրեն հետ կը զուարճանար, կերակուր կու տար եւ գիշերը Սրբուհիին մէկ կողմը ինքը, միւս կողմը Սաթիկ կը պառկէին:

Կարծես թէ բակին կեանքը սովորական դարձաւ, մահը եկաւ ու դնաց, բայց ուրիշ մէկ տխուր մահ մը շատ խոռոկեց Սեդոն ու Միսաքը: Էջը սատկեցաւ: Առաւօտ մը Միսաք կանուխ ելած էր մեծաքանակ շուկան երթալու եւ աժան նարինջ գնելու: Անասունը կռնակին վրայ տարածուած էր. բոպիկ ոտքերը օդին մէջ. ափ մը խոտ բերանը, եւ լեզուն գրեթէ կէս մեզը դուրս կախուած:

— Վա՛խ, վա՛խ, ա՛խ, ա՛խ, ըսաւ Միսաք ու տըզու պէս լացաւ:

Նայեցաւ տխուր աչքերով. իշուն գլուխը բռնեց եւ կողին վրայ տարածեց:

— Այսպէս աւելի հանդիստ կ'ըլլաս:

Երկար մտածելու պէտք չկար թէ ո՛ւր պիտի թաղէր անոր դիակը: Ձգեց ախոռին անկիւնը. արգէն հոն մարդ չէր մտներ. եւ ինքը դնաց բակը: Տրտում էր, բոլորն հասկցան թէ Միսաք ցաւ մ'ունէր:

— Իշուկը ո՞ւր ձգեցիր, հարցուց Սեդոյ:

— Մի հարցներ Սեդոյ. երբ տուն մը մահը մտնէ՝ մէկ հատով չի գոհանար. էջը սատկեցաւ այս գիշեր:

Սեդոյ սաստիկ լաց մը բռնեց, կարծես Միսաքէն աւելի կապուած էր այդ ծեր եւ բարի անասունին:

— Հիմա ի՞նչպէս նարինջ պիտի ծախենք, Միսաք քեռի, հարցուց տխրութեամբ:

— Պարկ մը ես կը շարկեմ, քանի մը հատ ալ դուն կը շարկես, կը տանինք կը վաճառենք:

Տղան համոզուեցաւ, կրնային քիչ մը դրամ վա-

տըկիլ թէ՛ հազուստի եւ թէ՛ գէթ կիրակի օրերը բակին կտոր մը միս տալու:

Միսաք երեկոյեան մութին, իշուն դիակը ճիշտ ախոռի դրան առջեւ քաշեց, սուրոց մը տուաւ եւ ահա բազմութիւն մը թափառական շուներու սատակին վրայ թափեցան: Ինքը դնաց իր խշտեակին վրայ գիշերն անցընելու. դուրսը հաջոց, կաղկանձում եւ շուներու կռիւ կար:

— Խեղճ էջս, մահուամբ ալ ուղեցիր անօթիներ կշտացնել, խորհեցաւ տխրութեամբ:

Առաւօտեան ոսկորներն հաւաքեց տարաւ դաշտերը նետեց եւ այդ օրը նարինջ ծախելու չգնաց, սուգ բռնեց:

Միւս առաւօտ Սեդոյին հետ մեծ շուկայէն նարինջ գնեց, պարկ մը ինքն առաւ շալակը, փոքրիկ պարկ մը պտտիկին տուաւ: Սեդոն բոպիկ ոտքերով, բաճկոնին մէկ թեւը պակաս, բայց կայծկլտուն աչքերով դարձեալ սկսաւ իր գիլ ձայնը ձգել փողոցէ փողոց.

— Հայճայի նարինջ, անո՛յն նարինջ...:

Սեդոյ իր պարկին մէջ հազիւ տասէն տասներհինգ նարինջ ունէր, բայց վեց տարեկան փոքրիկի մը համար արգէն շատ էին. քիչ մը հեւալով եւ ծանր քայլերով կը չափէր փողոցները. ձայնը մետաղի պէս կը հնչէր:

— Միսաք քեռի, հարցուց մանչուկը, պարկը դեմ տին գնելով, պիտի կարենա՞նք քիչ մը բան ծախել, բաւական քալեցինք եւ գնող մը չեղաւ:

— Օրերն իրարու չեն նմանիր, Սեդոյ, երբեմն լաւ, երբեմն գէշ կ'երթան, յուսանք թէ բոլորն ալ վաճառենք: Դուն յոգնեցա՞ր, բեռդ ծա՞նր է, տուր ես շարկեմ:

— Չէ, քեռի, դուն արդէն իշուկէն աւելի բեռ կը տանիս:

Պատ-էլ-Պարաճ հրապարակին վրայ հասան, հոն խիտ էր բազմութիւնը, պէտք էր հրելով անցնել, շատ անդամ պզտիկին կը զարնուէին, եւ նա ուռնիի ճիւղի պէս կը ծռէր:

— Հայֆայի նարինջ, անոյշ նարինջ, դարձեալ լըսուեցաւ պզտիկին ձայնը:

— Չայնիդ մեռնիմ, յանկարծ ըսաւ պառաւ մը, որ շուկայ կ'երթար. հրեշտակի բերան է: Ի՞նչ կը վաճառես պզտիկա, հարցուց Սեդոյին:

Տղան չհասկեցաւ, կինն արարեքէն հարցուց. աչքերը Միսաքին դարձուց, կ'ուզէր գիտնալ թէ պառան ի՞նչ կ'ըսէր:

— Սեդոյ, կը հարցնէ թէ ի՞նչ կը ծախես:

— Նարինջ, մամի, ըսաւ պզտիկին հայերէն:

— Էրմենի է, ըսաւ պառաւը, քու զաւա՞կդ է, հարցուց Միսաքին:

— Ո՛չ, որբեւայրի մայր մ'ունի, հիւանդ կին մը, մէկ թեւը չորցած է, իր մայրը պահելու համար նարինջ կը ծախէ:

— Հիանալի պզտիկ, եթէ մերիններն ըլլային, փողոցին մէկ անկիւնը կեցած կը մուրային անցորդներուն փէշերէն կախուելով:

Կինը բաւական մաքուր հագուած մէկն էր, հանեց զըպանէն երեք զահեկան եւ տղուն տուաւ:

— Նարինջներդ ես կը գնեմ, ըսաւ:

— Միսաք քեռի, ամբողջը տա՞մ:

— Տուր, երեք զահեկանով իմ շալկածս ալ կրնայ գնել:

Տղան փոքրիկ ձեռքերով մէկիկ մէկիկ հանեց պըտուղները եւ պառաւին պարկին մէջ լեցուց:

— Տասը հատ կը բաւէ, տղաս, մնացածը գնա՛ ուրիշին ծախէ, ըսաւ կինը: Եթէ հազար թալէաթ, հազար էնվեր ալ գան՝ ձեզ չեն կրնար անճիտել, մըմուսայ ինքն-իրեն. դրողը տանի:

— Միսաք քեռի, քու բեռդ ծանր է, տքալով կը քալես, քանի մը հատ տուր ես վերցնեմ, ըսաւ Սեդոյ:

— Չէ, տղաս, բախտը քուկդ է:

Սեդոյ ինքզինքը շատ թեթեւ դրաց. ոյժը ձայնին տուաւ, որբուն եղանակով սկսաւ կանչել.

— Հայֆայի նարինջ, անոյշ նարինջ, շաքար նարինջ:

— Ալլահ, Ալլահ, յանկարծ պոռաց դիմացէն մէկը. այս կեաւունները մեր հացը ուտելու եկեր են:

Նարինջ վաճառող մէկն էր, էջը կեցուց եւ Սեդոյին պարկը ձեռքէն խլեց ու գետին նետեց, կոխկրտեց նարինջները: Տղան ուժգին լացաւ: Միսաք իր պարկը գետին դրաւ եւ կից մը տուաւ մարդուն իչուն փորին որ գնաց եւ գետին պառկեցաւ, ապա երկուքը ձեռք ձեռքի եկան: Միսաք ուժով էր, բայց դիմացինն աւելի կը պոռար: Բազմութիւն մը թափեցաւ:

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ կը կռուին:

— Այս անհաւատներն եկեր մեր հացը կ'ուտեն, թող անապատ երթան սատկին, պոռաց իշապանը:

Սեդոյ սաստիկ վախցած, Միսաքին քղանցքէն բըն-նած էր եւ կու լար:

— Այս չար սիրտ մարդը խեղճ պզտիկին քանի մը նարինջները գետին նետեց եւ ոտքի տակ առաւ, պատասխանեց Միսաք, մարդուն օձիքէն ուժով բռնած:

— Չորս նարինջի համար, ըսաւ մէկը պարկը վեր-
ցընելով. չորս նարինջի համար աղքատ տղայ մը ա-
ւելի թշուառացնել, թերեւս այսօր պատառ մը հաց չու-
նի ուտելու համար:

Բաժնեցին կռուողները:

— Քու գաւա՞կդ է, հարցուցին Միսաքին:

— Ո՛չ, այրի եւ հիւանդ մայր մ'ունի, հետս առի
որ քանի մը դուրուչ վաստակի եւ իր մօր պատառ մը հաց
տանի:

— Անամօթ, պոռաց ծերունի մը, ես քեզ կը ճանչ-
նամ, դուն տանդ մէջ ոսկիներ թաղած ես եւ աչք կը
տնկես աղքատ տղու մը չորս նարինջին՝ վրայ:

— Սուտ ես, ես աղքատ եմ, ոսկիներ չունիմ, պո-
ռաց իշապանը:

— Ալլահը վկայ, ըսաւ ծերունին, եթէ հիմա մէջ-
քի գօտին քակէք, մէջէն ոսկիներ կը թափին:

Երիտասարդ մը քաշեց անոր մէջքի գօտին եւ չորս
հատ դեղին ոսկիներ վար ինկան:

— Տեսա՞ք, ըսաւ ծերունին. արժանի չէ՞ շան պէս
սատկելու:

Իշապանը դետին փոռեցաւ ոսկիներն հաւաքելու,
սակայն մէկ հատ իր ձեռքն անցաւ, երկուքը փախցու-
ցեր էին, մէկ հատը երիտասարդ մը ծերունիին յանձ-
նեց:

— Տո՛ւր ոսկիս, պոռաց իշապանը կատղած:

— Այս ոսկին այդ փոքրիկին կը պատկանի, դուն
իր պատառ մը հացը բերնէն խլեցիր, աղքատին հացը
սուրբ է, թանկագին է: Առ տղաս, ըսաւ Սեդոյին, դը-
րամը տղուն ափը դնելով:

— Միսաք քեռի, այս ի՞նչ դրամ է:

— Ոսկի է, Սեդոյ. այդ չար մարդուն գօտին մէ-
ջէն ելաւ:

— Ես ուրիշին դրամը չեմ ուզեր, պատասխանեց
պղտիկը, իմ նարինջներս կ'ուզեմ:

Սեդոյ ոսկին իշապանին տուաւ:

— Ա՛ռ քու դրամդ եւ իմ նարինջներս տուր, ըսաւ
իր բարի ձայնով:

— Ինչո՞ւ ետ տուաւ, հարցուց ծերունին:

— Ուրիշին դրամը չեմ ուզեր կ'ըսէ, բացատրեց
Միսաք, իր չորս հատ նարինջները կ'ուզէ:

— Կը տեսնե՞ս, աւելի կատղեցաւ ծեր մարդը, կը
տեսնե՞ս ինչ հոգի ունի, եւ դուն այս խեղճ տղուն պա-
տառ մը հացին աչք տնկած էիր:

Իշապանը քար կտրեցաւ, ինքն ո՛ւր, այդ պղտիկն
ո՛ւր, երկինքէ երկիր տարբերութիւն կար: Իր ձեռքով
իշուն վրայի պարկէն բաւական շատ նարինջներ հանեց
եւ տղուն պարկին մէջ դրաւ:

— Ես այս էչէն տարբերուն չունիմ, ըսաւ ինքն-
իրեն, անասուն եմ:

Սեդոյ իր պարկէն դուրս հանեց նարինջները եւ
մատներով ցոյց տուաւ:

— Չորս հատ էին, ըսաւ, ասոնք քուկդ են:

— Եկուր հաշտուինք, ըսաւ իշապանը Միսաքին եւ
ձեռքն երկարելով սեղմեց անոր ձեռքը: Յետոյ ոսկին
հանելով գօտիէն տուաւ Սեդոյին:

— Ա՛ռ, տղաս. ես քեզ չէի ճանչնար, դուն դիս
դետին դամեցիր. ես մարդ չեմ: Գնա՛ վրադ գլուխդ
շտկէ, այսօր եւ վաղը կուշտ հաց կեր թշուառ մօրդ
հետ: Ալլահը (Աստուած) ինձի այնպիսի խրատ մը տը-
լաւ որ կեանքիս մէջ պիտի չմոռնամ:

Ամբոխը ցրուեցաւ եւ երկու նարնջավաճառներ,
մէկը մէկ մայթին վրայ, միւսն ալ իշով միւս մայթին
վրայ սկսան պոռալ:

— Նարինջ, Հայֆայի նարինջ, անոյշ նարինջ,
չաքար նարինջ:

Սեղոյ ձայնը դարձեալ փողոցները բռնեց. անցնո-
ղը կանդ կ'առնէր, լսելու համար այդ մատղաշ սո-
խակը:

— Հնձի նարինջ մը տուր, ըսաւ մէկը, ինձի ալ
տուր, աւելցուց ուրիշ մը եւ քանի մը վայրկեանի մէջ
պզտիկին պարկը պարպուեցաւ դարձեալ:

— Քանի՞ դուրուշ վաստկեցայ, հարցուց Սեղոյ:

— Երեք դահեկան, քառասուն դուրուշ, պատաս-
խանեց Միսաք:

— Այն բարի մարդուն ալ պիտի երթա՞նք, հար-
ցուց Սեղոյ:

— Ո՛չ:

— Ես կ'ուզեմ երթալ շնորհակալ ըլլալ, Մարիա-
մին, Սաթիկին եւ Վարդունին կողմէն. դիտես թէ որ-
քան ազուոր եղան իր տուած զգեստներն հազուելով.
Ես կ'ուզեմ ձեռքն համբուրել եւ շնորհակալ ըլլալ:

Միսաք լաւ չէր ձանձնար այդ հարուստին տունը.
Քիչ մ'ալ չըջեցան:

— Հո՛ն, հո՛ն այդ դիմացի տունն է, ըսաւ Սեղոյ
եւ դէպի այն կողմը վազեց:

Տան դուռը դոց էր, չախչախը շատ բարձր էր, Սե-
ղոյ չէր հասներ զարնելու համար:

— Դուռը դոց է, Միսաք քեռի, ըսաւ տրամու-
թեամբ:

— Սեղոյ, դնա՛ իր դրան մօտ եւ Հայֆայի նարինջ
կանչէ, թերեւս լսէ ձայնդ:

Տղան դիւ ու կերկերուն ձայնով կանչեց. այնպիսի
անոյշ շեշտ մը դրաւ որ կարծես քարերը լեզու պիտի
ելլէին, շատ պատուհաններ բացուեցան, աչքեր ինկան
իր վրայ. հարուստ մարդն ալ բացաւ իր պատուհանը եւ
պզտիկին հետ աչք աչքի հանդիպեցան: Բայց հարուստ
Ֆեթթեւին իր յօնքերը պոստեց, թթու դէմք առաւ, եւ
սճապարանքով փողոց իջաւ:

— Ո՞ւր են այս պզտիկին տուած հազուստներս,
ըսաւ Միսաքին խիստ շեշտով, անշնորհք մարդ, դուն
առիւր եւ ծախեցիր, խմելու համար:

Սեղոյ մօտեցաւ եւ մարդուն ձեռքը բռնելով շրթ-
ներուն տարաւ, շա՛ի, ուժով մը համբուրեց, յետոյ
սիրուն աչքերը մարդուն դարձնելով ըսաւ.

— Վարդունը, Սաթիկը, Մարիամը շատ շնորհա-
կալ են:

— Ի՞նչ կը՛սէ այս փոքրիկը:

— Եկած է ձեզի շնորհակալ ըլլալու, պատասխա-
նեց Միսաք:

— Բայց ինքը մերկ է, պատուտած է, տուածներս
ի՞նչ եղան, հարցուց խստութեամբ:

— Բակի մերկ պզտիկներուն նուիրեց:

Սեղոյ մարդուն ձեռքէն բռնած կը ժպտէր, մեղք
որ լեզուն չէր հասկնար:

— Միսաք քեռի, ասոնք ինչո՞ւ քրիստոնեայ լեզու
չեն խօսիր, չեմ հասկնար:

— Նարինջներդ տունս յանձնէ եւ բակ երթանք,
կ'ուզեմ ճշմարիտը դիտնալ, ըսաւ հարուստը:

Միսաք պարկով դրան ետեւ դրաւ նարինջները եւ
Ֆեթթեւին հետ բակը դնաց: Հազիւ ներս մտան, Սե-
ղոյ հեռուէն կանչեց.

— Մարիամ, Վարդուն, Սաթիկ... եկէք այն բարի մարդը տեսէք:

Սաթիկ Սեդոյին հիւղակին առջեւ պուպրիկին հետ կը խաղար. Մարիամ եւ Վարդուն խփոյն դուրս ելան հիւղակներէն, բայց քիչ մը ամչցան, ուղեցին պահուելու:

— Եկէ՛ք, եկէ՛ք, պոռաց Սեդոյ, ասիկա բարի մարդ է:

Երկու աղջնակները մարդուն ձեռքն համբուրեցին, հիւղերէն դուրս ելան պառաւներն ալ, սեմին վրայ կայնած, հետաքրքիր դիտեցին եկուորը: Սաթիկ իր պուպրիկը զրկած մարդուն քով դնաց:

— Ասիկա Սիմա կը կոչուի, ըսաւ մանկունակ, իմ քոյրիկս է, դեռ խօսիլ չի դիտեր:

Փեթթելը մէկիկ մէկիկ դիտեց տասներկու հիւղակներ, տասներմէկ պառաւներ. հիւղե՞րն աւելի մաշած էին թէ հէզ կիները, կարելի չէր զանազանել:

— Այս պզտիկը մօրը կաթին հետ սորված է բարիք ընել: Ո՞րն է իր մայրը:

— Այս դիմացի կիներն է, ցոյց տուաւ Միսաք:

Փեթթել առաջ դնաց եւ Սրբուհիին ձեռքը բռնեց, կիներ ամչցաւ ետ քաշուեցաւ:

— Տո՛ւր ձեռքդ, ինձ պատիւ է զայն սեղմել. դուն սովորական դաւակ մը չես մեծցուցած, այլ հրեշտակ մը աշխարհ բերեր ես: Միւս ձեռքդ ի՞նչ եղեր է, հարցուց:

— Երկրին մէջ սուրով զարկեր եւ ջիղերը կտրեր են, հիմա չորցած է, պատասխանեց Միսաք:

— Հասկցայ, լաւ էր իրենց վիզերը կտրէին:

— Ասիկա մեր տունն է, ասիկա Սաթիկն է, մեծ մայրը մեռաւ եւ ես քովս առի, ըսաւ Սեդոյ:

Միսաք բացատրեց տղուն ըսածները: Չէր կրնար երեւակայել թէ ինչպէս այսքան պզտիկ մանչուկ մը այնքան մեծ հողի կրնար ունենալ:

Նա շրջան մ'ըրաւ հիւղակէ հիւղակ, թշուառութիւն եւ տառապանք տեսաւ, զգածուած էր. յետոյ դառնալով Միսաքին հարցուց:

— Ո՞վ հող կը տանի այս խեղճերուն, մէկն ունի՞ր որ վարէ այս ճամբարը:

— Քանի մը հին դաղթական Կիւրինցիներ կան որ քիչ մը ճարպ, կամ ուղտի միս եւ կանաչեղէն կը զըրկեն, անով կը շատանան, ունինք տիկին մը՝ որ դաշտին վարիչն է:

— Կանչեցէք ինձ այդ տիկինը:

Սեդոյ վազեց եւ կանչեց տիկին Երանուհին: Ճամբարի տեսչուհին թէպէտ շատ համեստ հագուած էր, սակայն դեռ կը պահէր իր թարմութիւնը եւ վրան շրնորհք կար: Հարուստը տեղեկութիւններ առաւ ապրուստի մասին եւ ապա ըսաւ.

— Ես որոշած եմ, այս պզտիկի սիրոյն համար ճամբարին յատկացնել ամիսը տասը ոսկի. ահաւասիկ առաջին վճարումը: Ամէն ամսու գլխուն այս պզտիկը թող գայ եւ այդ պարոնին հետ դրամը առնէ: Գէթ կըրնաք քիչ մ'աւելի բան ուտել, եւ մերկերն հագուեցնել:

— Եստ շնորհակալ ենք, բայց տասն ոսկի շատ է մեզի համար, մենք ոչինչով ալ կ'ապրինք. խոշոր դուժար է, պարոն. դիտեմ թէ ձեր սիրտն աւելի մեծ է: Մէկ ծաղիկով դարուն չի դար կ'ըսեն, բայց այս պզտիկ ծաղիկը մեզի համար ամէնէն դեղեցիկ դարունը բերաւ:

— Թերեւս աւելի սեւ օրեր տեսնէք. թրքական ճակատը Արարայի դիմաց խորտակուեր է եւ կ'ըսեն թէ

հայկական լեզունը մահացու հարուած տուեր է, պարտուած բանակը կրնայ Հալէպ հասնիլ եւ վա՛յ անոր հանդիպողին :

Դող մ'անցաւ սրտէ սիրտ, գիտէին ինչ օրեր անցուցեր են, ինչ սեւ ջուրեր կտրեր էին :

— Բայց ես պիտի ջանամ ձեզի օգտակար ըլլալ, իմ պապերս Սերաստացի էին. ես հիմա յոյն եղեր եմ, արարեքն լեզուն միայն գիտեմ. ես ալ քրիստոնեայ եմ :

Թրքական բանակին լուրը շատ վրդովեց խեղճ մայրերը. անոնք գիտէին թէ ով կու դար, ինչ մարդիկ էին : Ո՞ւր փախէին, ո՞ւր ապաստանէին, թռչունը բոյն ունի, իրենք տեղ չունին, աշխարհս լայն է, իրենք գըլուխ դնելու քար մ'իսկ չունին : Մայրերն իրար մօտ եկան, ցաւ ցաւի խառնեցին, զրոյց զրոյցի կապեցին : Ո՞ր ծակը մտնէին, ո՞ր տան դուռը դարնէին, լսեր էին թէ երկու տարի առաջ Հալէպի մէջ հազարաւոր Հայեր կային, անապատ քրուած էին եւ մէկ հատ ողջ չէր մընացած : Ինչ սեւ հողի էր որ անոնց ետեւէն ինկած էր, որո՞ւ մեղանչած էին, ի՞նչ ոճիր գործած էին : Պառաւնեւուն կեանքը հաշիւի չէին առներ, ամէն մայր կամ մամիկ իր ձագուկը կը խորհէր :

— Մի՛ սարսափիք, ըսաւ Ֆեթթելը, ես ճար մը կը խորհիմ, դեռ հեռու են, կրնայ ըլլալ որ այս քաղաքէն չանցնին : Յետոյ դառնալով Միսաքին, այս փոքրիկն առ եւ հետս չուկայ եկուր :

Հարուստ հալէպցին, Սեդոյին վրայ գլուխը շրտկեց. կարմիր բաճկոն մը, կապոյտ տարատ մը, շապիկ, գուլպայ եւ կօշիկ առաւ : Սափրիչի մը տարաւ մազերը գեղեցիկ կտրել տուաւ, լուացին երեսը եւ բակին պզտիկը տանապատիկ գեղեցկացաւ : Նա ժպտեցաւ աստղի նման :

— Ասոնք ի՞նչ են, Միսաք քեռի, հարցուց ուրախութեամբ :

— Այո՛, քուկդ են, համբուրէ բարի մարդուն ձեռքերը :

Բայց Սեդոյ բացաւ իր բազուկները գրկեց այդ ազնիւ հողին եւ ջանաց երեսն համբուրել. նա բարձրահասակ էր, բայց տղան կախուեցաւ անոր թեւերէն եւ մարդն հաճոյքով վար ծռեցաւ, տուաւ իր թուշերը, երկու վարդազոյն շրթունքներ փակեցան անոնց : Նոր հազուատներէն աւելի գեղեցիկ էր այս համբոյրը :

— Հալէպի անոյշ կերե՞ր ես, հարցուց պզտիկին :

— Ո՛չ, չեմ կերած, համո՞վ են, մամայիս չինածնեւուն կը նմանի՞ն : Մեր տունը անուշեղէն շատ կ'ուտէի, հիմա կաղամբէ ապուր միայն ունինք :

Ծագաւաճառին տարաւ :

— Ա՛ռ, կեր ուղածիդ չափ, ըսաւ Ֆեթթել :

— Ո՛չ, պատասխանեց, բակին մէջ Մարիամը, Վարդունը, Սաթիկը եւ դեռ ուրիշներ երբեք անուշեղէն չեն ուտեր, երեք հատ կ'առնեմ եւ իրենց կը տանիմ, առանց իրենց ձեռքս բերանս չ'երթար :

— Դուն առ եւ կեր, ես անոնց ալ կու տամ :


— Դուն շատ դրամ ունի՞ս, հարցուց Սեդոյ :

— Ունիմ, տղաս, խնդաց Ֆեթթել. Աստուծոյ տրուածէն շատ ունիմ, պատասխանեց :

Սեդոյ խոշոր անուշեղէն մ'առաւ եւ երկու ձեռքով բերանը տարաւ :

— Ի՞նչ համով է, ըսաւ բերանը լեցուն :

Բակին պզտիկը կշտացած եւ ձեռքին մէջ անուշեղէնի մեծ ծրար մը, գեղեցիկ հազուած բակը դարձաւ, բոլորն իրեն նայեցան, նա վազեց մայրիկին :



Յաջորդ առաւօտ բակին մէջ երկու բուրբ զինուորներ տեսան...

Երթաս սիրտ մը պիտի տանիս հետզ որ ես աշխարհիս հետ չեմ փոխեր:

Անշուշտ Սեդոյ բան մը չհասկցաւ Երանուհիին խօսքերէն:

— Երանուհի մայրիկ, նարնջավաճառ մը ինձ դեղին դրամ մը տուաւ, մամայիս քովն է, կ'ըսեն թէ շատ դրամ է, եկուր քեզի տամ որ կիրակի աղուոր ճաշ պատրաստես մամաներուն:

Կիրակի օր ոչխարի խորոված կերան, ճերմակ հաց դնեցին, մատ մը կարագ ինկաւ ամէն մէկուն. Սեդոյ կարագով հացն այնքան ախորժակով կերաւ որ քիթ բերան իւզոտեցան, բոլորը վրան կը խնդային. մայրը սրբեց տղուն երեսը, շրթներն ու քիթը մաքրեց:

— Միտաք, ըսաւ տիկին Երանուհի, կարծեմ ասկէ վերջ աւելորդ է նարինջ վաճառելու երթաս, քիչ մը դրամ ունինք, դուն գնա՛ շուկայէն մեզի պէտք եղածը դնելու. Կիւրինցիներուն զրկածն ալ կը միացնենք եւ ամէն օր ապուրին հետ կտոր մը միս ալ կրնանք ուտել:

Բակին կերպարանքը կարծես փոխուեցաւ, իրենց համար ալ արեւ կը ծագէր, իրենց համար ալ բնութիւնը սնունդ կը հասցնէր եւ Աստուած մարդերուն սիրտերը կը շարժէր այդ թշուառներն հողայու:

— Ա՛հ, յանկարծ սուր ճիչ մը լսուեցաւ 7 թիւ հիւզակի քովէն, բոլորն այն կողմը դարձան, պառաւները հիւզակներէն դուրս թափեցան ջաղացքի ալիւրի նման: Ի՞նչ կար, ի՞նչ ճիչ էր: Եւզինէ մայրիկին ոտքն իր հիւզակի սեմին առած էր եւ կոնակին վրայ լեցուն պարկի պէս դետին փռուած էր. միայն սուր ճիչը լրսուեցաւ եւ պառաւը զգայազիրկ դետին տարածուած, գրեթէ շունչ չէր առներ: Մայրիկները վազեցին, բոլորն ալ բժիշկ դարձան, մէկը օձիքը քակեց, միւսը

կոնակը չփեց, ուրիշ մը տաք ձէթ բերէք պոռաց, բայց տասնըմէկ պառաւ ոյժ չունէին զայն վերցնելու եւ իր խշտեակին վրայ տարածելու:

— Միսաք, Միսաք, կանչեցին:

Միսաք պառաններու օգնութեամբ վերցուց այդ գրեթէ անշունչ դիակը: Եւզինէ երկու օր պայքարեցաւ մահուան դէմ, բայց կողը կոտրած էր եւ թոքերը սեղմուած՝ թոյլ չէին տար ուժայ մը շունչ առնելու: Իր աղջիկը Սիմա չէր հասկնար թէ ինչ պատահած էր. մայրիկին մօտ նստած հետը կը խօսէր, միամիտ հարցումներ կ'ընէր եւ Եւզինէ չէր պատասխաներ. նա աչքերը բաց՝ անորոշ նայուածք մ'ունէր, որ ժանդոտ թիթեղներէն անդին չէր անցներ:

Թէպէտ պառաւ Եւզինէն չէր սիրուած, բայց մահն այսօր քեզի՝ վաղն ինձի համար էր, տրտում էին: Այդ կիներ զաղտնի բան մ'ունէր, միշտ իր հիւզակին մէջ, տժգոհ եւ տրտոացող, միշտ մէկուն կամ միւսին հետ խնդիր մ'ունէր եւ Սեդոյ գինքը չէր սիրեր, իր աղջնակին թոյլ չէր տար միւսներուն հետ խաղալ, մտերմանալ: Ի՞նչ ունէր, ի՞նչ պատահած էր որ միշտ կասկածոտ չորս կողմը կը նայէր, թոյլ չէր տար որ իր հիւզակը մտնէին, գրեթէ մէկուն հետ չէր խօսեր:

— Յաւերը պատմելով կը թեթեւան, ըսաւ Դ թիւ հիւզակին Համաս մայրիկը, բայց այս կիներն իր ցաւերը սրտին մէջ պահեց եւ խխունջի պէս քաշուեցաւ իր պատեանը:

Եւզինէ մայրիկը մեռաւ. կիներն ողբացին զինքն ալ, ծեծեցին իրենց կուրծքերը եւ միասին ձայն տալով լեցուցին բակը:

— Մէկն ալ դնաց, ըսաւ Սրբուհի. մնացինք տասն հոգի, սրբեց աչքերը զլիսուն կարմիր լաթով:

Տիկին Երանուհի շատ անգամ դնաց եկաւ, բժիշկ չունէին, Աստուծոյ յանձնուած էր իրենց կեանքը եւ Աստուած մարդերու կեանքը տարբեր ձեւով կը շափէ:

Տիկին Երանուհի լաւ մը քննեց Եւզինէին հիւզակն ու վրան, յանկարծ ձեռքը կարծր բանի մը հանդիպեցաւ, մէջքի լաթին մէջ խնամքով կարուած բան մը կար, քակեց կարը եւ տասը հատ դեղին ոսկիներ դուրս հանեց:

— Տասը հատ դեղին ոսկիներ, ըսաւ բարձրաձայն, ազահուրիւնը մարդս մարդուն թշնամի կ'ընէ: Այս կինը կրնար մեր ճամբարը քանի մը ամիս ապրեցնել, բայց պնակ մը անհամ ապուրի համար կուլ կ'ընէր, կը մըրմըռար: Աշխա՛րհ, աշխա՛րհ, քեզ ոչ ոք զեռ հասկցեր է, ըսաւ ինքնիրեն:

Ուրիշ զրպանի մը մէջէն դեղնած թուղթ մը գըտան, նամակ մ'էր, աւելի հասցէ մը: Փարիզի մէջ իր եղբոր տղան կար. Գաբրիէլ Մինասեան, փողոց Լա Մարթին, թիւ 7:

Երանուհի խնամքով պահեց հասցէն, թերեւս օր մը Սիմային համար օգտակար ըլլար: Տարին թաղեցին Եւզինէն ալ, իր ետեւէն Սեդոյ եւ Սիմա մէկ մէկ մոմ առած գացին, միակ յուզարկաւորները, միակ լացողները պառաւ Եւզինէի համար որ իրեն հետ կը թաղէր նաեւ հէզ Սիմայի նորածաղ արեւը: Սեդոյ ինքն ալ ափ մը հող նետեց անոր գերեզմանին վրայ:

— Դուն ալ հող ցանէ, ըսաւ Սիմային, որ մամիդ վաղը կանաչնայ եւ աւելի դեղեցիկ տուն դառնայ:

Երբ բակը վերադարձան, Սիմա վաղեց իրենց հիւզակը, պատերը զրկեց, սիւներուն պլլուեցաւ.

— Մամի, մամի, շուտ տուն եկուր, ես մինակ եմ:

Որո՞ւ այնձնէին այդ աղջնակը որ երբեք ընկերու-
թիւն չէր ըրած, որ մէկուն հետ չէր ժպտած, գրեթէ
չէր ճանչնար բակին պղտիկները: Սիմա իր բարձին տա-
կէն հանեց հինցած, դեղին լուսանկար մը, նայեցաւ եւ
համբուրեց իր հայրն ու մայրն էին, երբ Կիւրինի մէջ
հարուստ ու երջանիկ էին. հայրը կուրծքէն կախած էր
ոսկի շղթայով ժամացոյց մը, մայրը ոսկիէ երկար վըզ-
նոց մ'ունէր եւ մատներուն վրայ թանկագին մատանի
մը: Հիմա խեղճ աղջնակ մը մնաց այդ ամէնէն եւ ա-
նոր ձեռքին մէջ դեղնած լուսանկար մը:

Սեզոյ շատ ազաչեց իր մօրը որ Սիման ալ իրենց
հիւղակը բնակի, բայց Սրբուհի խիստ կերպով դէմ կե-
ցաւ.

— Երեք հոգի ենք տղաս, պատասխանեց. ոտքեր-
նիս երկնցնելու տեղ չունինք, ո՞ւր դնեմ Սիման:

Տիկին Երանուհի յարմարցուց որ Սիման 10 թիւ
հիւղակի Մարիամին մօտ մնայ, բայց շատ դժուար ե-
ղաւ այդ քիչ մը վայրի աղջնակն իր հիւղակէն դուրս
քաշել եւ 10 թիւին մէջ տեղաւորել: Սեզոյ շաքարեղէն
տուաւ, նա գետին նետեց.

— Չեմ ուզեր, մամին կ'ուզեմ, ըսաւ քիթը կախ:

— Սիմա երբ բարի ըլլաս, մամին կու գայ, պա-
տասխանեց Սեզոյ:

Կամաց կամաց Սեզոյ յաջողեցաւ Սիմայի սիրտը
դրուել, միշտ հետը խաղաց, շաքար տուաւ, ճաշի ժա-
մանակ ինքը կերակուր տուաւ: Մարիամ մեծ քոյրիկ
եղաւ: Տիկին Երանուհի սիրուն հազուստ դնեց, եւ
Սիմա կարծես աւելի երջանիկ եղաւ, քան թէ ազահ
մօր մը ձեռքին տակ:

Բակին կեանքը մտաւ իր սովորական ճամբուն մէջ,
իւրաքանչիւր փոքրիկին համար մարդավարի հազուստ-

նէր դնեցին, մերկ սրունքներով, կողերը բաց մանչուկ-
ներ կամ աղջնակներ չկային: Ո՛վ պիտի երեւակայէր
թէ այդ փոշիին, մուրին եւ քուրջերուն մէջ պլլուած
փոքրիկները մանուշակի պէս սիրուն էին, վարդի պէս
դեղեցիկ եւ ազնուական ցեղի մը նրբութիւնը ծածկուած
էր փոշիի ստուերներուն տակ: Հիմա քիչ մ'արեւ կը
տեսնէին, արեւն իրենց կը ժպտէր եւ իրենք արեւուն
կը ժպտէին: Պատուները թերեւս շուտով բաժնուէին
աշխարհէս, բայց փոքրերը պիտի ծաղկէին Հայութեան
սուրբ անդաստանին մէջ եթէ մէկ երկու ամիս յետոյ
ասաւոր փոթորիկ մը չգար ու զիրենք չհալածէր վայ-
րենի որսորդներու նման:

Սակայն մայրիկները դառն մտածութեան մէջ էին.
եթէ յանկարծ հասնէր թրքական բանակը, եթէ բակ
մտնէին եւ իրենց սրտերէն փրցնէին այդ ծաղիկները,
մահէն աւելի մահ պիտի ըլլար իրենց համար: Քովէ
քով կու գային, տրտում իրար երես կը նայէին, ցաւով
կը խօսէին, լացով հիւղակ կը դառնային:

Ամիս մը չանցած, Միսաք քեռին գունատ եւ աճա-
պարանքով բակ մտաւ.

— Տիկին Երանուհի, ըսաւ բռները կորսնցնելով,
քաղաքին մէջ չփոթութիւն կայ. թրքական բանակին
ծայրն արդէն փողոցները մտած է. ժողովուրդը սար-
սափահար տուններուն մէջ փակուած է. ի՞նչ պիտի ըլ-
լայ մեր վիճակը:

— Լաւ լուր է, Միսաք, պատասխանեց Երանուհի,
թերեւս մեր դողգոթային վերջին սանդուղն հասանք.
բանակին ետեւէն յաղթողը պիտի գայ, չեմ կարծեր որ
պարտուած բանակն երկար մնայ. բայց մենք պէտք է
պահուրտինք տեղ մը:

— Ո՞ւր:

— Բաժնուհիլ տուներու մէջ:

— Մայրերուն լուր տալու է, ըսաւ Միսաք:

— Ուուճապ կը ստեղծենք, բայց ուրիշ կերպ ալ կարելի չէ ընել:

Երբ մայրերը լսեցին, ահաւոր վայնասուն մը փըրթաւ բակին մէջ: Մանուկներն ուրախ կը խաղային, բայց մայրերը կու լային: Իւրաքանչիւրն իր փոքրիկը կանչեց եւ քղանցքներուն տակ առաւ:

— Մամի, ի՞նչ կայ, հարցուց Սեդոյ:

— Չար մարդիկ եկեր են, տղաս. պէտք է փախչիլ այս բակէն:

— Ամէն ոք, հրամայեց Երանուհի, իր հիւղակին դուռը բաց ձգէ եւ անոր ետեւը պահուրտի: Ոչ մէկ ձայն, ոչ մէկ լաց, բացարձակ լռութիւն պէտք է: Հիմա տաք եղանակ է, կրնաք զիշերն ալ բացօթեայ մընալ: Կը յանձնարարեմ ոչ մէկ ձայն կամ ողբ, մեր կեանքը մազէ մը կախուած է:

Սեդոյ հետաքրքիր հիւղակին ետեւէն բակը կը նայէր եւ ետ կը փախչէր. մարդ չկար. եկող չկար: Միսաք քեռին իր ախոռն ապաստանած էր. Երանուհին ալ հիւղակի մը ետեւն էր: Հիւղակները բոլորածեւ էին, ոմանք զիրար կը տեսնէին եւ նշաններով կու լային:

Յաջորդ առաւօտ բակին մէջ երկու զինուորներ տեսան.

— Երթանք հարուստ տուներ կողոպտելու, ըսաւ մէկը միւսին. հոս խողնոցներ պիտի ըլլան:

Սարսափն աւելի տիրեց մայրերուն վրայ, դամ գարնէիւր սրտերէն արինն չէր ելլեր:

— Աստուած իմ, դու մեզ փրկէ, կ'աղօթէին եւ պառաւ շրթունքներ մեքենարար կը շարժէին:

Համաս մայրիկն, անխոհեմ կին, հետաքրքիր իր սեռին համեմատ, գլուխը հիւղակէն դուրս հանեց, զինուոր մը տեսաւ եւ վազեց այն կողմը: Հիւղակներու ետեւ շատեր տեսան:

Ձինքը դուրս քաշքշեցին եւ սուրնով կողերը խոցելով դրամ կը պահանջէին:

— Չունիմ տղաս, կը պաղատէր Համաս մայրիկը:

— Սատկեցուր, պոռաց ընկերը, խոզ հայ է:

— Մինչեւ որ պահած ոսկիները չհանէ՝ զինքը պիտի չարչարեմ: Դուն միւս հիւղակներուն ետեւ անցիր, դեռ շատեր պիտի ըլլան:

Այդ վայրկեանին, Աստուած հասաւ արիւնոտ աչքերով սպայի մը միջոցով. սպան քաշեց խարազանը եւ լիջեցուց զինուորներու գլուխներուն.

— Վատեր, պոռաց, Արարայի դադաթը քանի մը հայերու առջեւ վատարար փախաք, հիմա այս անգոր պառաւներէն վրէժ կ'ուզէք առնել: Դուրս այս բակէն, մէկ երկու օրէն յաղթական թշնամին կը հասնի, եւ մենք քանի մը ժամէն պէտք է մեկնինք, ապա թէ ոչ մեզ շան պէս կը սատկեցնեն: Ձինուորներն հոռացան, Համաս մայրիկը գետին ինկած գրեթէ մարած էր, վախը սաստիկ եղած էր. Երանուհի վազեց ու զինքը քաշկոտելով հիւղակներուն ետեւ տարաւ:

— Քիչ մ'ալ համբերեցէք, ըսաւ մայրերուն, լսեցի թէ քանի մը ժամէն այդ զիշատիչները պիտի մեկնին:

Բայց ինչո՞ւ Ֆեթթեյ չէր եկած գէթ Սեդոն տանելու, գէթ թաքստոց մը ցոյց տալու: Չեմ մեղադրեր. բանակն յանկարծակի զիշերանց բռնած էր փողոցները, եւ պարտուած բանակ մը որ քաղաք կը մտնէ, աւելի վտանգաւոր է քան թէ յաղթական թշնամին: Ֆեթթեյ իր տունը փակուած իր կեանքին հետ կը վիճէր. եկող-

ները հայ կամ արար չէին նայիր, ոսկի կ'ուզէին, եւ մահով կը փոխանակէին:

Սարսափած լուսթիւնն աւելի իջաւ բակին վրայ, բայց դուրսէն աղաղակներ կը լսուէին, յանկարծ փողերու սուր կանչը օդը կը ճեղքէր: Այդ քանի մը ժամերը դարեր երեւցան խեղճ մայրերուն համար: Բակին դուռը բաց էր, կրնային թափառական շուներ, վաչկատուն մարդիկ ներս մտնել, արդէն ճաղերն այնքան թոյլ էին որ կից մը տալով, բակին պառականերուն պէս կրնային իրենց կռնակին վրայ պառկել:

Երեկոյեան մօտ զանազան փողերու ձայներն աւելի ուժգին լսուեցան:

— Կը մեկնին, կը մեկնին, ըսաւ Երանուհի ուրախ կանչով: Պարտուած բանակը Հալէպի հարաւէն մտած՝ հիւսիսէն դուրս կ'ելլէր, մայր ճամբան բակին կռնակի կողմն էր, բաւական հեռու, բայց կը տեսնուէր տուներու արանքներէն, թնդանօթներ, ձիաւորներ, հետեւակ զինուոր իրար խառնուած աճապարանքով կը հեռանային:

— Փա՛ռք քեզ Աստուած, ըսաւ Սրբուհի, մեռնիմ անունիդ, այս փորձանքէն ալ ազատեցիր մեզ:

Գիչ վերջ թմբուկներու ձայներ լսուեցան, ի՞նչ կար, արդեօք դեռ մեկնողներ կային. ո՛չ, Արարներն էին որ ուրախութիւն կը կատարէին, բանակէն մէկ հոգի ալ չէր մնացած:

Մայրերն անհամբեր դուրս ելան հիւղերու ետեւէն: Համաս մայրիկին թէ՛ բարկացան եւ թէ՛ մեղքցան, խեղճը կողերուն վրայ սուկնի հարուածներ առած էր:

— Ա՛խ, Համաս քոյրիկ, աս ալ պիտի տեսնէիր, ըսաւ 6 թիւ հիւղակին Երմոն մայրիկը եւ ձեռքերը ծունկերուն զարկաւ:

Բարերախտարար Համասին վէրքերը շատ խոր չէին, քիչ մը բալասան քսեցին, լաթերով կապեցին եւ նա անկողին ինկաւ: Իւրաքանչիւրը դարձեալ իր հիւղակը բռնեց, ամէն բան տեղն էր, հին կապերաները, խտրէ անկողինը, պատերուն վրայ դամբը, ժանգոտ թիթեղները, խոտէ բարձերը, իրենց բոլոր հարստութիւնը, որ եթէ փողոց նետէիր՝ մարդ չէր վերցնէր:

Առաւօտեան բակ եկաւ Ֆեթթելը: Մտահոգ էր, զլուխը կախ յանցաւորի պէս, խոշոր շունչ մը քաշեց երբ տեսաւ որ Սեդոյ բակին մէջ կը խաղար ընկերներուն հետ:

— Ո՞ւր է Միսաքն, հարցուց Երանուհիին:

— Նա ախոռ ապաստանեցաւ եւ տակաւին չեկաւ բակը:

— Երթանք զինքը փնտռելու, ըսաւ Սեդոյին, ալ վտանդ չկայ, կրնանք համարձակ դուրս ելլել:

Բռնեց տղուն ձեռքէն, Սեդոյ զիտէր թէ Միսաք ո՛ր ախոռը կը բնակէր: Հազիւ հասան դրան մօտ՝ տղան սարսուռ զղաց: Միսաք դետին փռուած էր եւ սրբտին վրայ դաշոյն մը մխուած:

— Վա՛հ, գոչեց տղան եւ սարսափով պարոնին փաթթուեցաւ: Սաստիկ լաց մը բռնեց, աչքերը յորդարցունք թափեցին, շրթները լացէն ծռեցան եւ նա կերկերուն ձայնով գոչեց.

— Միսաք քեռի, Միսաք քեռի, չորնան այն ձեռքերը որ այս դանակը քու բարի սիրտդ խոթեցին:

Գազաքի փողոցներուն մէջ տակաւին կային դիակներ, Հայերու, Արարներու, կիներ, տղաներ ու ծերեր ասդին անդին փռուած, ոմանց մատները կտրուած, որ ըրչներու վիզերը դանակահար, յայտնի էր թէ ոսկի կը

փնտռէին այդ պարտուած զինուորները եւ մահով կը վճարէին:

Միսաքի թաղումը Ֆեթթել ինքը մտածեց. պատուաւոր թաղում ընել տուաւ:

— Արժանի է ամէն յարգանքի, ըսաւ ինքնիրեն, այդ թշուառներուն պահակն եղաւ, իր կեանքը զոհեց:

Բակին մէջ լուրը լախտի պէս հասաւ: Սեդոյ ինկաւ իր մօրը վիզը եւ աւելի դառն լացաւ: Լացին մայրիկները, Երանուհին լացաւ, կարծես իրենց յոյսն ու սինը կոտրեցաւ:

Այս երրորդ անգամն ալ Սեդոյ մոմ առած՝ Մարիամին, Սաթիկին, Վարդունին եւ Սիմային հետ հետեւեցան զազազին: Հատ մ'ալ կը տանէին օտար հողին յանձնելու, սիրտ մ'ալ կը դնէին հոն Հայութենէն վրցուած: Միսաք նախրեպան էր, լեռներու մէջ անասուններուն հետ ապրած, բնութեան պէս պարզ էր, հողին պէս բարի եւ հիմա կը թաղուէր Կիւրինի սարերէն հեռու, աւազի աշխարհին մէջ, թերեւս առանց խաչի, առանց խունկի:

Սեդոյ այլեւս ուրախ չէր, լուրջ եւ ծանրախոհ դարձաւ, բակին մէջ չէր լսուեր իր սօխակի ձայնը, կարծես թէ զգաց իր ուսերուն վրայ Միսաքին պարտականութիւնները: Իր սրտին մէջ ատելութիւն մը ծընաւ աշխարհի դէմ, չարին դէմ: Իր փոքրիկ սիրտն ըմբոստացաւ այդ ոճիրին դէմ, թաթերը սեղմած ինքնիրեն կը գոչէր:

— Երբ մեծնամ վրէժ պիտի առնեմ, պիտի սատկեցընեմ այդ մարդասպանը:

Հալէպի ողբ ու կոծին յաջորդեց Դաշնակից բանակներու մոլաքը, հասան թնդանօթներ, ձիաւորներ, հետեւակ զինուորներ, Ֆրանսացիներ, Անգլիացիներ եւ

Հայեր շարք շարք քաղաք մտան, իրենց առջեւէն զինուորական շեփորախումբը կը նուազէր: Հասան սկովտացի դունդեր աղջկայ պէս քղանցքներով եւ տկզարներու նուազախումբն իրենց առջեւէն. ողբերը յանկարծակի ցնծութեան աղաղակներու փոխուեցան:

Բայց բակին մէջ մայրիկներու եւ մանուկներու աչքերէն Միսաքի տրտում պատկերը չէր հեռանար: Քաղաքը կը ցնծար, իրենք մահ մը կ'ողբային: Ի՞նչ օգուտ մարած օճախին վրայ ծաղիկներ ցանել, ի՞նչ ընէին ցնծութեան երգերը երբ իրենց կուրծքերուն տակ փուշով պատկուած սիրտեր ունէին:

Քանի մը օր յետոյ Ֆեթթել դաշտ եկաւ:

— Ուրախ լուր մը ձեզի, ըսաւ, Սիւրիոյ ճակատին պատերազմը վերջացաւ, թշնամին հաշտութիւն եւ խաղաղութիւն խնդրեց: Կրնանք ազատ փողոց ելլել, ալ ոչ ոք ձեզի կը դպչի:

— Պիտի կարենա՞նք Կիւրին վերադառնալ, հարցուց Սրբուհի:

— Ոչ, հոս աւելի ապահով է, ա'լ Կիւրինը մի մը տածէք: Իմ պապերս ալ Սերաստացի էին, հոս եկան, տուն տեղ չ'ինեցին եւ նոր կեանք սկսան: Աշխարհս մարդկութեան տունն է, մեղք որ մարդիկ իրարու եղբայր չեն:

Ֆեթթել Երանուհիին քիչ մ'աւելի դրամ տուաւ, բանակներ եկան, կեանքը սուղ էր, մէկը հարիւր եղած էր:

Երբ Ֆեթթել դնաց, մայրերն իրար մօտ եկան:

— Հողեմ այդ խաղաղութիւնը, ըսաւ Համաս մայրիկը, ձեռքը ցաւած կողին տանելով:

— Մեր օճախները քանդեցին, հիմա հաշտութիւն կ'ընեն, փող ու թմբուկ կը զարնեն, ըսաւ Մանան:

— Գէթ մեր զաւակներուն գլխէն մահն իր սեւ թեւերը քաշեց, պատասխանեց Սրբուհի:

— Մենք ի՞նչ պիտի ըլլանք, հարցուց Հոբի մայրիկը, ո՞վ մեր հոգը պիտի քաշէ:

— Կամաց կամաց մեռնիլ, Հոբի քոյրիկ, պատասխանեց Մանան, այս է մեր ճակատագիրը, հող, հայրենիք, տուն, օճախ չունեցող մարդը սեւ հեղեղները կը տանին:

— Գէթ այս ծաղիկները չխամրին, գէթ ասոնք ուրախ օրեր տեսնեն: Յիսուս իմ, Յիսուս իմ, մեռնիմ քու սուրբ կամօքիդ, ըսաւ Սրբուհի:

Քանի մը ամիս մնացին բակին մէջ. ալ թնդանօթներ չէին գոռար սահմանէ սահման: Եւրոպայէն, Ամերիկայէն հասան Հայեր ազգականներ փնտռելու, անպատներէն, Թուրքիայէն եկան առեւանդուած տղաներ, հարսեր: Հալէպ լեցուեցաւ Հայերով: Փողոցներու մէջ իրար կը հարցնէին.

— Եղբայր, քոյրիկ, դուն ո՞ր քաղաքէն կամ գիւղէն ես:

Ի՞նչ երջանկութիւն էր գտնել տառապած սիրելի մը. ո՞վ կրնար երեւակայել համբոյրն ու լացը: Երանուհի դրած էր Սիրանի Ֆրանսայի ազգականին. նա եկաւ եւ տարաւ աղջնակը: Եկան Կիւրինցիներ, մեկնեցան Մարիամը, Վարդուհը եւ ուրիշներ, բայց ոչ ոք հարցուց Սրբուհիին ու Սեդոյի մասին, ոչ ալ Սաթիկը փնտոող եղաւ: Մինակ մնացին. լքուած մնացին.

— Մայրիկ, մենք մարդ չունի՞նք աշխարհիս վրայ, հարցուց Սեդոյ:

— Չունինք, զաւակս, չունինք, ես ու դուն ենք միայն: Սաթիկ պզտիկ էր իր մաշած ու կոտրուած պուպիկին հետ կը խաղար. նա չէր հասկնար թէ իր չուրջն

ինչ կը դառնար. կը ժպտէր բոցավառ արեւուն եւ պուպիկին հետ կը խօսէր:

Սեդոյ խորհեցաւ Ֆեթթեյլին երթալ, բաւական ժամանակ էր որ այդ բարի մարդը չէր տեսնուեր. նա գիտէր ճամբան, հասաւ անոր տունը, դրան վրայ սեւ շրջանակի մէջ բան մը գրուած եւ փակցուած էր:

Արարեւէն էր գրուած, ինքը կարգալ չէր գիտեր, չէր հասկնար: Հարցուց անցորդի մը եւ նա կարգաց ու թարգմանեց.

— Այլօթեցէք Ժորժ Ֆեթթեյլի հողիին համար:

Սեդոյ ծնրադրեց դրան աստիճանին վրայ, ձեռքերն իրար բերաւ, աչքերը գրուածին դարձուց եւ Հայր մեր ըսաւ: Չհասկցաւ թէ այդ թուղթն ինչ կը նշանակէ, դուռը զարկաւ եւ բացող չեղաւ: Վերադարձաւ բակը եւ մօրը պատմեց տեսածը. մայրը չուզեց որ նա գիտնար թէ իր բարեբարը մեռած էր, նա արդէն շատ մեռել լացաւ, կը բաւէր իր մատաղ սրտին համար եւ ով գիտէ թէ դեռ ո՞րքան արցունքներ պիտի թափէր: Տըղան պնդեց, կ'ուզէր գիտնալ թէ ինչ կը նշանակէր այդ գրուածը:

— Օտար երկիր դացեր է, Սեդոյ:

Բայց Սրբուհի երեսն անդին դարձուց եւ լացաւ, կարմիր թաշկինակն աչքերուն տարաւ, սրբեց մէկ արցունքը, ուրիշ արցունք եկաւ ետեւէն:

— Մայրիկ, դուն կու լաս, անպատճառ գէշ բան մ'էր այդ թուղթը:

— Ո՛չ, տղաս, կու լամ որ մեզի նայող մը չեկաւ:

Հալէպ հասան նաեւ հայ եւ օտար որբահաւաք հաստատութիւններ: Քաղաքը լի էր կմախքացած անտէր որբերով, մայթերու վրայ, փողոցներու անկիւնները, քուրջներու տակ տկար սիրտեր դեռ կը դարնէին: Ապրող-

ներս՞ աշխարհ էր, թէ կենդանի մեռածներու քաղաք, դիւրին չէր զանազանել:

Բակին մէջ տիրեց տխրութիւն մը. չորս հոգի էին, իրար երես կը նայէին եւ աւելի կը տխրէին: Սեղոյ կ'երթար հիւզակ առ հիւզակ, կը նայէր ներս, թերեւս Վարդունը կամ Մարիամը դուրս ելլէին: Պարապ էին հիւզակները, նա մինակ էր, միայն Սաթիկը կար իրրեւ ընկեր: Բայց Սեղոյ կը սիրէր բակը, յաճախ աւել առած կը մաքրէր, ջուր կը ցանէր որ քիչ մը փայլ ստանայ այդ փշոտ գետինը, քիչ մը զովութիւն դայ: Գրեթէ ամէն օր թոյլ բազուկներով ջուր կը տանէր ու կ'աւելէր. կը սիրէր բակը, սրտին շատ մօտիկ էր. իր անոյշ մանկութիւնն հոն անցուցած էր, իր հոգիին մաս մը կազմած էր այդ ողորմելի բակը. բայց ոչ ոք եկաւ իրենց դուռը զարնելու: Սոհանոցն ալ փոքրիկցաւ, նիհար պտուկ մը կրակին վրայ խեղճ ապուր մը կ'եփէր, երբեմն մսի կտոր մը մէջը իրենց թշուառ ուտելիքն էր:

Տիկին Երանուհի երբեմն Սեղոյի ձեռքն բռնած շուկայ կ'երթար. տղան խոշոր աչքերով կը դիտէր փողոցները, մարդիկ որ կ'անցնէին, թշուառներ որ մայրութեւ վրայ իրենց հոգիին հետ կը կոտէին:

— Երանուհի մայրիկ, ըսաւ օր մը, երթանք մեր բարերարը տեսնենք, ես դիտեմ իր տունը:

— Հոն չէ, Սեղոյ, հեռու աշխարհ գացեր է:

Օր մը Երանուհի վերադարձաւ շուկայէն, իրենց հետ մէկը կար, քիչ մ'աւելի տարիքոտ քան տիկինը: Բրդնիկցի էր եւ Ամերիկայէն եկած, նա համադիւզացիներ կը փնտռէր եւ դտած էր Երանուհին:

— Դանիէլ Չպուքեարեանի եղբոր տիկինն այս վիճակին մէջ, ըսաւ ինքնիրեն, եւ իր քառասունհինգ ամեայ թարթիչներէն արցունքներ հոսեցան:

Այդ օրը ինքն ալ բակին մէջ միասին ճաշեց, ինքը ծախսեց եւ Սեղոյ համեզ պատաններ խոշոր բերանով կլլեց:

— Ուրիշ Բրդնիկցիներ կը ճանչնա՞ս, հարցուց նա Երանուհիին:

— Ո՛չ, առիթ չեմ ունեցած մէկը գտնելու, այս բակը Կիւրինցիներուն էր, շատուոր էին, եկան տարին եւ մնացին այս տիկինն իր երկու պղտիկներով:

— Անոնց համար ես կը կարգադրեմ որ եւրոպական որբանոց մը դրուին, դուն ինձ հետ Ամերիկա պէտք է գաս, հոն քրիստոնեայ աշխարհ է, ես տուն տեղ ունիմ, չեմ ամուսնացած, փառք Աստուծոյ, դիրքս լաւ է: Շատ տառապե՛ր ես, դուն ալ իրաւունք ունիս քիչ մը աշխարհս վայելելու:

Երանուհի հասկցաւ երկուորին միտքը. կարմրեցաւ, բայց ուրիշ ինչ կրնար ընել:

— Մինչեւ այս տիկինն ու պղտիկները ապահով տեղ չունենան, ես այս բակէն դուրս չեմ ելլեր, պատասխանեց: Այդ մանչուկը, Սեղոն, հազարի հետ չեմ փոխեր, հրեշտակն եղաւ այս բակին:

Երանուհի պատմեց Սեղոյին հանդիպումը Ֆեթթելին հետ եւ եղած բարիքները. պատմեց թէ այդ փոքրիկը քսանըմէկ բերան ապրեցնելու համար, փողոցէ փողոց նարինջ ծախեր է:

— Այո, իմ պարտքս է զիրենք տեղաւորել: Շոյեց Սեղոյին դուռը, մանչուկը համարձակ եւ ժպտուն նայեցաւ եկուորին:

— Քու եղբա՞յրդ է, Երանուհի մայրիկ, հարցուց անմեղութեամբ:

— Այո՛, իմ եղբայրս է, Սեղոյ:

— Երանի քեզի, ես եղբայր չունիմ, հայրիկ չու-

նիմ. անոնք մեռան, չար մարդիկ զիրենք սպաննեցին. ես որք եմ, բոլոր պզտիկները հայրիկ ունին, ես չունիմ:

Երանուհի հառաչանք մը քաշեց: Սրբուհի աչքերը սրբեց:


— Բայց դուն Սեդոյ, շատ բարի մայրիկ մ'ունիս, անոյշ մայրիկ մը, պատասխանեց Երանուհի:

— Այո, բայց հիւանդ է, ձեռքը չի բռներ: Գիտեմ, դուն պիտի երթաս եղբորդ հետ եւ մենք հոս պիտի մընանք, այս բաղին մէջ: Ես հիւղակները մաքուր կը պահեմ, բակը կ'աւելեմ որ եթէ ուրիշներ գան՝ սիրեն այս բակը: Ես կը սիրեմ զայն, երբ դուքսն ներս մտնեմ սիրտս հանգիստ կ'ըլլայ, հողիս ապահով: Ես մայրիկէս չեմ բաժնուիր, պատառ մը հաց կը ճարեմ նարինջ ծախելով: Միայն մայրիկս թող չլայ, Սաթիկն ուրախ սրտով խաղայ իր պուպրիկին հետ: Առաջ հայրիկս եմ-զի շաքար կը բերէր, կարագով հաց կ'ուտէի, հիմա ես պէտք է աշխատիմ մայրիկս պահելու համար: Ա՛խ, դանակ մտնէր այն սիրտը որ մամայիս ձեռքը կ'ուտրեց:

Բրդնիկցի պարոնը կախեց իր գլուխը. չէր սպասեր այդ փոքրիկէն այսքան զգայուն խօսքեր. նա մեծ սրտով յայտնեց իր ներքին աշխարհը զոր չար մարդիկ աւերակի վերածեր էին:

Հիմա ինքը պիտի վառէր հայրենի օճախը. տկար մանուկ էր եւ աշխարհն անասման, մարդիկ անծանօթ: Ով գիտէ ո՞ր աստղերուն տակ իր որք գլուխը պիտի հանգչեցնէ, ո՞ր տան դուռը պիտի զարնէ, ո՞ր աստղերն իր ոսկի երագները պիտի հիւսեն: Որք է, որքն սիրտն ո՞վ պիտի հասկնայ:

— Երթանք Երանուհի, ըսաւ պարոնը, կարգադրենք ասոնց վիճակը որ հանգիստ սրտով մեկնինք:



Միսաֆ գետին փռուած էր եւ սրտին վրայ դաշոյն մը մխուած:



Յիւսէօ

Ողբ ու կոծին յաջորդեց դաշնակից բանակներու մուտքը:

Սեդոյ տրտում նայեցաւ անոնց ետեւէն որ բակէն դուրս կ'ելլէին, կարծես զգաց թէ այդ վայրկեանէն Երանուհի մայրիկն իրենցմէ կը բաժնուէր: Մինչեւ երեկոյ սպասեց, տան մէջ ուտելիք ունէին:

— Մամա, մենք ալ պատրաստուինք մեկնելու, ըսաւ մօրը:

— Ո՞ւր զաւակս, թռչունները բոյն ունին, մենք քար մ'իսկ չունինք մեր դըռնին հանդէպնելու. հոս գէթ անձրեւէն պատսպարուած ենք, գէթ խոտէ անկողին մը ունինք, անձանթ տեղ, ո՞ւր երթանք:

— Չլսեցի՞ր թէ պարոնն ըսաւ որ մեզի լաւ տեղ պիտի դրկէ. նա հարուստ է, սուտ չի խօսիր:

Երեկոյեան ուշ ատեն Երանուհի մինակն եկաւ բակը, հետը շաքար եւ անոյշ բերած էր երկու պղտիկներուն համար: Սեդոյ ուրախութեամբ բացաւ ծրարը. նախ Սաթիկին տուաւ, ապա մայրիկին, յետոյ ինքն առաւ փոքրիկ կտոր մը:

— Դու շատ քիչ առիր, Սեդոյ, ըսաւ Երանուհի:

— Հող չէ, ես պէտք է զոհուիմ իրենց համար: Միսաք քեռին մեռաւ, մեր Ֆեթթել բարերարը հեռու տեղ գնաց, ես պէտք է աշխատիմ զիրենք պահելու համար:

Երանուհի զարմացաւ բակի պղտիկին վրայ, գիտէր թէ ոսկի սիրտ ունէր, զոհաբերող էր, բայց այսքան խոր գիտակցութիւն մը պարտականութեան՝ չէր կրնար երեւակայել ութը տարեկան մանչուկի մը համար:

— Դուն, սիրելի Սեդոյ, ուր որ երթաս հողը բռնես ոսկի պիտի դառնայ, քարը բռնես հացի պիտի փոխուի, հազարին մէջ մէկ հատիկ ես, սիրելիս:

Կարծես թէ Երանուհի զղջաց որ խօսք տուաւ այդ պարոնին հետ Ամերիկա մեկնիլ: Ինքն ալ կապուած էր այդ աղքատ հիւղահներուն, բակի պղտիկին. թշուա-

ուութիւնն ալ հաճելի կը դառնայ երբ մարդ համակամ է կեանքին հետ եւ ինքը սիրով ու համակամութեամբ շուրջ երեք տարի վարեց ու կեանք տուաւ քսանըջորս թշուառներու :

— Վաղ առաւօտ, բեռնատար ինքնաշարժ մը պիտի դայ ձեզ տանելու համար : Ֆրանսա պիտի երթաք, բարի Ֆրանսացի մը ձեզի տուն տեղ պիտի տայ : Հոն Հայեր շատ կան, բազմաթիւ որբեր հոն կ'երթան . քրիստոնեայ երկիր է, մարդ մարդու չի դպչիր : Ես ինքս ձեզ պիտի տեղաւորեմ որ հանդիստ ըլլաք :

— Մեր կապերաը եւ խտրէ անկողիններն ալ պիտի տանի՞նք, հարցուց Սեդոյ :

— Ո՛չ, պէտք չկայ, ձեզի բուրդէ անկողին կու տան, փափուկ կը պառկիք, հանդիստ կը քնանաք :

— Փառք քեզ Աստուած, ըսաւ Սեդոյ, ես քարին վրան ալ կը քնանամ, բայց մայրիկս խոտին վրայ շատ կը նեղուէր, գիշերները միշտ անքուն կ'անցընէր :

Սաթիկ իր պուպրիկը մէկդի նետեց եւ եկաւ Երանուհիին գիրկը նստեցաւ :

— Վաղն ալ անոյշ կը բերե՞ս, հարցուց կապուտակ աչքերը տիկնոջ դարձնելով :

— Այո՛, շատ, շատ պիտի բերեմ :

Յաջորդ օրն հինգշաբթի էր . բեռնատար ինքնաշարժ մը կանգ առաւ բակի դրան գիմաց : Վարիչի քովէն դուրս ելան Բրգնիկցի պարոնը եւ Ֆրանսացի մը : Ֆրանսացին որբեր կը հաւաքէր . չես գիտեր թէ բարեգործութեան համար, թէ թարմ արիւն ներարկելու անարիւն Ֆրանսայի : Նա կարճահասակ եւ դէր մէկն էր, հաստ պեխերը կախուած էին շրթներուն վրայ . կարծես թէ մարդու վաճառական էր . բայց անոյշ ժը-

պիտ մ'ըբաւ ու շոյեց Սաթիկին գլուխը որ պուպրիկը գիրկը՝ զարմացած կառքին կը նայէր :

Ինքնաշարժը լեցուն էր պզտիկներով, կիներով ու պառուներով . ազմուկ եւ հրմշտուք կար . ամէն ոք կը ջանար իր տեղը լայնցնել, քիչ չէին ճիչն ու կռիւր :

Սրբուհի իր ծրարը շինած՝ տան առջեւ կը սպասէր . բայց Սեդոն չկար, նա դացեր էր հիւղակներուն դռները դոցելու, իւրաքանչիւրին մէջ մտաւ ելաւ, շօշափեց փայտէ սիւները . Վարդունին եւ Մարիամին հիւղակներուն առջեւ խօսքեր մը մըմնջեց : Կարծես այդ թշուառ տնակներն ալ, փեթակի պէս շարուած իրար մօտ, կը զգային թէ բակին պզտիկը կը մեկնէր եւ կեանքը կը մեռնէր :

— Ո՞ւր է Սեդոն, հարցուց Երանուհի մանչուկին մօրը :

— Խենթ տղայ, դացեր է հիւղակներուն դռները դոցելու, պատասխանեց նա :

Քիչ վերջ տղան երեւցաւ, եկաւ իրենց տնակը . ներս մտաւ, պատերը շօշափեց, դրան համբոյր տուաւ . եւ յանկարծ ուժգին լացաւ : Ի՞նչ կը զգար այդ պըզտիկը, ի՞նչ սէր էր որ ունէր այդ աղքատ բակին հանդէպ, ուր կաղամբի տերեւներով եւ ուղտի ճարպով միայն խեղճ ապուր մը կերած էր : Ամէն հիւղակ իրենն էր եւ ինքն ամէնուն համար էր . իր հոգիէն բան մը կը փրցնէին, կարծես երիզ երիզ իր միտը կը կտրատէին : Նա լացաւ եւ ուրիշներ խնդացին իր վրան :

— Սեդոյ, մեկնելու ժամանակ է, ըսաւ Երանուհի :

— Քիչ մ'ալ դիտեմ մեր հիւղակը, պատասխանեց Սեդոյ :

Ապա թուղթի մը մէջ բուռ մը հող դրաւ իր տան առջեւէն ու ծոցը խոթեց :

— Երթանք մամա, ըսաւ ու ծրարը քաշկռտելով մեկնեցաւ դէպի կառքը:

Երկու պարոններ օտար լեզուով իրար հետ խօսեցան. Փրանսացին կառքին վրայ ելաւ տեղ բացաւ Սըրբուհիին ու երկու պզտիկներուն: Կառքին ամէնէն ետեւն էր իրենց տեղը, նեղ, հազիւ նիհար մէկը կրնար սեղմուիլ: Սըրբուհիին ծրարը տեղաւորեցին:

— Ծնորհակալ եմ Երանուհի, ըսաւ Սեդոյին մայրը եւ գրկեց իր մէկ ձեռքով այդ ազնիւ կինը, որ բազին մայրն եղած էր, շնորհակալ եմ, դուն մեզի պահպան հրեշտակ եղար, թող Աստուած հազարապատիկ հատուցանէ:

Զինքը վեր բարձրացուցին եւ նա նստաւ իր ծրարին վրայ: Յետոյ Սաթիկը վեր առին պուպրիկը գերկը եւ Սըրբուհիին մէկ ծունկին վրայ տեղաւորեցին:

— Սեդոյ, ըսաւ Երանուհի եւ գրկեց բակին պղզտիկը. Սեդոյ, սիրտս տեղէն հանէին՝ այնքան չէի ցաւիր քան քեզմէ բաժնուիլ:

Սեդոյ տիկնոջ վրիպն ինկաւ. ի՞նչ համբոյր, հրեշտակները միայն գիտեն անոր անուշութիւնը. երկար մնացին իրար վաթթուած:

— Երանի թէ ճանչցած չըլլայի այս հրեշտակը, ըսաւ Երանուհի. բայց ոչ, կեանքիս ամէնէն քաղցր պահերն այս մանչուկը տուաւ:

Ինքը գրկեց Սեդոն եւ մօրը միւս ծունկին վրայ դրաւ:

— Երանուհի մայրիկ, ըսաւ տղան, դուն հո՞ս պիտի մնաս:

— Ոչ, հողիս, ես ալ քանի մ'օրէն կը մեկնիմ շատ հեռու աշխարհ. ով գիտէ յոյս է, բոլոր ասոնք որ կառքին մէջն են յոյսով կը մեկնին օր մը վերադառնալու

եւ իրենց օճախները վառելու: Սեդոյ, հողիս, երբ Փարիզ երթալու ըլլաս, հոն Հայեր շատ կան, իրենց սիրտն ու լեզուն կը հասկնաս, հոն Հայերու եկեղեցին կայ, ես այդ հասցէով քեզի կը գրեմ. երբ վարժիս երկրին, դնա՛ հարցուր իմ նամակներս. Աստուած տայ, օր մը դարձեալ զիրար տեսնենք: Նայէ, Սաթիկին հող տանիս, քու քոյրիկդ է, քովէդ չբաժնուի, միշտ մայրիկիդ հետ եղիր, երեքդ միասին: Երթաք բարով, Աստուած հետերնիդ ըլլայ:

Ինքնաշարժը ճամբայ ելաւ եւ Երանուհի՝ բակին առջեւ, Սեդոյ՝ կառքին վրայ, լացին ու ձեռքով համբոյր գրկեցին:

Երանի թէ մեկնած չըլլային. բազմ մնային, Սեդոն նարինջ վաճառէր իր մայրն ու Սաթիկը պահելու: Ինչ սրտով պատմեմ թէ Սըրբուհիին ալ մեռաւ եւ աւելի որբացաւ բակին պզտիկը:

Միւրիոյ ամայի դաշտերէն, ուր ճամբան յարմար էր էջերու եւ ուղտերու, ինքնաշարժը փոսէ փոս իյնալով առաջ դնաց: Ճամբորդներն ստէպ իրար կը զարնուէին, եւ գլուխ գլխու կու դային: Սեդոյ եւ Սաթիկ ուժով սեղմած էին Սըրբուհիին ծունկերը եւ կարծես մէկ մարմին եղած կը ջանային կառքի կողերուն չզարնուիլ:

Անծայր դաշտերը չէին վերջանար. հազիւ երբեմն հողէ պարխապներու կը հանդիպէին, որոնց մէջ հողէ բոլորակ տուններ կը տեսնուէին, գիւղակին դիմաց աղբիւր մը եւ հողէ ամաններ իրենց գլուխներուն՝ արար կիներ, շալերու մէջ պլլուած:

Հասան Մահարա գիւղը, 85 մղոն Հալէպէն հեռու. հոն ճամբուն վրայ մէկ երկու հիւանդ ծառեր տեսնուեցան: Անոնց տակ առատահոս աղբիւր մը կար:

— Վար իջէք, հրամայեց Փրանսացին, վար իջէք եւ այս աղբիւրին մօտ բան մը կերէք. արդէն կէսօր է:

Կառքին կողերը բացին, քիչ մնաց Սրբուհին երկու տղաներով կռնակին վրայ պիտի իյնար. բռնեց առջև-ւինին թիկունքէն եւ հազիւ կրցաւ վար իջնել: Սեղոյ վար ցատկեց եւ Սաթիկը իջեցուց: Կամաց կամաց քակուեցաւ բազմութիւնը, բայց խեղճ պառաւներ քալելու ոյժ չունէին, իրենց ոտքերն ընդարձացեր էին, իրենց կողերը չէին բռներ ոտք ոտքի: Դատարկ պարկի պէս ինկան ճամբուն երկայնքին եւ կը լսուէր հեծեծանք.

— Ա՛խ, ոտքերս:

— Ա՛խ, կողերս:

— Եթէ այսպէս երթանք, ես Պէյրութ չեմ հասնիր, ըսաւ շատ պառաւ կին մը:

— Մամի, դուն նստէ, ըսաւ Սեղոյ իր մօրը. Սաթիկը քովդ առ, ես կը բանամ մեր հացի ծրարը:

— Քիչ մը ծանր է, տղաս, չես կրնար վերցնել:

— Հոգ չէ, մայրիկ, կառքէն վար կը քաշեմ:

Փրանսացի պեխաւոր մարդն աղբիւրին մօտ նստեցաւ եւ կանազան տուփեղէններ հանեց, պահածոյ միս ունէր, պահածոյ ձուկ եւ ապուխտ. փռեց իր ճերմակ անձեռոցին վրայ ու ծանր շարժելով պեղերն ու ատամները, սկսաւ ուտել, առանց ուշ դարձնելու թէ այդ թշուառ բազմութիւնն ինչ պիտի հանէր իր ծրարէն: Ոմանք չոր հաց կրծեցին, ուրիշներ սոխ դրին լաւաշին մէջ. Սրբուհի հաւկիթ եւ քիչ մը միս ունէր. հացի մէջ դրաւ եւ տուաւ տղաներուն: Անոնց մօտ նստած էր պատառոտուն զգեստով կին մը եւ աղջնակ մը քովը: Աղջնակը չոր հաց կը կրծէր. Սեղոյ տեսաւ եւ սիրտը ցաւեցաւ. հանեց իր հացին մէջէն շերտ մը միս եւ աղջնակին տուաւ.

— Հացիդ մէջը դիր, համով միս է: Երանուհի մայրիկը տուաւ: Դուն ս՞ուրտեղացի ես, հարցուց համակրահան շեշտով:

— Ես Տրապիզոնցի եմ, պատասխանեց աղջնակը, միսով հացը խածնելով: Ծնորհակալ եմ, ի՞նչ համով է:

— Մամա, Տրապիզոնն ս՞ուր կը դտնուի, հարցուց Սեղոյ:

— Վերին ծովին մօտն է, տղաս:

— Ի՞նչ բան է ծովը:

— Անծայր ջուր է, մէկ կողմէն միւսը չես տեսներ:

— Է՛հ, ջուրի ծարաւ չենք զգար:

— Բայց աղի է, տղաս:

— Աղի՞ է. ս՞ով մէջն աղ լեցուցեր է, հարցուց դարձեալ Սեղոյ:

— Հայերու արցունքով աղի եղած է, տղաս, ըսաւ մայրը:

Բայց Սեղոյ չհասկցաւ իր մօրն ըսածը եւ հացը խածնելով աղջնակին կը նայէր:

— Ո՛րքան Վարդունին կը նմանի, ըսաւ ինքնիրեն:

— Անունդ ի՞նչ է, հարցուց աղջնակին:

— Վարդուհի է, իմ ծնողքս թուրքերը սպաննեցին. ասիկա իմ մեծ մայրս է: Մենք սարեր, ձորեր քալելով Հալէպ հասանք. հիմա Փրանսա կ'երթանք, կ'ըսեն թէ քրիստոնեայ երկիր է. բարի մարդիկ են. մեզ կը պաշտպանեն շարերուն դէմ:

— Ես այդ պեխաւոր Փրանսացին չսիրեցի, ըսաւ Սեղոյ. ինք համով պատառներ կը կլլէ, իսկ այն պղտիկները դետին ինկած փշրանքները կը հաւաքեն հաւերու պէս. չէ՞ր կրնար պատառ մը մէկուն, պատառ մը միւսին տալ: Իր պայուսակին մէջ առատ ուտելիք ունի, դրպանին մէջ ալ դրամ:

— Սեդոյ, անօթի եմ, ըսաւ Սաթիկ, դեռ հաց կ'ուզեմ:

Սեդոյ տոստակէն հաց մ'ալ հանեց եւ հետը խաշած հաւկիթ մը: Կիսեց հացն ու հաւկիթը եւ մաս մը վարդուհիին տուաւ:

— Դուն ալ կեր, կը տեսնեմ որ անօթի ես. կէսը Սաթիկին կը բաւէ:

Յետոյ երեքը միասին դացին աղբիւրին մօտ, գուռը ցած էր, դրին իրենց շրթները եւ կուշտ կուշտ խմեցին Աստուծոյ տուած ջուրը:

— Ա՛խ, վարդուհի, գիտնաս թէ երբ մեր Կիւրիւնէն Հայէպ կու գայինք, որքան ծարաւ քաշեր եմ. երբեմն կենդանիներու կոխած տեղերուն մէջ հաւաքուած ջուրը կը խմէինք. սիրտս ողիկ ողիկ կու գար, հողիս կը քաղուէր. կը վախնայինք թէ չար մարդ մը հանդիպէր. յաճախ գիշերը կը ճամբորդէինք եւ ցորեկը կը պահուրտէինք: Դուն ի՞նչպէս գացիր Հայէպ:

— Մի՛ հարցնէր, Սեդոյ. մենք շատուոր էինք. ճամբան մնացին, սուրը մեր ետեւէն կու գար. մահը մեր առջեւէն կը քալէր. ես մեծ մայրիկիս ձեռքը բռնած էի. վախն ետեւէս ինկած էր. յոգնութիւնը գիս ետեւ կը քաշէր, բայց սարեր ձորեր չէին վերջանար: Մի՛ հարցնէր Սեդոյ. վրաս դող կու գայ:

Վերադարձան իրենց մայրերուն քով. երկու կիները ծանօթացեր էին:

— Երթանք տիկին Սրբուհի, կ'ըսէր պառաւը, ծովեր անցնինք, թող մեզի ճամբայ տան, սարերը պարիսպ ըլլան. ձորերը տուն, աստղերը ճրագ, միայն փաթթոցաւոր չտեսնենք, մուկզինի տխուր ձայն չըսենք:

— Մեկնինք, պոռաց Փրանսացին, ամէն ոք իր տեղը թող բռնէ:

Բայց ո՞վ պիտի վերցնէր այդ ջարդուած կողերով պառաւները ինքնաշարժին վրայ հանելու համար: Փորձեցին վեր մաղցիլ, մէկը միւսին պատուանդան եղաւ. ոմանք լեցուն պարկի պէս վար ինկան. վայնասուն եւ անէծք իրար խառնուած էին: Շարժալարն ու Փրանսացին կը խնդային խեղճերուն վրայ:

Ուղճ Սրբուհին ի՞նչպէս վեր բարձրանար, անոր մէկ ձեռքը չէր բռնէր: Սեդոյ վեր ելաւ եւ երկու ձեռքերով ջանաց մայրը վեր քաշել. իր ուժերը չէին բաւեր. վարդուհիին պառաւ մեծ մայրը տակը մտաւ, իր ուսերն ալ չբաւեցին. Սրբուհին դարձեալ վար սահեցաւ. աչքերն արցունք լեցուեցան, յիշեց Միսաքը, Երանուհին ու բակի մայրիկները. անոնք քոյրեր էին. իրարու վրայ սէր ունէին. հիմա անծանօթ կիներու մէջն էր, որոնք կը ջանային իրար հրելով տեղ բռնել:

— Սեդոյ, աղաս, վար իջիր, թող միւսները տեղ բռնեն, մենք ամէնէն ետեւն ենք, յետոյ վեր կը բարձրանանք: Իրար հրելով, իրար օղնելով պառաւները կը ցան վեր բարձրանալ: Գետին մնացին Սեդոյ, Սաթիկ եւ Սրբուհի:

— Այս կնոջ համար, ամերիկացին առատ դրամ տուաւ ինձ, ըսաւ շարժալարը, մեղք է, օգնեմ որ վեր ելլէ:

Նախ անոր ծրարը տեղաւորեց ապա Սեդոն ու Սաթիկը դրաւ եւ հուսկ բռնելով Սրբուհիին մէջքէն բարձրացուց ծրարին վրայ: Կինը դեռ հաստատուն չէր իր տեղը, երբ առջեւի հաստ պառաւն անխոհեմ շարժում մ'ըրաւ եւ ետ հրեց խեղճ Սրբուհին: Ինքնաշարժին ետեւի կողը դեռ չէր դոցուած. Սրբուհին կռնակին վը-

րայ վար ինկաւ, ողնաշարը կոտրեցաւ, արդէն եղէգի պէս բարակ էր, ցաւերէն փտած էր եւ ինչպէս իր իրանը վեր կը բռնէր, Աստուած գիտէր:

Հոն տեղն ի տեղ.

— Ա՛հ, ըսաւ ու փակեց աչքերը:

— Մամի՛ր, գոչեց Սեդոյ եւ կառքէն վար ցատկեց: Մամի՛ր, մամի՛ր, կրկնեց պզտիկը եւ մօրը գլուխը վեր բռնեց. դեռ հոգին չէր տուած, նա ժպտեցաւ, մահուան ժպիտ էր, հիւանդ ճառագայթ երբ արեւը մարը կը մտնէ:

— Սեդո՛յ, հազիւ լսուեցաւ, ես կը մեռնիմ, Սաթիկը քովդ առ եւ միասին ծաղկեցէք: Վերջին բառերն ալ չլսուեցան եւ Սրբուհին աղբիւրին մօտ, Մահարա գիւղին մէջ, առանց խաչի մահմետականներու աշխարհին մէջ գերեզման պիտի ունենար:

Սեդոյ քանի մը անգամ անոր գլուխը ցնցեց.

— Մամի՛ր, մամի՛ր, գոչեց լալով. մամի, ե՛լ երթանք, կառքը պիտի մեկնի:

— Մեռաւ, մեռաւ, լսուեցաւ կառքին մէջ եւ կիները լաց առին ու լաց տուին:

— Հաստ անասուն, պոռաց կին մը այն կնոջ որ խեղճը հրած էր. տեղդ չնստէի՞ր, ծունկերդ չծալէի՞ր:

— Քա, ի՞նչ ընեմ, գիտկի պէս իրար վրայ ինկած ենք. ո՞ւր ենք, ի՞նչ կ'ընենք, ո՞վ գիտէ, պատասխանեց հաստ ոտքերով պառաւը: Վա՛խ, վա՛խ, աս ալ պիտի տեսնէինք:

— Վար իջէք, հրամայեց Փրանսացին: Անէծք, մէկ երկու ժամ ալ պիտի կորսնցնենք, ըսաւ:

Իրեն հո՞գն էր թէ հայ մայրիկ մը կը մեռնէր. դաւակ մը որը կը մնար. իրեն համար մանուկները կարեւոր էին. Ֆրանսան արիւնազամ եղած էր, երիտա-

սարդ կեանքեր պէտք էին իր փարթամ եւ ամայի գիւղերը լեցնելու համար:

— Գնա՛, ըսաւ շարժալարին, սա գիւղէն մէկ երկու հոգի կանչէ, թող բահեր առնեն եւ թաղենք զինքը. ես շատ ժամանակ չունիմ սպասելու. երկու օրէն չոգենաւը կը մեկնի, պէտք է անոր հասնինք:

Երկու երիտասարդ արարներ եկան, սեւ ու հաստ պիտեր ունէին, ճերմակ սաւանի մէջ պլլուած էին:

— Հոն, ձեր գերեզմանոցին մէջ փորեցէք, ըսաւ Փրանսացին:

— Ո՛չ, անհաւատ կին է, Ալլահին զաւակներուն մէջ չի կրնար թաղուիլ, ըսին երկուքը:

Աղբիւրէն քիչ մը վար հողը կանաչ էր, լալկան ուռնի մը գլուխը կախած հոսող ջուրին կը նայէր, անոր տակ փորեցին: Բահի եւ բրիչի ձայներուն կը միանային կիներու ողբերը եւ Սեդոյի ու Սաթիկի ճիչերը: Սրբուհին տարածուած էր գետնին վրայ, գլուխէն յորդ արիւն կը հոսէր, մարմինն երկու մասի բաժնուած էր: Կոճկեցին իր հագուստները, փակեցին աչքերը, բերանը թաշկինակով կապեցին:

— Ծուռ ըրէք, հրամայեց Փրանսացին երկու արարներուն, ժամանակ չունիմ հոս երկար մնալու:

Կէս մեղրէն քիչ մ'աւելի փորեցին կանաչ հողը, ուռնին կարծես աւելի վար կախուեցաւ, իր մազերը ալիք ալիք կ'իջնէին:

— Կը բաւէ, ըսաւ Փրանսացին, բերէք սա մեռելը:

— Վրան նայէ, քուրիկ, ըսաւ պառաւ մը աւելի երիտասարդ կնոջ մը, կրնայ քովը դրամ գտնուիլ:

Իսկապէս երեք ոսկի գտան, բան մը չէր, գրեթէ բոլորն ալ այդքան քիչ բան մ'ունէին:

— Այս խեղճ որբերուն բերանի դրամն է, ըսաւ երիտասարդ կինը, խղճագին աչքերով նայելով Սեդոյին ու Սաթիկին վրայ, որոնք տակաւին չէին համոզուած թէ մայրիկը հոն պիտի մնար:

Երիտասարդ շարժավարն ու արարները բռնեցին խեղճ կնոջ ջախջախուած դիակը, Սեդոյ եւ Սաթիկ փէշերէն բռնած էին: Սիրտ ունէին՝ մոմ չունէին այդ երկու որբուկները, աղօթք ունէին՝ խունկ չունէին, աչք ունէին՝ արցունք չունէին: Երիտասարդ կինը բռնեց Սեդոյի մէկ ձեռքէն, անոյշ խօսեցաւ, ջանաց մայրութիւն ընել, բայց տղան արդէն ութ տարեկան էր. դառն կեանքի փորձն ունէր, կը լսէր անոյշ խօսքերը, սիրտն աւելի կը փոթորկէր. յանկարծակի, մէկ վայրկեանի մէջ տարիներու մայրը կորսնցնել, շատ ծանր էր փոքրիկ սրտին համար:

Կիները ողբերով կը հետեւէին, Փրանսացին ջղալին դարձած էր, արարները չուզելով կը տանէին այդ անհաւատ կնոջ դիակը: Երբ փոսը դրին, Սեդոյ մէջն ինկաւ, Սաթիկ իրեն հետեւեցաւ.

— Մեզ ալ, մեզ ալ միասին թաղեցէք, ըսաւ բակին պղտիկը. մեզի համար կեանք չկայ, արեւ չկայ, աշխարհ չկայ:

— Վո՛ր, վո՛ր, վո՛ր, կը կրկնէին պառաւները եւ լալկան ուռենին իր մազերն աւելի վար կը կախէր, կարծես կանաչ պատանք կ'ուզէր ըլլալ, այդ անպատան կնոջ համար:

Ամէն յուզարկաւոր քիչ մը մահ կը տանի իր հետը, բայց Սեդոյ եւ Սաթիկ ամբողջ մահ մը տարին իրենց հետ:

— Կառք բարձրացէք, անապարեց Փրանսացին, օ-

րը կը մթնէ, ճամբան գէշ է. չեմ ուզեր ուրիշ մեռել թաղել այս անապատներուն մէջ:

Գարձեալ նոյն անապարանքով, դարձեալ նոյն ողբերով եւ անէծքներով կառքը լեցուեցաւ: Սեդոյ եւ Սաթիկ, սարսափած դառներու նման, իրար պլլուեցան եւ երբ ինքնաշարժը ճամբայ ելաւ, սաստիկ լաց մը բռնեցին.

— Մամի, մամի, ինչո՞ւ մեզ մինակ ձգեցիր, մամի ինչո՞ւ հողը մտար այս գէշ աշխարհին մէջ:

Եւ ուռենին կարծես աւելի վար կախուեցաւ, արցունք թափեց որ հողը միշտ կանաչ մնայ եւ թշուառ մօր մը սիրտը բարախէ տատանուող ուռենին հետ:

Ինքնաշարժը սուրաց եւ դարձեալ անապատ անապատի յաջորդեց: Երկու փոքրերը զիրար գրկած մնացին, ո՛չ խօսեցան, ո՛չ շրջապատը դիտեցին, սիրտ սրտի, թուշ թուշի, ցաւով տաքցան, արցունքով թըրջեցան: Երիտասարդ կինը, խարբերօցի էր, Ծուշանիկ կը կոչուէր, ոչ ոք ունէր գրկելու համար. չար հովն իր ծաղիկները տարած էր, Ամերիկա պիտի անցնէր, հոն եղբայրներ ունէր, երիտասարդ էր, թերեւս հոն անգամ մ'ալ ծաղկէր: Ծուշանիկ ջանաց ամոքել երկու որբուկները, շոյեց մէկուն, շոյեց միւսին գլուխն ու մազերը, բայց ո՛չ Սեդոյ, ո՛չ ալ Սաթիկ բաժնուեցան իրարմէ, կարծես մահուան քունը զիրենք բռնած էր, ինքնաշարժը կը սուրար խորտուփորտ տեղերէ, փոսերը կ'իջնէր, կը ցնցէր եւ երկու որբերը կարծես մէկ մարմին՝ կառքին շարժումներուն կը հետեւէին:

— Անունդ ի՞նչ է, պղտիկս, ըսաւ Սեդոյին:

Այնքան անոյշ մայրական էր կնոջ շեշտը, որ պղտիկը կարծես մեղրի քաղցր կաթիլ մը զգաց իր սրտին մէջ:

— Սեղոյ է, պատասխանեց:

— Մի՛ լար, տղաս, ես ձեզի կ'օգնեմ, ձեր մօտը կ'ըլլամ, ես ալ քեզի եւ այդ աղջնակին պէս զոյգ աղանիններ ունէի, թոան աքսորի ճամբուն վրայ. ա՛խ, թոան եւ ալ չվերադարձան:

Սեղոյ աղօտ ժպիտ մ'ըրաւ, կրակը կարկով կը մարեն, ցաւը ցաւով կ'ամոքեն: Օտար կին մ'էր, բայց հայ մայր մ'էր, եւ հայ մայրը ամբողջ սիրտ է իր ցեղին դաւակներուն համար:

Ճամբուն աջ կողմը քանի մը հսկայ անիւներ կը դառնային, ջուր կը հանէին խոր ձորէն դաշտեր ոռոգելու համար, անոնք տրտում երգի պէս ձայն կը հանէին եւ ամայի դաշտերը կ'առնէին ու կը սանէին: Բոլորն ալ այդ կողմը դարձան, անիւները կը դառնային, անսովոր երգը կու դար ու կ'անցնէր. կարծես մօր սիրտ մ'ըլլար որ դարերով կ'արտասուէր իր դաւակներուն վրայ:

— Ինչ ցաւոտ երգ է, ըսաւ Վարդուհին մեծ մայրիկը: Աշխա՛րհ, աշխա՛րհ, ո՞ւր պիտի բանաս արդեօք իմ գերեզմանս ալ:

Բայց ինքնաշարժը կը սուրար, Փրանսացին աճապարանք ունէր. երկրորդ օրը շողենաւ պիտի առնէին: Յաջորդ առաւօտեան ծովը տեսնուեցաւ, դունաւոր ճառագայթներ ինկած էին իր ջուրերուն մէջ:

— Ի՞նչ է ատիկա, հարցուց Սեղոյ իր մօտի կնոջը:

— Ծովն է, տղաս:

Սեղոյ աչքերը լայն բացած՝ դիտեց անսահման ծովը եւ ինքնաշարժը կը մօտենար, հասաւ մինչեւ փերուն, լսուեցան մեղմ ալիքներուն ձայները, ժայռերուն վրայէն ջուրը կ'ելլէր ու կ'իջնէր: Տղուն վրայ վախ եկաւ, առաջին անգամն էր որ ծով կը տեսնէր: Պլլուե-

ցաւ Սաթիկին, կարծես թէ ալիքները զիրենք պիտի տանէին: Ուժով բռնեց ինքնաշարժին կողերէն մէկ ձեռքով Սաթիկը դրկած: Աղջնակն աւելի հետաքրքիր էր, կը նայէր եկող դացող ալիքներուն, հեռաւոր հորիզոնին, ուր ծովը չէր վերջանար:

Ծամածուռ փուռներէն, խորտուփորտ ճամբայէն ինքնաշարժը մտաւ Պէյրութ քաղաքը եւ ուղղակի քարափ դնաց: Փրանսական հսկայ շողենաւ մը կանգնած էր ափին, չես դիտեր ճամբորդի՞ շողենաւ թէ անասուններ փոխադրելու նաւ. կանգնած էր անշարժ, կողը դէպի քաղաք դարձուցած:

— Վար իջէք, հրամայեց Փրանսացին:

Կապոցներու, կիներու եւ մանուկներու հանդոյցը քաղուեցաւ. ի՞նչպէս այդքան հողի թխմուած էին ինքնաշարժին վրայ, հանելուկ էր: Սաչ ելլելու եւ խաչէն իջնելու կը նմանէր բեռնատար կառքէն պարպուելը: Քարափին վրայ դրին բեռները, եւ անկենդան ինկան անոնց վրայ: Տեղացիներ եկան ու շրջապատեցին զիրենք. ոմանք գութ ունէին, ուրիշներ բան մը յափըտակելու համար: Պէյրութի մէջն ալ կային դաղթական Հայեր, ո՞ւր չկար հայու բեկոր:

Քանի մը հայ երիտասարդներ օղնութեան հասան: Բարեգործ տիկիներն ուտելիք բերին եւ քիչ մը ժպիտ շողաց հէզ պառաւներու թոռմած այտերուն վրայ:

Սեղոյ եւ Սաթիկ մորտրած կեցեր էին: Ա՛խ, դէթ տիկին Երանուհին հասնէր, դէթ Վարդունը կամ Մարիամը դար իրենց քով եւ Հայկազի բակին վրայ խօսէին, սիրտ սիրտ պատմէին: Ոչ ոք եկաւ, երկու գառներ առանց մայրերու, երկու սիրտեր առանց սիրելիի:

Տիկին Շուշանիկ իրենց մօտն եկաւ, հոգ տարաւ որ զիշերն անցընելու տեղ մ'ունենային, իր մօտը պա-

հեց, Պէյրութի Հայ Տիկնանց Միութիւնը մէկ մէկ հաս պանան տուաւ, անոյշ էր, չէին գիտեր ինչ պտուղ էր, կեղուեցին ու կերան:

— Հատ մ'ալ կ'ուզեմ, ըսաւ Սաթիկ տիկնոջ մը, ինչ համով է, մեր երկրին մէջ տանձ ու խնձոր ունէինք: Տիկինը հատ մ'ալ տուաւ իւրաքանչիւրին:


— Դուք ծնողք, մայր կամ հայր չունի՞ք, հարցուց Սեդոյին:

— Սաթիկը մեծ մայր ունէր, Հալէպ թաղեցինք. ես մայրիկ ունէի, ճամբան կառքէն ինկաւ մեռաւ ու լալկան ուռեների մը տակ թաղեցինք, պատասխանեց պըղտիկը:


— Խեղճ հայ մանկութիւն, խեղճ հայ մանկութիւն, ըսաւ կինը եւ հեռացաւ, անկարող զբաց իր սիրոյ կաթը ջամբելու այդ երկու որբուկներուն:

Յաջորդ օրն առաւօտեան հրաման ելաւ շոգենաւ րարձրանալ: Բարի երիտասարդներ, տիկիներ օգնեցին մենուճար պառաւներուն, բոլորն ալ պէտք էին մեկնիլ դէպի Ֆրանսա, ապա ով գիտէ ո՛ր հեռաւոր աստղերուն տակ ափ մը գերեզման պիտի ունենային:

Շոգենաւը զինուոր փոխադրող նաւ էր, ընդարձակ ննջարաններ ունէր, քովէ քով շարուած խշտեակներ: Սեդոյ եւ Սաթիկ Վարդուհի աղջնակին մեծ մօր քով տեղ առին. իրենց մօտ ծրարը գրին եւ զարմացած կը նայէին այդ հսկայ նաւին որ իրենց տուներէն աւելի մեծ էր եւ ջուրին տակ չէր երթար: Դիտեցին Պէյրութը: Տեսան լացող կիներ, ձեռքի շարժումներ: Շատ էին նաւին մէջ ամէն կողմէն հաւաքուած հայ խլեակներ, անձանթ երեսով, ծանօթ ցաւերով, կ'երթային օտար աշխարհներ պառաւները գերեզման փնտռելու, մանուկ-



Ֆրանսացիները որբեր կը հաւաքէր...



Ֆրանսական շոգեհուս մը կանգնած էր ափին...

ները նոր կեանքի մը նայելու: Ֆրանսան պէտք ունէր իր ամայի դիւղերն օտարներով լեցնելու:

Թարմ արեւի ճառագայթներով ողողուած Միջերկրականի վրայէն շոգենաւը կուրծք տուաւ հանդարտ ջուրին եւ ճամբայ ելաւ դէպի Ֆրանսա: Սուրեց խաղտո ձայնով, քաղաքը լեցուեցաւ իր որոտուն կանչով եւ հորիզոնը բացուեցաւ իրեն առջեւ:

— Յիսուս, Յիսուս, մեռնիմ խաչիդ, ըսին պառաւներն ու երեսնին խաչակնքեցին:

Ի՛նչ ահաւոր ճակատագիր, ի՛նչ սեւ ճակատագիր, պանդո՛ւխտ, պանդո՛ւխտ, պանդո՛ւխտ...:

Հետեւելով իրենց տխուր ճակատագրին, պանդուխտներն ինկան օտար երկիրքի տակ: Սեղոյ Սաթիկին հետ կողք կողքի, կախուած բազրիկներէն՝ ծովը կը դիտէր: Յանկարծ գլխիններու երամակներ ուժեղ ոտուժով ջուրէն դուրս կը նետուէին եւ ճողովիւնով կը սուզուէին ալիքներու տակ:

Ամառնային եղանակ էր, ծովն երկիրքին մէջ, երկինք ծովին մէջ կը ցոլանային՝ եւ անսահման ջուրէ հայելին արեւու խաղերուն տակ ամէն գոյն կ'առնէր:

Մէկ օր հազիւ անցած արդէն ծով ու երկինք էր, աներեւութացան զուարթ օրօրները, Լիբանանի լեռներն ու ցամաքը:

— Սեղոյ, ես կը վախնամ, ըսաւ Սաթիկ, եթէ յանկարծ ջուրին տակ երթանք այդ մեծ ձուկերը մեզ կ'ուտեն:

Եւ նա աւելի պլլուեցաւ մանչուկին:

— Այս նաւը մեր բակէն մեծ է, վախ չկայ, Սաթիկ, պատասխանեց տղան:

Նաւին մէջ կերպով մը յարմարեր էին, աղքատ էր ամէն բան. գաղթականի կեանք, ոչ թէ հաճոյքի ճամ-

բորդութիւն. բազմութիւնը լեցուած էր ամէն կարգի յարկարաժիններուն մէջ:

Թէպէտ տարբեր կեանք էր, շարժուն կեանք էր, սակայն երկու պղտիկները, սրտով կարծես բակին մէջ էին. կը յիշէին Երանուհին եւ Սեդոն լաց կ'ըլլար, անոր նայելով Սաթիկն ալ կու լար. ապա Սեդոյի մայրիկը, տխուր ուռենիի տակ, մինակ, առանց զուակի, առանց սիրոյ:

— Մամա, մամա, յանկարծ գոչեց Սեդոյ, ինչո՞ւ մեզ մինակ ձգեցիր, ո՞վ մեզ իր սրտին վրայ պիտի դնէ օտարութեան մէջ:

— Մի՛ լար, փոքրիկս, ըսաւ Վարդուհի աղջնակին մայրը, ես ձեզի մայրիկ կ'ըլլամ, ես սրտիս վրայ կը դնեմ որ ոսկի երազներով քնանաք եւ ուրախ արեւով արթննաք:

Երեք օր չանցած, հիւսիսային կողմէն տեսնուեցան Կրեւէի լեռներուն դազաթները:

— Լեռնե՛ր, լեռնե՛ր, գոչեց Սեդոյ, եւ մատով ցոյց տուաւ Սաթիկին:

— Արզէն Ֆրանսա՞ հասանք, հարցուց աղջնակը:

Բայց ոչ ոք գիտէր թէ ուր է Ֆրանսան, եւ նաւը լեռներու կողմը չէր երթար, քիթը խրած աղի ջուրին մէջ ուղիղ գիծ մը բռնած էր դէպի Արեւմուտք:

Անցան լեռները, հորիզոնը զիրենք ալ ծածկեց, դարձեալ ծով ու երկինք:

Բայց մէկ օր յետոյ ուրիշ ափունք մը տեսնուեցաւ. Փրանսացին գոչեց.

— Իթալի, Իթալի:

Ի՞նչ էր Իթալին, ո՞ր պառաւր կրնար հասկնալ:

Սաթիկ չոր հաց մը կրծելով կը գիտէր այդ ափե-

րը, որոնց երկայնքին գիւղեր շարուած էին, եկեղեցիներ կը տեսնուէին:

— Սաթիկ, տե՛ս, վրանին խաչ կայ, ըսաւ Սեդոյ ցուցամասն աւելի երկարելով, ուրեմն մեզի պէս քրիստոնեայ են:

— Լաւ նայինք Սեդոյ, արդեօք մինարէներ ալ կա՞ն, ըսաւ Սաթիկ եւ իր սուր աչքերով ցամաքէն չէր բաժնուեր:

Ա՛խ, այդ մինարէները, որոնց շուքերուն տակ այնքան տառապեր էին իրենք եւ իրենց ծնողները, իրենց աչքերուն մէջ սուրի պէս մխուեր էին, ժամանակ պէտք էր ջնջելու համար:

Շոգենաւն հետեւեցաւ ափերուն, շատ մօտէն կը քերէր, լոյսեր երկինքին մէջ, լոյսեր ափերուն վրայ: Փոքրիկներուն երեւակայութիւնը կը զարգարուէր նոր տեսարաններով եւ իրենց տրտում սրտերուն վրայ ապագային յոյսը ճերմակ քօղ մը կը ձգէր: Սաչեր տեսան, քրիստոնեայ են, բարի մարդիկ, զիրենք պիտի չհայածեն:

Հինգ օր յետոյ անցան նեղ ջրանցքէ մը, երկու ափերն իրար եկան, լեռները կախուած էին ջուրերուն մէջ: Երկու քաղաքներ դէմ դիմաց: Իրենք ինչ գիտնալին թէ Մեսսինայի ջրանցքէն կ'անցնէին, ամէն բան զարմանալի էր: Կիւրինի եւ Անատոլիի դաշտերէն յետոյ, Հալէպի բակը տեսած էին. հիմա ջուրերուն մէջ են, ալ վարժեցան, Սաթիկ չէր վախնար, Սեդոյ հետաքրքիր էր եւ կ'ուզէր աչքերուն մէջ պահել ամէն նոր տեսարան:

— Նափը, Նափը, ձայնեց Փրանսացին, երբ լայն ծովախորշի մը մէջ մտաւ շոգենաւը:

Հսկայ քաղաք մը փռուած էր ափերուն, ետեւը լեռ մը կար որ կը ծխար:

Շողենաւը կանգ առաւ քարափին մօտ, բայց հրաման չկար վար իջնելու: Քարափին վրայ բազմութիւն մը խոնուած զիրենք կը դիտէր. այդ ժամանակ քիչ էին նաւային երթեւեկները:

— Արանջէ, լիմոնի, ուվա, կը կանչէին վարէն եւ լիալիը կողովները ցոյց կու տային անօթի ճամբորդներուն: Սեղոյ եւ Սաթիկ նարինջ, լիմոն տեսած էին, սաթի դոյն խաղողը կը ճանչնային:

— Սեղոյ, ես խաղող կ'ուզեմ, ըսաւ Սաթիկ, նարինջ, լիմոն չեմ ուզեր:

— Աժան կու տամ, առատ կու տամ, վարէն կը պոռաք վաճառորդը ցոյց տալով պտուղները:

Սեղոյ իր ծրարին մէջէն փոքրիկ դրամ մը հանեց եւ դնաց դէպի կամրջակը, վար կ'ուզէր իջնել, խաղող դնել Սաթիկին համար: Պահակ զինուորը թոյլ չտուաւ:

— Ես հայ քրիստոնեայ եմ, ըսաւ Սեղոյ եւ երեսը խաչակնքեց: Իր կապոյտ աչքերով հարցական՝ զինուորին նայեցաւ: Մօտեցաւ իրեն սպայ մը, շոյեց փոքրիկին գլուխը, հմայիչ տղայ մ'էր: Նա լսած էր թէ նաւն անբախտ ժողովուրդի մը թշուառ դաւակներն հեռու աշխարհ կը տանէր: Բռնեց Սեղոյին ձեռքն եւ միասին վար տարաւ: Տղան խաղող ծախողին մօտեցաւ, հանեց իր փոքրիկ արծաթը եւ ափին մէջ դնելով վաճառորդին երկարեց:

Սպան ձեռքով ետ ըրաւ դրամը եւ ինքը վճարեց խաղողի գինը: Սեղոյ կը նայէր նաեւ նարինջներուն. հատ մ'առաւ եւ հոտուրտաց:

— Արանջէ, արանջէ, ըսաւ սպան եւ քանի մը հատ տղուն ծոցը դրաւ: Սիրուն էին նարինջներն, ոսկիի պէս

կը փայլէին: Սպային հետ շողենաւ բարձրացաւ, խաղողն ափերուն մէջ, նարինջը ծոցին մէջ: Սաթիկ խաղոյն ողկոյց մ'առաւ եւ երկու ձեռքերով բռնած, դրեթէ խածնելով սկսաւ ուտել:

— Վարդուհի, ա'ն այս պտուղները, ըսաւ բակին պղտիկը, եւ աղջկան դիւրիկը դրաւ:

Ինքը բռնեց սպային ձեռքն ու համբուրեց.

— Շնորհակալ եմ, ըսաւ հայերէն:

Սպան բառերը չհասկցաւ, բայց տղուն սիրտը հասկըցաւ, շոյեց դարձեալ փոքրիկին գլուխը եւ հեռանալով ըսաւ.

— Եւ այսպիսի ժողովուրդ մը վայրագօրէն ջարդել: Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ երկինքէն կրակ չթափեցիր:

Սեղոյ խաղողը բաժնեց իր շուրջի փոքրիկներուն, ինք հաղիւ քանի մը հատիկ բերանը տարաւ, նարինջը խածաւ, Հայֆայի նարինջներուն չէր նմաներ:

Երբ կէսօր եղաւ Նափոլիի զանգակները սկսան միասին հնչել, քաղցր երաժշտութիւն մը լեցուց կապուտակ երկինքը: Կիւրինի զանգակը տանիքներէն չէր բաժնուեր. Հալէպի մէջ մոլլաներուն խապոտ ձայնը լըսած էր. հիմա երկինքն էր որ կ'երգէր հազարաւոր հրեշտակներու հետ:

Երեկոյեան մօտ շողենաւն ուժգին սուլեց, երեք անգամ իր խապոտ ձայնը լեռներուն դնաց ու եկաւ: Շողենաւը ճամբայ ելաւ:

— Դեռ պիտի երթա՞նք, հարցուց Սաթիկ Սեղոյին. աշխարհիս ծայրն հասանք. ես ձանձրացայ հոս մնալէն:

— Ի՞նչ գիտնամ Սաթիկ, թէ ո՞ւր պիտի հասնինք, պատասխանեց պղտիկը, ա'խ, եթէ մամաս ըլլար, նամէն բան գիտէր:

Շուրջ երկու օր պէտք էր Ֆրանսա հասնելու համար, բայց ճամբորդները դադարաւոր չունէին ժամանակի, օրերն արեւով կը համբէին, ժամերն հաշիւի չէին առներ:

Երկու օր յետոյ առաւօտեան դէմ Ֆրանսացին ժրպտադէմ դռչեց.

— Ֆրանս, Ֆրանս:

— Կարծեմ հասանք, ըսաւ Սեդոյ Վարդուհիին, Ֆրանսը, Ֆրանսա պէտք է ըլլայ:

— Հոն ալ մեզի խաղող կու տա՞ն, հարցուց Սաթիկ:

— Կ'ըսեն թէ Աստուծոյ ամէն օրհնութիւնը կայ, պատասխանեց Սեդոյ, կարագով հաց ալ պիտի ունենանք:

— Ես ձանձրացեր եմ, ըսաւ Սաթիկ, չոր հաց եւ ջրոտ ապուր ուտելէն, բակին մէջ գէթ երբեմն միս ալ կ'ուտէինք. այդ Ֆրանսացին չեմ սիրեր. ողնի պէխեր ունի, մեզի բան չի տար:

— Ես ալ չեմ սիրեր, պատասխանեց Սեդոյ, ինքն համով բաներ կ'ուտէ, մեզի անօթի կը ձգէ:

Դեռ արեգակը բարձր էր հորիզոնին վրայ, երբ շողենաւ մտաւ Մարսիլիայի խորշը:

— Մարսիլ, ըսաւ Ֆրանսացին: Նաքրը Տամ տը լա կարտ, ցոյց տուաւ իր հաստ ցուցամատով:

Բայց ոչ ոք հասկցաւ իր լեզուն, բոլոր ճամբորդներն ուշադիր քարափը կը դիտէին եւ ժայռի մը կատարին, երկինք ցցուած աշտարակներով, եկեղեցի մը կարծես զիրենք կը դիմաւորէր, անոր կատարին ոսկեզօծ արձան մը կար: Երբ աւելի մօտեցան.

— Աստուածամա՛յր, Աստուածամա՛յր, դռչեցին պառաւները, մեռնիմ սուրբ անունիդ:

Բաւական երկար ժամանակ անցաւ մինչեւ որ պաշտօնական քննութիւնները կատարեցին:

— Ասոնք Ասիայէն կու դան, ազտոտ մարդիկ են, ըսաւ բժիշկ մը իր ընկերներուն, լաւ նայեցէք հիւանդներ չըլլան:

Ճամբորդները մէկիկ մէկիկ քննութենէ անցան, Սեդոն ու Սաթիկ ձեռք ձեռքի անցան բժիշկին առջեւէն:

— Ինչո՞ւ այդ անպէտ պառաւներն արեւ բերեր են, ըսաւ ինքնիրեն, ասոնց պէս թարմ ուժերու պէտք ունի Ֆրանսան, ոչ թէ դերեզմաններ լեցնելու:

Նա պէտք էր հասկնալ թէ Սեդոյի, Սաթիկի եւ ուրիշ մանուկներու պէս թարմ ուժեր աշխարհ բերողն այդ պառաւներն էին, որոնք աշխատող եւ խելացի ազգի մը մայրերն եղած էին, արժանի էին ամէն յարգանքի եւ պաշտամունքի:

Վայրէջքը ծայր տուաւ, պառաւները քաշկոտելով իրենց ծանր կապոցները, սկսան իջնել:

Վարէն հայերէն բառեր լսուեցան, յանկարծ երիտասարդ մը ուժգին պոռաց.

— Մայրիկ, մայրիկ, եւ ճեղքելով բազմութիւնը սանդուղէն վեր բարձրացաւ:

Շատեր եկած էին ազգական, տեղացի կամ ծանօթ փնտռելու եւ պառաւները սիրտ առին, իրենց ծանր ծրարները իջեցնող կար:

Քարափին վրայ շարուեցան, տարտամ էին, շատեր տրտմօրէն կը դիտէին խոնուած բազմութիւնը. գէթ ծանօթ դէմք մը, տեղացի մը տեսնէին:

Սեդոյ Սաթիկին ձեռքէն բռնած մեկուսի կանգներ էր, երկու որբեր էին, իրենք էին տարագրութեան իսկական պատկերը: Քանի մը կիներ դտան բարեկամ ծա-

նօթներ, աշխարհս իրենց եղաւ, լոյս իջաւ պղտոր աշ-
քերուն մէջ:

— Այս պառաւ կիներն ինչո՞ւ բերած են, ըսին ի-
րարու Փրանսացի գիւղացիներ, որոնք քարափ թափեր
էին, դաշտերու մէջ աշխատող բազումներ փնտռելու:

— Սա մանչուկը, ըսաւ գիրուկ եւ հաստ թեւերով
գիւղացի մը, իմ գործիս կու գայ, սարը կը զրկեմ ոչ-
խար արածելու:

Մօտեցաւ Սեդոյին եւ գէր ու կարճ մատներով ա-
նոր երեսը շոյեց, տղան ետ գնաց, կարծես վախ եւ
պժգանք զգաց: Սաթիկ պլլուած բակի պղտրիկին, կաս-
կածոտ աչքերով մարդուն նայեցաւ: Գիւղացին գրպա-
նէն շաքարեղէն հանեց եւ տղուն երկարեց: Սեդոյ դար-
ձեալ ետ գնաց: Ինչ պիտի ընէր անոր շաքարեղէնը,
թերեւս աղտոտ գրպանին մէջ տարի մը մնացած էր.
վրայի թուղթը գեղնած էր, ուշ աշնան տերեւի նման:

Իրենց ընկերացող Փրանսացին սկսաւ ասոր անոր
բաժնել մանուկներն ու աղջնակները. պառաւները տէր
չունէին, ծախու ապրանք չէին. ո՛վ պարապ բերանի
հաց ունէր անոնց տալու համար:

Գէր գիւղացին մօտեցաւ շոգենաւի Փրանսացիին,
սկանջէն փսփսաց, մատով ցոյց տուաւ Սեդոն:

— Պէտք է որ այդ փոքրիկ աղջնակն ալ հետն առ-
նես, ըսաւ շոգենաւի մարդը, ասոնք քոյր եղբոր պէս
են, մէկ հոգի երկու աչքեր են:

— Աղջնակը պէտք չէ ինձ, ես արդէն երկու փո-
քրիկ աղջնակներ ունիմ, պարապ հաց չունիմ անօթի-
նէր կշտացնելու:

— Տար, ըսաւ, բայց ինձ բան մը վճարէ, գէթ
ճամբու ծախքն հանեմ:

Գիւղացին երեսուն Փրանք համրեց անոր ափին մէջ
եւ Սեդոյին ձեռքէն բռնեց ծովափէն դուրս տանելու
համար: Տղան դիմադրեց, լացաւ, Սաթիկ Սեդոյին կը-
պած էր, երկուքը մէկ կը քաշկոտուէին: Շոգենաւի
Փրանսացին ետ քաշեց Սաթիկը: Իրենց ծրարիկը Սա-
թիկին մօտ գետին մնացած էր:

— Սեդո՛յ, Սեդո՛յ, լալով պոռաց անոր ետեւէն հէգ
Սաթիկը:

— Սաթի՛կ, Սաթի՛կ, Փարիզ Հայերուն եկեղե-
ցին...

Այս եղաւ վերջին խօսքը եւ երկու սրտեր դարձեալ
ճեղքուեցան, հասած նուռի նման:

— Կոչտ գիւղացի, ըսին բարեսիրտ Փրանսուհի-
ներ, չէ՞ր կրնար այս խեղճ աղջնակն ալ հետն առնել
եւ պատառ մը չոր հաց տալ:

— Գիւղացիին համար հաւն աւելի արժէք ունի քան
թէ մարդը, պատասխանեց ուրիշ կին մը:

— Աստուծոյ սիրոյն, ձեր մէջ մէկը չկա՞յ այս
խեղճ աղջնակը որդեգրելու եւ մեծցնելու համար, մէկ
երկու տարիէն լաւ աղախին կ'ըլլայ. ձրի աշխատող,
պատառ մը հաց ու չոր անկողին մը կը բաւէ, ըսաւ
շոգենաւի Փրանսացին:

Բազմութեան մէջէն դուրս եկաւ բաւական երիտա-
սարդ կին մը.

— Ինձի տուր, ես տունս կը տանիմ, սիրուն աղ-
ջիկ է, թերեւս օր մը հարս ըլլայ մանչուկիս: Եկուր
աղջնակս, դարձաւ Սաթիկին. պղտրիկը ետ ետ գնաց,
եւ աւելի լացաւ:

— Սեդո՛յ, Սեդո՛յ, կանչեց յուսահատ:

— Խենթ աղջիկ, ինչո՞ւ կու լաս, գէթ մէկը քեզի

տէր եղաւ, զլիսուդ վրայ տանիք մը պիտի ունենաս, ըսին հայ պառաւանները:

— Իսկ մենք, ի՞նչ պիտի ըլլանք, ըսաւ թոռմած կին մը եւ աչքերը սրբեց մաշած գոգնոցով:

Սաթիկը մինակ էր, առանց Սեղոյին չէր կրնար ապրել, չէր հասկնար այդ երկրի լեզուն. այդ կինը թերեւս բարի մայր ըլլար, բայց ո՞վ էր, ո՞ւր պիտի տանէր զինքը: Երիտասարդ կինն հասկեցաւ աղջնակին ցաւը եւ ամէն անոյշ կերպ բանեցուց անոր վստահութիւնը շահելու համար. անուշեղէն տուաւ, շոյեց զինքը, ծրարիկն առաւ իր թեւին տակ եւ բռնեց Սաթիկի թեւէն:

— Սեղո՛յ, Սեղո՛յ, դարձեալ գոչեց Սաթիկ:

— Սեղոյ, Սեղոյ, կրկնեց կինը:

Աղջնակին աչքերը փայլեցան, կարծեց թէ զինքը Սեղոյին պիտի տանէր եւ կինը շողեկառք առնելով մեկնեցաւ դէպի Լիոն:

Բայց Սեղոն աւելի անբախտ էր. զիւզացին ձիու կառքի մը վրայ դրած, գրեթէ պատանին կառքին կապած, ճամբայ ինկաւ անորոշ ուղղութեամբ: Գրեթէ մէկ օր ամբողջ քշեց կառքը դէպի հիւսիս. հասան լեռնային չրջաններ, չեմ գիտեր, անշուշտ դէթ յիսուն մը զոն ճամբայ կտրեց եւ խոր հովիտի մը մէջ կորսուած գիւղ մը հասաւ, կանգ առաւ ցած կտուրով տան մը առջեւ, ներս ձայնեց.

— Էլի՛՛ղ, Էլի՛՛ղ, Էլի՛՛ր, քեզի մանչուկ մը բերի, աղուոր մանչուկ մը, մեր ոչխարներն արածող հայ տղայ մը:

Կինն ամուսինին յարմար մէկն էր, կարճ հասակով, թիկնեղ, զոյգ մը սիւներու վրայ բարձրացած մսեղէն արձան մը, նման այն գեղջուկ Փրանսուհիներուն՝ ու-

րոնք իրենց հողին փառքն են: Կինը լաւ մը գիտեց պղպտիկը, վերէն վար չափեց հասակը, աչքերուն նայեցաւ, կապոյտ էին քան իրենց երկինքը: Իրենց երկու փոքրիկ աղջնակները մօրը փեշերէն կախուած գիտեցին բակին պղպտիկը, ժպտեցան, իրենց ժպիտն անմեղ էր, մանուկը մանուկէն կը հասկնայ:

Սեղոյ խոռոված կատուի նմա կանգնած էր կառքին մօտ, աչք չուներ զիրենք տեսնելու, սիրտ չուներ անոյշ չունչ մ'առնելու:

— Ի՞նչ ազդ է Հայը, հարցուց կինն ամուսինին. երբեք չեմ լսած Հայ անունը:

— Ես ալ շատ բան չեմ գիտեր, Թուրքիոյ մէջ գերի ժողովուրդ մ'էր, քրիստոնեայ են, Թուրքերը զիրենք դուրս վճռեցին իբրեւ երկրին թշնամիները:

— Հարկաւ բան մ'ըրած են, ըսաւ կինը, մարդս մարդը պարապ տեղ կը սպաննէ՞, կը վճռո՞ւ իր տունէն: Ուրեմն այս տղան ի՞նչ պիտի ըլլայ, եթէ այդպիսի ազդի մը զաւակն է:

— Եթէ պէտք ըլլայ, ես կը շտկեմ, պատասխանեց ամուսինը:

Մութ էր արդէն, ներս գացին եւ լապտերները վառեցին: Սեղանը պատրաստ էր: Իրենք շարուեցան եւ Սեղոն ալ դետինը նստեցուցին, պնակ մը ապուր եւ խաշած դետնախնձոր դրին առջեւը, խոշոր կտոր հաց տուաւ կինը, ձեւեր ընելով թէ պէտք է ապուրին մէջ փրթել եւ ուտել: Տղան ախորժակ չուներ, ոչ ալ ապուրին մօտեցաւ. տրտում աչքերով նայեցաւ իրենց սեղանին, լացն եկաւ, յիշեց թէ իր տան մէջ կարագով հաց կ'ուտէր, ծնողքին հետ մէկ սեղանի կը նստէր, ինքն ալ մարդ էր, ոչ թէ շուն մը սեղանի փշրանքներ հաւաքելու:

— Թող վաղն ուտէ, ըսաւ մարգն իր կնոջը:

Սեղանը վերցուցին եւ Սեղոյի առջեւէն պնակն ալ առին: Տղան դեռին նստած, մտածկոտ աչքերով կնոջ նայեցաւ, սենեակին պատերը դիտեց. ելեկտրական լոյսը մեղմ կը հալէր եւ դեղին շողեր կու տար կիսամութ ձեղունին:

— Ո՞ւր պիտի պառկեցնենք զինք, հարցուց կինը:

— Վարը խոհանոցին մօտ փոքրիկ սենեակը թող պառկի, ասոնց ցեղը միշտ խոտի վրայ կը պառկի, ցեխին մէջ կամ ախոռները:

— Մարագէն խոտ բերեմ եւ գէթ վրան բան մը ձըզենք որ քնանայ, մեղք է փոքրիկը, ըսաւ կինը:

— Գէշ չվարժեցնես, սաստեց ողնիի պէխերով գիւղացին. նախ պէտք է նայինք թէ ինչ ապրանք է, յետոյ պէտք եղածը կ'ընենք:

Կինը մեղքեցաւ պզտիկին, խոտին վրայ վերմակի պէս բան մ'ալ փռեց: Սեղոյ յողնած էր, կ'ուզէր մինակն ըլլալ, իր փոքրիկ յուշերով ապրել:

Երբ կինն հեռացաւ ճրագը մարելով, տղան վախ զգաց մութին մէջ, եթէ քաջարի մէկը չըլլար պիտի պոռար, պիտի լար, սակայն Սեղոյ զսպեց ինքզինքը, համոզեց ինքզինքը թէ վախնալու բան չկար:

Քիչ վերջ մէկը կամացուկ մը դուռը բացաւ, լոյսը վառեց. դիւղացիին մեծ աղջնակն էր, իննամեայ Սիւզանը: Թուղթի մը մէջ կարկանդակ դրած Սեղոյին հրամցուց:

— Կեր, ըսաւ ժպիտով, դուն անօթի մնացիր. իմ բաժինս քեզի բերի:

Սեղոյ աղջկան լեզուն չհասկցաւ, բայց զգաց թէ բարի սիրտ մը, փոքրիկ սիրտ մը որ մարդկային չոր հաշիւներ չէր դիտեր, եկած էր զինքը գտնելու: Ժրպ-

տեցաւ բակին պզտիկը, տժգոյն ճառագայթի նման. թէպէտ բան մ'ուտելու փափաք չունէր, բայց ի՞նչպէս մերժել այդ աղնիւ սիրտը: Աղջնակը քովը նստեցաւ, Սեղոյ անուշեղէնը կերաւ:

— Ծնորհակալ եմ, շատ համով է, ըսաւ եւ ձեռքերով նշան ըրաւ իր սիրտն հասկցնելու համար:

Այժմ կրնար քիչ մը սփոփած քնանալ, սիրտ մ'եկաւ իր սրտին վրայ մատ մը սպեղանի քսեց:

Առաւօտեան կանուխ արթնցաւ, փափուկ արեւ մը դարկած էր մօտակայ լեռներուն կատարին, հովիտը մութ կանաչ կերպասի պէս կը փայլէր: Վերցուց խոտերը եւ մարագ տարաւ, ծալեց վերմակը պատին անկիւնը:

— Սիւզան, ըսաւ դիւղացին իր աղջկան, ոչխարները դուրս հանէ եւ այդ Հայուն հետ սարը տար, թող սորվի թէ ուր կը տանինք զանոնք արածելու համար:

Քսանըհնդ հատի չափ ոչխարներ եւ գառներ սկըսան դէպի սարը բարձրանալ. Սեղոյին ձեռքը տուին լաթի մէջ պլլուած քիչ մը հաց եւ պանիր, իր կէսօրուան ճաշն էր: Իրենց հետեւեցաւ բրդոտ հովիւի շուն մը Գիւտն, նա յաճախ հոտուրտաց նորեկ հովիւը, չորս կողմը դարձաւ: Սեղոյ սկիզբը վախցաւ այդ դայլանման շունէն, բայց Սիւզան բարեկամացուց զիրենք:

Սարը բարձրացան, հեռուն լայն հորիզոն մը կար եւ աւելի հեռուն բարձր լեռներ կը տեսնուէին. ոմանք ձիւնապատ էին:

— Լէ գ'Ալք, ըսաւ Սիւզան, մատն այն կողմն երկարելով:

Տղան չէր դիտեր թէ աշխարհիս վրայ Ալպեան լեռներ կային, յետոյ սորվեցաւ:

Աղջիկը պէտք էր կէսօրին տուն վերադառնալ, իր հօր հրամանն էր, բայց նա ուզեց Սեդոյի մօտ մնալ: Հացն ու պանիրն ազրիւրի մը քով միասին կերան, կըտոր մը շան տուն: Սակայն Սիւզան Սաթիկը չէր: Ա՛խ, միասին ըլլային միասին սարն ելլէին եւ պատմէին, հազար անգամ պատմէին իրենց բակին կեանքը:

Սիւզան չէր հասկնար թէ ի՞նչ կար այդ փոքրիկ սրտին մէջ, բայց ամէն ջանք թափեց զայն ուրախ պահելու համար: Բարի բնազդով հակազդեցութիւն մը զգաց իր ծնողքին բռնած չոր դիրքին համար այդ խեղճ օտարականին հանդէպ: Սեդոյ կամաց կամաց սորվեցաւ տեղական լեզուն, պարզ բառերով ինքզինքն սկսաւ բացատրել, բայց դեռ շատ բառեր կը պակսէին՝ Սիւզանին, միայն, Սիւզանին պատմելու համար իր անաւոր դողոթման: Տան մէջ երկու մտերիմներ ունեցաւ. Սիւզանն ու Ֆիտոն, խիկ միւսիւնն եւ մատամբ միշտ նոյն կարծի սրտերն էին, անոր փոքրիկ աղջնակը երեք տարեկան էր, դեռ շատ մանուկ էր Սեդոն հասկնալու համար:

Թերեւս վիշտերն աւելի անոյշ յիշատակներ ձգեն մեր կեանքին մէջ քան թէ ուրախ օրերը, Սեդոյ վարձեցաւ այդ չոր կեանքին, տան տիրոջ եւ կնիկին համար օտարական ծառայ մ'էր, խեղճ հովիւ մը, անվարձ աշխատող մը, բայց աղջնակին համար սիրելի եղբայր մ'էր: Սիւզան տեսաւ անոր մէջ ազնիւ եւ վեհանձն հոգի մը, պարկեշտ եւ աշխատող, առջեւն ոսկի դնէիր՝ վրան չէր նայեր: Բայց անգամ մը սաստիկ ծեծ կերաւ տանտիրոջմէն, իր կնոջ ոսկի մատանին չկար, փնտռած էին տան ամէն մէկ անկիւնը եւ չկար ու չկար:

— Գող մը բերիւր մեր տունը, ըսաւ կինը դանդաւտելով:

Տղան վերէն վար մերկացուցին եւ դրպանները, իր աղքատ սենեակը փնտռեցին, դարձեալ չկար:

— Անշուշտ սարը տարած քարի մը տակ պահած է, ըսաւ ամուսինը: Ես ասոր ոսկորները կը ջարդեմ եթէ դուրս չհանէ մատանին:

Սիւզան վստահ էր թէ Սեդոն անմեղ է, բայց ի՞նչ պէս հասկցնէր իր կոշտ հօրը:

Շարաթ մը վերջ կինը լուացք ըրաւ, իր մատները դպան պարեգօտին (Ֆիստան) խոր դրպանին, չոր բան մը զգաց եւ անա մատանին դուրս ելաւ:

— Պարապ տեղը այս խեղճ տղան ծեծեցիր, ըսաւ ամուսինին, մատանին պարեգօտիս դրպանը մոռցած էի:

— Հոգ չէ, ուրիշ անգամուան համար կը ծառայէ, թող դիտնայ թէ այս տան մէջ շատ աչքեր կան, որ իր վրան կը հսկեն:

Սեդոյ իր հոգիին մէջ վիրաւորուած էր, ծեծը հոգ չէր, կ'անցնէր, բայց դողի մըտտ անունն իր երեսէն չկրցաւ սրբել: Սիւզան ջանաց մոռցնել տալ:

— Սեդոյ, մարդիկ սխալական են, պէտք է ներել եւ մոռնալ, դուն այդ խօսքերով դող չեղար, մանաւանդ թէ աւելի փայլեցար մեր աչքին, մարդս կրակին մէջ նետելով կը փորձեն, ոսկին ալ այսպէս կը փայլի, քեզ ճանչցած եմ, ոսկի ես, հրեշտակ ես, երանի թէ Ֆրանսացի տղաները քեզի պէս ըլլային:

Սեդոյ աւելի եւս քաշուեցաւ ինքն իր մէջ, տանտիրոջ եւ անոր կնոջ հետ պաղ յարաբերութիւն ունէր, հնազանդ էր, պարտաճանաչ, բայց ոչ աւելի, լուկ Սիւզանին հետ հաճոյքով կը խօսէր, անոր պատմեց իր եղերական կեանքը եւ աղջիկն աւելի կապուեցաւ այդ

օտարական պատանիին հետ. տեսաւ անոր մէջ հերոս մանուկ մը՝ որ հակառակ այնքան տանջանքներու, չար ու բարի օրինակներու պահած էր մաքուր նկարագիր մը եւ առաքինի վարք մ'ունէր: Ինչ պիտի ըլլար եթէ իր ցեղէն մէկը Սեդոյին տեղն ապրած ըլլար յետին աղքատութեան մէջ, անօթի ծարաւ օրեր անցուցած ըլլար, անշուշտ գոյ մը, փողոցի ստահակ մը եւ անբարոյական մէկը:


Սեդոյ ամէն օր ոչխարները սարը կը տանէր, Ֆիտոն իրեն կը հետեւէր մտերիմ ընկերօջ նման: Ի՞նչ կեանքի տարօրինակ փոփոխութիւն, ու՛ր էր, ուր եկաւ, ինչաւ, պատառ մը հացի համար, կեանք մը պահելու համար պէտք էր ամէն օր բարձրանալ ամալի սարերը, ժայռերուն եւ ծառերուն հետ մտերմանալ, դէթ չէր տեսներ ոգնիի պէխերով մարդը որ երբեք իր խստութիւնը չմեղմացուց հէզ պատանիին հանգէպ:

Իր ոտքերն սկսան ուռիլ ու ցաւիլ, հազիւ կրնար վեր բարձրանալ, պէտք էր դանդաղ քայլել ու ստէպ ժայռի մը վրայ հանգիստ առնել: Ես ալ կրե՞ր եմ այդ ցաւն երբ մեր սարերուն վրայ գառներ կ'արածէի, եւ շատ անգամ ուրիշներ վրկած դիս տուն կը տանէին, բայց ո՞վ պիտի հասկնար տղուն վիշտը, ո՞ր մայրը տաք ջուրով պիտի լուար անոր ոտքերը եւ պիտի ըսէր.

— Տղաս, սարը մի երթար, դուն հիւանդ ես, ծունկերդ դեռ չեն հաստատուած, դուն մատղաշ ուռենիի պէս դիւրաբեկ ես:

Տան մէջ միայն Սիւզան կը մեղքնար Սեդոյին վրայ եւ երեկոնները տաք ջուրով կը լուար անոր ոտքերը: Քրոջական սէր մ'ունէր այդ աղջիկը տղուն հանգէպ. ինքը միայն դիտէր անոր տառապած անցեալը. բայց ի՞նչպէս հասկցնէր իր քարսիրտ հօրը թէ տղան հիւանդ





... եւ երկու ձեռքերով պլլուեցաւ վահանի մէջքին...

է, չի կրնար սար երթալ. արդէն միշտ կը մըմռային թէ երկուքը շատ մտերիմ են:

— Աղջիկո՛, կ'ըսէր շատ անգամ մայրը, Սեղոն անանուն, անծանօթ ցեղի մը զաւակն է, քեզի չի վայելիր, դուրսը կը խօսին:

— Եթէ անասուններուն հանդէպ պէտք է գուր ունենանք, կը պատասխանէր Սիւզան, որքան աւելի այս անբախտ Սեղոյին հանդէպ. մայրիկ եթէ զիտնայիլ թէ ինչ ահաւոր անցեալ ունի, սիրտդ կտոր կտոր կ'ըլլար:

Իրենց զիւղին մէջ ո'չ բժիշկ կար, ոչ ալ դեղարան, Սիւզան քիչ մը դրամ խնայեց եւ մօտակայ Մալոշ զիւղի բժիշկին բացատրեց Բակի պզտիկին ցաւերը, նա դեղագիր մը գրեց. օծանելիք էր. դեղը բաւական մեղմացուց ոտքի ուռեցքը եւ ցաւերը:

Ի՞նչ տաժանելի կեանք, միապաղաղ, մարդկութենէ հեռու, կորսուած զիւղի մը մէջ միայն անասուններու հետ ապրիլ, պատառ մը հաց, դաւաթ մը կաթ խմելու համար: Իր ոտքերուն անցուցած էր մաշած կօշիկներ, զորս տէրը կու տար երբ բոլորովին անգործածելի էին, վրան ձգած էր այնքան պատառոտուն վերարկու մը՝ որուն կարկտաններն ասեղ չէին բռներ. եւ սակայն իրեն ըսած էին թէ Ֆրանսայի մէջ կարագով հաց պիտի ուտէր, բուրդէ անկողինի մէջ պիտի պառկէր եւ ոսկի կոճակներով հագուստ պիտի ունենար. արեւելքի երանելի՛ երազներ:

Երեք տարի այսպէս քաշքշեց թշուառ կեանք մը. սարէն տուն, տունէն սար երթալով. անգամ մը, կարծեմ Զատիկին էր, գնաց այն Մալոշ զիւղն ուր բժիշկ եւ դեղարան կար: Գիւղի տղաք իր խօսքերէն հասկցան որ օտարական տղեկ մ'է:

— Հայ եմ, պատասխանեց Սեղոյ:

— Արմէնիէ՞ն :
 — Այո՛, Արմէնիէ՞ն :
 — Հոս ալ Արմէնիէն տղայ մը կայ, ըսին մանչերը, հոն այն տղան է որ պատին տակ կայինք է :
 Սեղոյ իսկոյն անոր կողմը վազեց .
 — Դուն հա՞յ ես, հարցուց մայրենի լեզուով :
 — Այո՛, ես ալ հայ եմ, պատասխանեց, Սեղոյէն քիչ մ'աւելի տարիքոտ պատանին :
 Գրկեցին զիրար եւ կարօտով համբուրուեցան :
 — Այո՛, հայ եմ, Յունաստանի որբերէն, ինծի պէս հազարաւորներ բերին Ֆրանսայի մէջ հող մշակելու համար . որբին համար արեւուն տակ ուրախ տեղ չկայ : Բայց այդ ի՞նչ ցնցոտիներ հագուեր ես : Քանի՞ տարի է այդ դիւզին մէջն ես, հարցուց Սեղոյին :
 — Երեք տարի եղաւ :
 — Երեք տարի ձրի աշխատիլ եւ վրան լաթ մը չունենալ, ի՞նչ անդուժ աշխարհ, ի՞նչ անդուժ մարդիկ :
 Պատանին Սեղոյին ձեռքէն բռնեց իր տիրոջ տունը տանելու համար : Բակին պզտիկը շատ ուրախ էր . հայ էր իր ձեռքէն բռնողը, հայը հայուն սրտակից է, մանաւանդ օտարութեան մէջ :
 — Իմ անունս Սեղոյ է, ըսաւ պզտիկը . ես Կիւրինէն եմ, զիս Հալէպի Կիւրինցիներուն բակէն հոս բերին, ըսին թէ Ֆրանսայի մէջ կարագով հաց կու տան, բուրդէ անկողինի վրայ կը պառկեցնեն եւ ոսկի կոճակներով հագուստ կու տան : Քու անունդ ի՞նչ է, եղբայր :
 — Իմ անունս Վահան է, Պարտիզակցի եմ, մեզ Յունաստան տարին, անկից Ֆրանսա բերին . մեզի ալ ըսին թէ հոն ուսում պիտի առնէք, մարդ պիտի ըլլաք, բժիշկ, ճարտարապետ պիտի ըլլաք եւ հազարաւորներ

սիւնեցիներ ցորենի նման, Ֆրանսայի անասման դաշտերուն մէջ :
 Հասան Վահանին բնակարանը :
 — Միւսիւր (պարոն) Արման, ըսաւ Վահան, այս պատանին ինծի պէս հայ է . ես կ'ուզեմ քովս պահել, շատ թշուառ կեանք մ'ունի վերի գիւղին մէջ :
 — Որո՞նք քովն ես, հարցուց տանտէրը :
 — Պարոն Ֆելիքսին քով, պատասխանեց Սեղոյ :
 — Ձէ՛, չէ՛, ի սէր Աստուծոյ : Ես այդ մարդուն հետ ինչդիր չեմ ուզեր ունենալ, այս կողմերուն ամէնէն գէշ մարդն է . ո՛չ բարեկամ ունի, ո՛չ դրացի ունի : Խեղճ տղայ, ի՞նչ սեւ ճակատագիր ունիս :
 Սեղոյ Վահանին ձեռքը բռնած՝ տրտում գլուխը կախեց :
 — Ուրեմն տուն վերադառնամ, Վահան եղբայր :
 — Կրնա՞ս շարաթ մ'ալ համբերել, ըսաւ հայերէն :
 — Երկու շարաթ ալ, ամիս մ'ալ :
 — Մի՛ տրտմիր, Սեղոյ, ես պիտի ազատեմ քեզ այդ բռնաւորէն . գէթ շարաթ մ'ալ համբերէ :
 Վահանին տէրն աւելի ազնիւ ու մարդասէր էր, ոչ միայն կերակուր եւ հագուստ կու տար, այլ բան մ'ալ կը վճարէր անոր աշխատանքին փոխարէն : Վահան Սեղոյին տուաւ իր հագուստներէն եւ անոր զգեստներն աղբանոց նետեց . կարագով հաց տուաւ, զոր մանչուկը շատ կը սիրէր : Ձեռք ձեռքի իրենց ցաւն ու սիրտն իրար խառնելով մեկնեցան մինչեւ վերի գիւղին մօտերը :
 — Գալ այսօր Նոր Կիրակի է, ըսաւ Վահան, դուն ոչխարները լեռ պիտի տանիս անշուշտ :
 — Այո :
 — Մի՛ բարձրանար սարը, ձգէ ոչխարներն . ելլեն վեր, դուն գիւղէն քիչ մը վար, քարի մը ետեւը պահ-

ոււրտէ՛. ես ժամը իննին մօտերը ձիով այդ տեղէն կ'ան-
ցնիմ, քեզ ձիուս վրայ կը դնեմ եւ կը փախցնեմ: Տու-
նէն բան մ'ունի՞ս առնելիք:

— Ոչ մէկ բան:

— Դրամ ալ չունիս:

— Դրամի երեսը չեմ տեսած:

— Ինչ անգութ մարդ: Հող չէ, ես դրամ ունիմ:
Քեզ շոգեկառք կը դնեմ եւ Փարիզ կը զրկեմ, հոն Հա-
յերու եկեղեցին կ'երթաս եւ ճար մը կ'ընեն:

— Սիւզանին իմաց տա՞մ թէ կը մեկնիմ:

— Ո՞վ է Սիւզանը:

— Տան տիրոջ աղջիկը, շատ բարի է: Եթէ ինքը
չըլլար, թերեւս չզիմանայի այս կեանքին:

— Անորոջ բաներ մը ըսէ, բայց չյայտնես մեր ծը-
րադիրը. աղջիկ է, բերնին մէջ հապ չի թըջիր:

Սեղոյ համբուրեց Վահանը եւ բաժնուեցաւ, ար-
դէն իր բնակած տան բաւական մօտ էր: Երբ տուն մը-
տաւ տան տիրուհին զինքը տեսաւ.

— Ոհո՞յ, բացազանչեց, այդ նոր հագուստներով
հարսանիքէ՞ կը վերադառնաս:


Վրայ հասաւ նաեւ ամուսինը:

— Ուսկի՞ց առիւր այդ նոր հագուստները, սրտաց
խոպոտ ձայնով:

— Վարի գիւղէն բարի մարդ մը նուիրեց, պատաս-
խանեց պզտիկը թռչունի պէս դողդղալով:

— Ո՛չ, դուն անպայման տունէն քիչ քիչ դրամ
դողնալով վացեր հագուստ դներ ես: Էլիզ, դարձաւ
կնոջը, վաղն այս հագուստները վրայէն կ'առնես եւ
պարկի լաթով բաճկոն ու տարատ կը կարես եւ վրան
կը նետես:





Իր ճախին վրայ տեսաւ հայկական գմբէթով սիրուն եկեղեցի մը:

— Կը բաւէ, հայրիկ, յանկարծ հօրն առջեւ կանգնեցաւ Սիւզան, կը բաւէ, այս խեղճ տղան քու ձեռքերուդ մէջ նահատակ եղաւ: Երեք տարի ոչխարներդ սարը տարաւ, արածեց, տան ամէն ծառայութիւններն ըրաւ, աւելց, սրբեց եւ տունդ այնքան մաքուր չէր ինչպէս հիմա. դուն պէտք էիր հագուստ կապուստ տալ եւ ոչ թէ ուրիշներ ողորմէին եւ անոնց դուրը քեզի նախատինք ըլլար:

— Լռէ՛, պոռայ հայրը, հիմա մազերէդ բռնած՝ ոտքերուս տակ կ'առնեմ, գիտեմ թէ ինչ ունիս իրեն հետ: Էլիդ, վազն անպատճառ ըսածս կը կատարես, ես այդպէս մաքուր հագուստ չունիմ, իմ անարդ ծառա՞ս պիտի հագուի:

Սիւզան տան մէջի բոլոր սեղաններն ու թեկերն առաւ պահեց: Մայրը փնտռեց ամէն կողմ եւ շարաթն անցաւ եւ չկրցաւ պարկի լաթով հագուստ կարել:

— Սիւզան, ըսաւ Սեդոյ, եթէ ես օր մ'այս տունէն հեռանամ, շատ պիտի տխրի՞ս:

— Այո, շատ պիտի տխրիմ, բայց եթէ ես քու տեղը ըլլայի, արդէն շատոնց փախած կ'ըլլայի:

— Ես ալ կը խորհիմ, բայց դրամ չունիմ, մարդ չեմ ճանչնար, ո՞ւր երթամ: Երեք տարի ծառայեցի եւ մէկ սանթիմի երեսը չտեսայ: Վայ այն հարուստին որ աղքատ որբի մը հացը կ'ուտէ. երկինքէն քար կ'իջնայ իր գլխուն վրայ:

Սիւզան սարսուռ զգաց, կարծես իր երեւակայութեան մէջ կայծակ իջաւ իր հօրը գլխուն:

— Սեդոյ, ես տասը Փրանք ունիմ, անիկա քեզի կու տամ, հայրիկէս ալ քիչ մը դրամ կը շորթեմ ան ալ կու տամ:

— Ոչ, հայրիկէդ դրամ չեմ ուզեր, յանկարծ դիս նորէն դող կ'անուանէ եւ ես չեմ կրնար համբերել:

— Ոչ, քու արդար իրաւունքդ է. եթէ հազար Փրանք ալ տուած ըլլայինք՝ դեռ քիչ էր: Չե՞ս կարգացած Յակոբ նահապետին պատմութիւնը, երբ Լարան անունով մէկու մը քով տարիներ ծառայեց եւ Լարան անոր իրաւունքը կերաւ, Ատուած Յակոբն հարստացուց եւ Լարան աղքատ մնաց:

Կիրակի առաւօտ դեռ ոչխարները սարը չտարած, Սեդոյ կանչեց Սիւզանը.

— Եկուր տան ետեւ քեզի ականջէդ բան մը պիտի ըսեմ:

Տան ետեւ անցան, մինակ էին:

— Սիւզան, ես այսօր տունէն կը հեռանամ, չեմ դիտեր ուր, բայց դիս թերեւս ա'լ չտեսնես: Ծնորհակալ եմ բոլոր բարիքներուդ համար, քրոջական սիրոյդ համար: Եթէ այս տունը եւ դիւղը պիտի յիշեմ՝ լսկ քեզի համար է:

Աղջիկն այնքան յուզուեցաւ որ կարծես սրտին կէսը կը տանէին, տղուն վրոյն ինկաւ եւ ուժգին համբուրեց: Այդ պահուն, չեմ գիտեր ո'ր սատանան իր մայրը տան ետեւ բերաւ. նա տեսաւ համբոյրը, թեւերը կողերուն վրայ կանթեց եւ ջրագրգիռ պոռաւ.

— Լիրբե'ր, լիրբե'ր, այս երեկոյ ձեր դասը պիտի առնէք երբ ամուսինս տուն վերադառնայ: Դո՛ւ, փողոցի տղայ, ոչխարները սարն հանէ, իսկ դուն, ձեռքէս պիտի չազատիս, անամօթ աղջիկ: Կը կասկածէի եւ հիմա աչքերովս տեսայ. վա՛խ, քոռնայի ես:

Սակայն ոչ Սեդոյ եւ ոչ ալ Սիւզան յանցաւորի կերպարանք առին, իրենց համբոյրը անմեղ սրտի տենչ

էր, հոգեկան շնորհակալութիւն եւ ոչ թէ չարերու համբոյր:

Սեդոյ պոռաւէն շատ չէր վախնար, իր ետեւէն հասնելու համար նա պէտք էր քառասուն ոտք ունենալ: Բացաւ փարախին դուռը, ոչխարներն ու դառները մայրիկով դուրս ելան, նայեցաւ ամէն մէկ ոչխարի. դառները մայր ունէին, ոչխարները՝ սէր եւ ինքը մէկը չունէր, իր մայրն ուռենիի տակ թաղեց, Սաթիկն աղանիի պէս թեւերէն թռաւ, Կիւրինցիներուն բակն ու բնակիչներն երազի մէջ մնացին. քիչ վերջ Վահանը պիտի դար, թեւաւոր ձիով պիտի դար, հրեղէն ձիով պիտի դար. եթէ չգար. ո՛չ, պիտի դար, պիտի դար:

Ոչխարները լերան ճամբան գիտէին, անոնք արածելով կամաց կամաց վեր բարձրացան, Ֆիտոն անոնց առջեւէն լեռ կ'ելլէր: Սեդոյ սողալով վար սահեցաւ եւ դիւղ մտնող ճամբուն եզերքը մեծ քարի մը ետեւը պլպլեցաւ: Սպասեց, դրեթէ շունչ չէր առներ. քիչ վերջ սուրոց մը լսեց, աւելի կծկուեցաւ, բայց ետեւէն հայերէն լսեց.

— Ո՞ւր ես:

— Հոս եմ, պատասխանեց Սեդոյ եւ դուրս թռաւ: Ո՞ւր է ձին, հարցուց անձկութեամբ:

— Քիչ մը վարը, թուփերուն ետեւը կապեցի որ չտեսնեն մեր հեծնելն ու փախչիլը:

— Լաւ խորհեր ես, Վահան, երթանք, ես պատրաստ եմ, անոնք կը կարծեն թէ ես ոչխարներուն հետ սարը բարձրացեր եմ, արդէն տան տէրն ալ ուրիշ տեղ գնաց:

Վահան ձին մօտեցուց բարձր քարի մը, նախ ինքը նստաւ եւ յետոյ պզտիկը քամակին վրայ թռաւ, եւ երկու ձեռքերով պլլուեցաւ Վահանի մէջքին:

— Քեզ իմ բնակարանս պիտի չտանիմ Սեդոյ, այլ ուղղակի կայարան, մեր գիւղէն վար է. կէս ժամէն կը հասնինք. ամէն բան պատրաստեր եմ, թէ՛ դրամ եւ թէ՛ ուտելիք. քաջ եղիր: Փարիզ աշխարհիս չափ մեծ քաղաք է, երբ հոն հասնիս Հայոց եկեղեցի ըսէ եւ բարի մէկը քեզ հոն կ'առաջնորդէ:

Երբ կայարան հասան, Վահան հանեց զբազանէն հարիւր Փրանք եւ տղուն տուաւ.

— Վահան եղբայր, ես քսան Փրանք ունիմ, Սիւլանը տուաւ, ինձ կը բաւէ:

Հէզ տղան կը կարծէր թէ քսան Փրանքով կրնար Փարիզն ալ գնել:

— Քիչ է, Սեդոյ, ա՛ն հարիւր Փրանքն ալ. հիմա խելքէն աւելի դրամ պէտք է:

— Վահան եղբայր, ալ պիտի չտեսնուի՞նք իրար հետ:

— Քիչ ատենէն ես ալ Փարիզ պիտի գամ, հողէն ձանձրացեր եմ, եղներու պէս չեմ կրնար արօր քաշել, դուն երբեմն Հայոց եկեղեցին դնա՛ եւ հարցուր Վահան Գիսակեան պարտիզակցի:

Սեդոյ երրորդ կարգի օթեակի մը մէջ տեղ առաւ. զրկեց Վահանն ու սրտի բոլոր ուժովն համբուրեց:

— Ի՞նչպէս շնորհակալ ըլլամ, դուն իմ ազատարար հրեշտակս եղար:

— Ոչինչ, Սեդոյ, եթէ մենք իրարու չօգնենք՝ ուրիշներուն օտքի կոխան կ'ըլլանք:

Շողեկառքը սուլեց. Վահան վարէն պոռաց.

— Բարի ճանապարհ Սեդոյ, քաջութիւն. Փարիզ կը տեսնուինք:

Վաքիւրը նահանգէն մինչեւ Փարիզ գրեթէ մէկ օր դրաւ շողեկառքը: Շատ գեղեցիկ տեղեր տեսաւ, Ալ-

պեանները մօտեցան ու հեռացան. լիճեր տեսաւ, չքեղ պանդոկներ եւ աղուոր հագուստներով մարդիկ, բայց ինքը Փարիզը կը խորհէր. հոն Հայոց եկեղեցին կար, զինքը գրկաբաց պիտի ընդունէին, իր օտարութիւնն ու տառապանքները վերջ պիտի գտնէին: Լիոնի մօտէն անցաւ, եթէ գիտնար թէ Սաթիկ հոն էր...

Յաջորդ առաւօտեան հասաւ Փարիզ, շողեկառքը փչելով կանգ առաւ Կար տը Լիոն կոչուած կայարանին մէջ: Ճամբորդները վար թափեցան, բեռնակիրներ, պաշտօնեաներ, հետաքրքիրներ իրար խառնուած, անսովոր աղմուկ մը կը հանէին: Սեդոյ կայարանէն դուրս ելաւ, կանգ առաւ եւ տատամտտ իր չորս կողմը նայեցաւ: Ո՞ւր է Հայոց եկեղեցին: Հարցուց անցորդի մը:

— Չեմ գիտեր, նա չոր պատասխանեց, ոստիկանին հարցուր:

Ո՞վ էր ոստիկանը. տղան ի՞նչ գիտնար թէ սեւ տաբատով, ճերմակ բաճկոնով եւ գլխարկին վրայ ոսկեգօծ զինանշանով մարդիկ ոստիկան էին:

— Արդեօք կը ճանչնա՞ս ոստիկանը, հարցուց միամըտութեամբ, տարեց մէկու մը:

Մարդը պղտիկը վերէն վար չափեց, անշուշտ լեռնցի տղայ մ'է խորհեցաւ ինքնիրեն.

— Հոն այդ ճերմակ հագուած մարդն է:

Սեդոյ շնորհալի կերպով մօտեցաւ ճերմակ հագուած մարդուն եւ ըսաւ.

— Ո՞ւր է Հայոց եկեղեցին:

— Հայոց եկեղեցին, պատասխանեց ոստիկանը քիչ մը մտածկոտ:

Հանեց զբազանէն մաշած գիրք մը եւ մէջը չգտաւ Հայոց եկեղեցին անունը:

— Շարլ, կանչեց իր ընկերը, ո՞ւր է Հայոց եկեղեցին:

— Ժան Կուժոն փողոցին վրայ:

— Թիւ 22 հանրակառքը կ'առնես, բացատրեց տղուն եւ ժան Կուժոն փողոցը կ'իջնես, հոն է: Հոն այդ հանրակառքն է:

— Բայց ատիկա ուրիշին կառքն է, ես ի՞նչպէս մէջը նստիմ, ըսաւ Սեդոյ:

— Իսկապէս լեռնցի մ'է, անպատճառ սարերու հովիւ մը, աշխարհէն լուր չունի:

— Հետս եկուր: Բոնեց տղուն ձեռքէն եւ հանրակառք դրաւ, պատուիրեց վարիչին զինքը ժան Կուժոն փողոցն իջեցնել:

Պաշտօնեան տոմսակն երկարեց. Սեդոյ շնորհակալ եմ ըսաւ եւ դրպանը դրաւ թուղթի կտորը:

— Տաս սանթիմ տուր:

Տղան դրպանէն մէկ Ֆրանք հանեց եւ տոմսավաճառին երկարեց:

Թերեւս երեք քառորդ ժամ դրաւ հանրակառքը ժան Կուժոն փողոցն հասնելու համար: Սեդոյ զարմացած զխոեց սքանչելի պալատները:

— Ո՛ւր Հալէպը, ո՛ւր Փարիզն, ըսաւ ինքնիրեն, սա քաղաք չէ, արքայութիւն է:

— Իջիր, ժան Կուժոն սա քովի փողոցն է:

Տղան վար իջաւ եւ դարձաւ ասդին անդին. պատին վրայ դրուած էր ժան Կուժոն փողոց: Իր ձախին վրայ տեսայ հայկական դմբէթով շատ փոքրիկ, շատ սիրուն եկեղեցի մը:

— Աս մեր եկեղեցին է, մեր տունն է, մեր Հայաստանն է, ըսաւ ինքնիրեն եւ ուրախութեամբ քովի բակէն ներս մտաւ:

Պաշտօնատան առջեւ երկու պառուներ նստած էին, մէկը Կարինէն կը խօսէր, միւսը Խարբերդէն կը հասկընար:

— Սա մեր շողենաւի վրայի մանչուկը չէ՞, հարցուց մէկը միւսին:

— Այո, ճիշտ ինքն է:

Բայց Սեդոյ պառուներուն ուշ չդարձուց, ուղղակի պաշտօնատուն մտաւ: Երեք հողի մէկ մէկ սեղաններու առջեւ նստած, անուններ կը գրէին, ցանկեր կը շինէին:

— Ես հայ եմ, ըսաւ տղան զուարթ համարձակութեամբ: Ես հոս կ'ուզեմ մնալ, մեր տունը, մեր եկեղեցին շուքին տակ. ալ չեմ ուզեր այդ չար Ֆրանսացիին քով լեռներուն վրայ ոչխար արածել:

— Փորձանք մ'ալ ասիկա, ըսաւ պաշտօնեան, աղմբկալից սուրճ խմելով: Ամէն օր տասնեակներ կը հանին գաւառներէն, ո՞ր մէկուն տեղ տանք, հաց տանք: Ինչո՞ւ տեղը չմնացիր, ծոյլ, աշխատանքէն կը փախչիք եւ ուրիշին կռնակէն կ'ուզէք ապրել:

Տղան ետ ետ քաշուեցաւ, չփոթած գլուխը կախեց, կարծես երեսներէն ուրախութեան վարդերը թափեցան:

— Բայց ոչ, պարոն, կմկմաց, ես ձեր հացն ուտելու չեմ եկած, մեր ազգին տունն եկած եմ, մեր եկեղեցին. ինձ Հալէպէն ըսին թէ Ֆրանսայի մէջ գիրարդտնելու համար Փարիզի Հայոց եկեղեցին հաւաքուեցէք, հոն գիրար հարցուցէք: Արդեօք մէկը չեկա՞ւ զիս հարցնելու, Ամերիկայէն նամակ չեկա՞ւ: Ես Սեդոյ կը կոչուիմ, Հալէպի Կիւրիցիներու դաշտէն եկած եմ, հայրս Կիւրիցի էր: Զիս Բակին պզտիկն ալ կը կոչեն:

— Սեդոյ, Սեդոյ... կրկնեց պաշտօնեան եւ խոչոր

զիրք մը բացաւ եւ բաւական փնտռելէ յետոյ գտաւ անունը:

— Սեդոյ, Հալէպի Կիւրինցիներուն բակէն. թիւ 5750 նամակը եւ 7477 նամակը:

Բերին երկու նամակներ, մին Ամերիկայէն Երանուհի մայրիկը գրած էր. տարիէն աւելի անցեր էր, մէջը 100 տուար կար:

— Կը ճանչնա՞ս Երանուհի մայրիկը, հարցուցին տղուն:

— Այո՛, այո՛, մեր գաշտին մայրիկն է, տուէք, տուէք:

— Իսկ ո՞վ է այս Սաթիկը որ Լիոնէն կը գրէ:

— Լիոնէ՞ն, Աստուած իմ, լոյս իջաւ աչքերուս, իմ քոյրիկս է:


Սեդոյ գրեթէ լալով կարգաց երկու նամակներն ալ, Երանուհի հայերէն գրած էր, Սաթիկ Ֆրանսերէն: Աղջնակն իր հասցէն գրած էր եւ ազաչանք մը կար.

— Սիրելի Սեդոյ, երբ նամակս ձեռքդ հասնի, ուր որ ըլլաս, եկուր զիս գտիր. ես շատ հանգիստ եմ. համբոյրներ՝ Սաթիկ:


— Պարոն, կարելի՞ է այս հասցէն թուղթի մը վերայ գրել եւ պահել ձեր քովը. թերեւս շարաթէ մը Վահանը հասնի, Վահան Գիսակեան, Պարտիզակցի, իրեն տուէք որ դայ Լիոն եւ զիս գտնէ:

— Շատ լաւ, ըսաւ, պաշտօնական ծախքերուն համար 5 Փրանք պիտի վճարես:

Տղան բակէն դուրս թռաւ, պառաւները նստած դեռ կը խօսէին, մին Կարինէն, միւսը Խարրերդէն: Սեդոյ մտաւ եկեղեցին, երեք անգամ երեսը խաչակնքեց, նախեցաւ անոյշ Տիրամօր եւ Տիրամայրն իրեն նայեցաւ:



... շոգեմալը կամաց կամաց հեղինց ծովուն կուրծքը... միասին պողացին «Շնորհակալ եմք, Ֆրանսա»:



Հապա չե՞ս ըսեր մեր յախտեցական Արարատը:

— Հայերու սիրելի մայրիկ, դիս պաշտպանէ, ըսաւ եւ նոյն ճամբով մեկնեցաւ Լիոն:

— Հիմա գիտէր թէ ճերմակ բաճկոնով մարդիկ ոստիկան են, հարցուց Լամարքիմ պողոտայ թիւ 156:

— Շիտակ գնա՛, եւ առաջին ճամբան աջիդ դարձի՛ր, պատասխանեց ոստիկանը:

Սեզոյի սիրտը ուժգին կը տրոփէր, Սաթիկը պիտի տեսնէր, անշուշտ մեծցած եւ դեղեցկացած: Հնչեց տան զանգակը. աղջնակ մը դուռը բացաւ, սեւուլիկ աչքերով, նրբամարմին եւ մազերը հիւսկէն հիւսկէն ուսերէն վար կախուած:

— Սաթի՛կ...

— Սեզո՛յ...

Շրջմուլիկի պէս խենթ ուրախութեամբ բռնեց պատանիին ձեռքէն եւ ներս քաշեց:

— Մամի, պոռաց դէպի ներս, Սեզոն՝ եղբայրս եկաւ:

Տան տիկինը դուրս ելաւ եւ ժպտուն բարեւեց պղտորիկը: Առաջին անգամն էր որ Բակին պղտորիկը կնոջ մը ժպիտը կը տեսնէր այդ օտար երկրին մէջ:

— Սաթիկ, հոգ տար որ եղբայրդ հանգստանայ, անուշիկ մանչուկ մ'է, անշուշտ լաւ ընտանիքի մը դաւակը:

Աղջիկն ուրախութենէն չէր գիտեր թէ ինչ հրամայընէր, ինչ ըսէր, ո՛ւր դառնար: Սեզոյ պատմեց իր կեանքը, Սաթիկ արցունքով մտիկ ըրաւ: Կարգացին Երանուհի մայրիկին նամակը:

— Հարիւր տուր զրկեր է, երկուքիս համար, ըսաւ Սեզոյ, բայց ես չեմ գիտեր թէ ինչ դրամ է:

— Մամիկին կը հարցնենք, անիկա ամէն բան գիտէ:

Սեղոյ կարծես թէ տան զաւակն եղաւ: Տան տիրուհին մատամ ժերմէն կը կոչուէր, այլրէ էր, մէկ մանչ մ'ունէր զրեթէ Սեղոյի տարիքը, որ Փարիզ ուսանող էր: Կինը հարուստ էր եւ սրտով բարի. Սաթիկ ոչ թէ աղախին էր, այլ տան աղջիկը:

— Հոս կեցիր տղաս, որքան կ'ուզես քեզի հաց եւ ջուր չի պակտիր, ըսաւ Սեղոյին: Բակին պղտիկը պարսպ հաց ուտել չէր սիրեր, ամէն մաքրութիւն եւ դուրսի դնումներն ինքն սկսաւ ընել, նոյնիսկ անկողիններն ինքը կը շտկէր, կոկիկ, աղջիկի նման ճաշակաւոր:

— Սաթիկ, ըսաւ օր մը, իմ կերած հացս շատ է այս թեթեւ աշխատանքներուն համար, ես պէտք է դործ դանեմ եւ իմ ու քու կեանքդ վաստկիմ: Տիկին ժերմէն զինքն իր փաստարան եղբօր քով զբաւ, պաշտօնատունն աւելիւ համար:

— Բայց իմ տունս կու գաս կը պառկիս, ես սենեակ շատ ունիմ: Թող Սաթիկը մինակ չմնայ:

Պատանին շուտով գրաւեց փաստարանին վստահութիւնը. պարկեշտ ու պարտաճանաչ էր. բայց վիշտ մը կար անոր սրտին մէջ. ինչո՞ւ Վահանը չէր հասնիր: Երկու ամիս յետոյ Սաթիկ երիտասարդ մը առաջնորդեց փաստարանին զբասնեակը. Վահանն էր, Սեղոն փնտռելու եկած էր:

— Սաթիկ, ըսաւ աղջկան, սա իմ ազատարարս է, այդ չար Փրանսացիին ձեռքէն ինքը զիս փախցուց. եթէ Աստուած զինքը զրկած չըլլար, ես այդ սարերուն վրայ կը մեռնէի:

Տիկին ժերմէնի տան մէջ կէսօրը միասին ճաշեցին. տանտիրուհին սիրտն աւելի բացուեցաւ այդ պատանիներուն հանդէպ, անոնց ամէն մէկուն եղերական կեանքը եկեղեցիներու մէջ տօնուած մարտիրոսի մը կեանքին կը նմանցնէր: Վահան գրեթէ շարաթ մը Սեղոյին մօտ դիշերեց. նա շուտով գործ գտաւ, ալ ուշ էր բրժիշկ կամ ճարտարագետ ըլլալ, մտաւ սաւառնակի դործատան մը մէջ, լաւ արհեստ էր, կրնար ապագային մասնագէտ մեքենագործ ըլլալ: Սեղոյ փաստարանին մասնագէտ մեքենագործ ըլլալ: Սեղոյ փաստարանին մօտ մնաց, Սաթիկ տիկին ժերմէնի քով: Կիրակիները միշտ միասին էին, հայերէն կը խօսէին, մայրենի լեզուն չմոռնալու համար: Վահան քիչ մ'աւելի բան դիտէր Հայաստանէն, ստէպ կը խօսէր մեր երկրին, մեր պատմութեան, մեր եկեղեցիին մասին եւ երկու պատանիներն յափշտակուած մտիկ կ'ընէին:

— Սեղոյ, օր մ'ըսաւ Վահան, քու գործիդ չեմ հաւնիր, ծառան միշտ ծառայ կը մնայ, դուն պէտք է արհեստ մը սորվիս, եթէ կ'ուզես, խօսեցայ դործատան վարիչին հետ, քեզ իմ քովս առնեմ, ելեկտրական մասին մէջ կ'աշխատիս եւ լաւ ապագայ մը կը չինես. օր մը Հայաստանին ալ օգտակար կ'ըլլաս:

Սեղոյ համոզուեցաւ եւ մտաւ սաւառնակի դործատունը, եօթը տարի Վահանին հետ աշխատեցաւ եւ զարձաւ քաջ մասնագէտներ:

Երեքը փոքրիկ հայկական հասարակութիւն մը կազմած էին, հայերէն թերթ կը ստանային. ազգային տօները կը պահէին, հայկական հանդէսներուն կը մասնակցէին եւ պատրաստ էին իրենց բաժինը տալու մեր բարեսիրական հաստատութիւններուն:

Վահան շատ ուշ լսեց Սեղոյին թէ Սաթիկ իր հարազատ քոյրը չէր, այլ որբութեան քոյր եղբայր էին: Սաթիկ արդէն պատմած էր տիկին ժերմէնին թէ ինչպէս իր մեծ մայրիկը Հալէպի մէջ մեռած էր եւ Սեղոյ իր քովն առած ու քրոջ պէս խնամած էր:

— Ալ Թ՞նչ կը պահսի, միասին երջանիկ ըլլալու համար, ըսաւ Վահան Սեղոյին, դուն արդէն քսանըմէկ տարեկան եղար, Սաթիկ տասնութ տարեկան, լաւ հասակ ունի, եղնիկի պէս աճած աղջնակ է, միայն քահանային օրհնութիւնը եւ ձեր «այո»ն պէտք է:

— Արդէն մայրիկս ալ մեռած պահուն ըսաւ ծաղկեցէք միասին, պատասխանեց Սեղոյ:

— Ուրեմն մօրդ կտակը սուրբ է:

Տիկին Ժերմէնի տան մէջ կատարեցին պսակը. մտերիմ բայց ճոխ էր. ճարեցին հայ քահանայ մը, նա Ուրախ լեր Ս. Եկեղեցի երգեց, Վահան անոնց գլխուն վրայ Սաչը բռնեց եւ երկու սիրտեր ձեռք ձեռքի աշտ ըսին:

— Ներգաղթ, ներգաղթ... 1936 թուականն էր: Հայաստան վերջապէս իր դռները բացած էր պանդուխտ զաւակներուն համար: Վահան եւ Սեղոյ իրարու բերնէն խրեցին ուրախ լուրը:

— Ուրեմն Հայաստան, Հայաստան պէտք է մեկնինք, ըսաւ Սեղոյ. հոն Արարատի հովանիին տակ մեր նոր բոյնը շինենք:

— Այո՛, վայելենք մեր երկրին քաղցրութիւնը, պատասխանեց Վահան, խմենք Արաքսի քաղցր ջուրէն:

Սաթիկ անոնցմէ աւելի խանդավառ էր, արդէն սկսեր էր պատրաստութիւնները տեսնել: Տիկին Ժերմէն չէր գիտեր թէ անոնց սրտերուն մէջ ինչ կայծ ինկած էր, կը խորհէր թէ ամառնային արձակուրդի մը պիտի երթան: Վահան թուա Փարիզ եւ ներգաղթի դրասենեակին մէջ իր եւ Սեղոյի անունները արձանագրեց:

— Չեր արհե՞ստը, հարցուց պաշտօնեան:

— Ես սաւառնակի մղիչներու (մոթէօր) մասնագէտ, Սեղոն ելեկտրական մասին մասնագէտ:

— Հրաշալի է, պատրաստուեցէք ամիսէ մը կը մեկնիք:

Օրերն ու Ժամերն համբեցին:

— Սեղոյ, ըսաւ Սաթիկ, իսկոյն Երանուհի մայրիկին գրենք եւ իմաց տանք մեր մեկնումը:

Արդէն ամիսն երկու անգամ Ամերիկա նամակ կ'երթար եւ նամակ կու գար: Սեղոյ հայերէն գրել գիտէր, Սաթիկ Փրանսերէն գիտէր: Նամակը թուա:

— Երանուհի մայրիկ, ամիսէ մը Հայաստան կ'երթանք, միշտ կ'երթանք, հոն բոյն պիտի շինենք, դուն ալ եկուր. աղքատ բակին տեղ ծաղիկներով տուն եւ պարտէզ պիտի ունենանք, Արաքսի ջուրէն պիտի խրմենք:

Նամակին պատասխանը չուտով հասաւ.

— Երանի՛ ձեզի, բարի ճանապարհ, իմ տեղս համբուրեցէք հայրենի սուրբ հողը. ստէպ գրեցէք հայրենիքի վերելքին մասին:

Նամակին մէջ գրած էր 500 տոլար: Թէպէտ ոչ մէկը գրամի կարիք ունէր, բայց Երանուհի չէր կրնար մոռնալ բակին պղտիկը: Նա կը կարծէր թէ Սեղոն եւ Սաթիկը նոյնպէս փոքր էին, չէր կրնար երեւակայել թէ ինչպէս եղելինի հասակ առեր էին, մին գարնան վարդ, միւսը կանաչ արեւ:

Ներգաղթողները գետերու նմա թափեցան Մարսիլիայի ծովը: Վահան եւ Սեղոյի ընտանիքն ալ պատրաստ էին ճամբայ ելլելու: Տիկին Ժերմէն շատ տըխուր էր երկու աղաւնիներու թռիչքին համար, բայց նա զարգացած եւ սրտով կրն էր, կը զգար թէ արդար իրաւունք ունին: Հայրենիքն եթէ փշոտ ըլլայ, անպատ ըլլայ, միշտ սիրելի է. ո՞ր աղքատն իր խրճիթին կարօտ չի քաշեր: Ո՞ր պանդուխտը ախ չի քաշեր հօ-

րենական տան համար: Մենք հայերս գիտենք ինչ բան է կարօտը. Սեդոն եւ Սաթիկ դեռ աւելի գիտեն, տառապանքի աշխարհէն ոսկեղէն երազներու աշխարհը պիտի թռչէին:

Մարտիլիայի նաւահանգստին մէջ ուստական Փոպետա շողենաւը կայնած կը ծխէր, կարծես ծեր գիւղացի մ'ըլլար որ ծխամորճը բերանը, լայն թոքերով ծուխ կ'արտաշնչէր:

Սանդուղները կողերէն կախուած էին. կարմիր դըրօշակ մը կը ծածանէր, վրան մուրճ մանդաղ մը գըծուած էր:

— Ի՞նչ դըրօշակ է, հարցուց Սաթիկ Վահանին:

— Խորհրդային երկրին դըրօշակն է:

— Հայաստանի դըրօշակն ալ այդպէս է, հարցուց զարձեալ աղջիկը:

— Ոչ, քիչ մը տարբեր է. երբ մեր սահմանն հասնինք՝ կը տեսնենք, պատասխանեց Վահան:

Սեդոյեացի բռնները շատ ծանր չէին. ի՞նչ ունէին, ի՞նչ տանէին. որը ծնան, որը մեծցան եւ որը Հայաստան կ'երթային իրենց սիրտն համբուրող մայր մը զըտնելու համար:

Հետերնին կը տանէին իրենց արհեստին վերաբերեալ գործիքներ եւ քիչիկ մը տան առարկաներ: Ճամբորդներուն մէջ կային շատեր որ ամբողջ զործատուն մը կը փոխադրէին Հայաստան:

— Մեր քրտինքն է, թող մեր ազըը վայելէ, կ'ըսէին:

Սաթիկ քանի մը պուպրիկներ ալ զնեց, յիշեց թէ բակին մէջ իր միակ ընկերուհին մաշած եւ ողորմելի խամաճիկ մ'էր:

— Ասոնք ալ թող իմ նուէրներս ըլլան հայ փոքրիկներուն, ըսաւ. առաջին անգամ որ աղջնակի մը պիտի հանգրիւմ, պիտի դրկեմ եւ կուչտ կուչտ համբուրեմ:

Շողենաւը խապոտ սուլիչը քաշեց, մէկ, երկու, երեք անգամ եւ շարժեցաւ: Կամաց կամաց ճեղքեց ծովուն կուրծքը: Մէկ կողմ հսկայ քաղաքը տարածուած էր. բարձր բլուր մ'ունէր վրան սրածայր զանգակատունով եկեղեցի մը: Ֆրանսացիները ճամբայ չեն ելլեր առանց այդ ժամին նայելու եւ երեսնին խաչակրներու:

Փոպետան 1900 հայեր կը փոխադրեր դէպի Հայաստան, իրենք ալ գիտէին Պաշտպան Տիրամօր եկեղեցիին անունը եւ խաչակրներու սովորութիւնը: Նայեցան, ձեռքերով համբոյր զրկեցին:

— Ո՛հ, ըսաւ Վահան, մենք մեր փառաւոր էջմիածինը պիտի տեսնենք, մեր Հոփոփմէն:

— Հապա չես ըսեր մեր յաւիտենական Արարատը, պատասխանեց Սեդոյ:

Ծովը հանդարտ էր. վախ չունէին, բոլորն ալ օր մը կտրած էին այդ ծովը. իրենց տառապանքները, քուրջերը, ցաւն ու յոյսերն առած ինկած էին Փրանսական ափերը:

Մարտիլիա դեռ չէր կորսուած հեռուներուն մէջ: Յանկարծ ձայներ, մէկ, երկու, հարիւր եւ հազար ինը հարիւր միասին պոռացին.

— Ծնորհակալ ենք Ֆրանսա, դու մեզի տուն տըւիր, հաց տուիր, մեզի պաշտպան եղար:

Կէս ժամ անցած էր, մնացին ծով ու երկինք. ճամբորդներու աչքերուն մէջ երազներ բացուեցան, հորի-

զոնն երթալով կը խորանար: Անոնք իրենց բազուկները
դէպի հեռուն կարկառելով գոչեցին.

— Հայաստա՛ն, Հայաստա՛ն, երկիր դրախտա-
վայր:

Տպագրութիւնը ւարտեցաւ

15 Հոկտեմբեր 1973ին

Ս. Ղազարու տպարանին մէջ

Վ Ե Ե Կ Ի Կ